



Extractive Industries
Transparency Initiative

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ
ԹԱՓԱՆՅԻԿՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբերի 7, 2020թ.
Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	3
1. ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	3
2. ՀՀ ԱՃԹՆ-ի 2019թ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԹԻՐԱԽՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	8
2.1. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՃԹՆ-ի 2019թ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ	8
2.2. ԱՃԹՆ-ի 2019թ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ	48
3. ԱՃԹՆ-ի ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ	56
4. ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲՈՒՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ	61
5. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԵՐԸ	69
6. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ	90

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՃԹՆ - Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը

ԲՇԽ - Բազմաշահառու խումբ

ԻՍ - իրական սեփականատերերի

ՏԿԵՆ – Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՇՄ – Շրջակա միջավայրի նախարարություն

ԱՆ – Արդարադատության նախարարություն

ՊԵԿ – Պետական եկամուտների կոմիտե

ՎԱ – Վարչապետի աշխատակազմ

ՀԱՀ – Հայաստանի ամերիկյան համալսարան

1. ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների վերաբերյալ սույն հաշվետվությունը կազմվել է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ) համակարգող և վերահսկող բազմաշահառու խմբի (ԲՇԽ) 2019-2020թթ. աշխատանքային ծրագրի:

Ընդհանուր առմամբ, Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրմանն ուղղված ԲՇԽ-ի գործունեությունը 2019 թվականի ընթացքում շարունակաբար ուղղված է եղել ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացի ինստիտուցիոնալ հիմքերի մշակմանը, Ստանդարտի պահանջների իրականացմանը, ԱՃԹՆ-ի հանրային իրազեկմանը և շահառուների մասնակցությամբ «ԱՃԹՆ-ի համայնքի» ձևավորմանը, արդեն ձևավորված էլեկտրոնային հարթակների զարգացմանը, ԲՇԽ-ի անդամների, ինչպես նաև շահառուների ավելի լայն շրջանակի կարողությունների մեծացմանը, ԱՃԹՆ-ի գործընթացի անընդհատությունն ապահովող ֆինանսական միջոցների ապահովմանը, ինչպես նաև միջազգային գործընկերների հետ համագործակցությանը:

Նշված տարեկան գործունեության համառոտ նկարագիրը հետևյալն է.

Օրենսդրական նախաձեռնություններ

- *իրական սեփականատերերի (ԻՍ) բացահայտում*

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են իրավական նախաձեռնություններ և կատարվել են օրենսդրական բարեփոխումներ: Մասնավորապես, մշակվել է ընկերությունների ԻՍ բացահայտման իրավական հարցերը կարգավորող օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության նիստում և ընդունվել է Ազգային ժողովի կողմից:

ԻՍ աշխատանքային խումբը խորհրդատուի աջակցությամբ աշխատել է ենթաօրենսդրական ակտերի մշակման ուղղությամբ: ԱՃԹՆ-ի քարտուղարությունը ՀՀ արդարադատության նախարարության հետ ավարտին է հասցրել «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը, լրացման և ներկայացման կարգը սահմանելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի հրամանի վերջնական նախագծի տեսքը, իրականացվել են, ԻՍ վերաբերյալ հայտարարագրի մշակմանն ու ռեգիստրի ստեղծմանն ուղղված աշխատանքներ:

- ***ԱՃԹՆ-ի հաշվետվողականության ապահովում***

Մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N 666 որոշման մեջ փոփոխությունների և լրացումների կատարելու վերաբերյալ» կառավարության որոշումը:

Տեխնիկական առաջադրանքներ

Մշակվել է ԻՍ ռեգիստրի ծրագրային ապահովման տեխնիկական առաջադրանքը և անցկացվել է ռեգիստրի ստեղծման ծառայություններ մատուցող ընկերության ընտրության մրցույթը:

Մշակվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի երկրորդ զեկույցի, ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտման իրագործելիության ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքները, իրականացվել են զեկույցի և ուսումնասիրության կազմման աշխատանքների գնումների գործընթացները:

Մշակվել է ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի զարգացման տեխնիկական առաջադրանքը:

ԱՃԹՆ-ի զեկույց և ուսումնասիրություններ

Համաշխարհային բանկի՝ «Հայաստանի ԱՃԹՆ-ին աջակցության ծրագիր» դրամաշնորհային ծրագրի շրջանակում անցկացված մրցույթի արդյունքում 2019թ. դեկտեմբերի 17-ին պայմանագիր է կնքվել ԷԲՄՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ (EY) ընկերության հետ, որը սկսել է Հայաստանի ԱՃԹՆ-ի 2-րդ զեկույցի կազմման աշխատանքները:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն գլոբալ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակում

ընտրվել է ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտման իրագործելիության ուսումնասիրությունը կազմող խորհրդատուն, որը 2009թ. դեկտեմբերին ներկայացրել է ուսումնասիրության նախագիծը:

ԲՇԽ-ի նիստեր, աշխատանքային խմբի հանդիպումներ

Հաշվետու տարվա ընթացքում անցկացվել է ՀՀ ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի 3 նիստ, բոլոր նիստերին ապահովվել է քվորումը: Անցկացվել են ԲՇԽ-ի մի շարք աշխատանքային հանդիպումներ, ինչպես նաև ԻՍ և Պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խմբերի հանդիպումներ:

ԱՃԹՆ-ի կայքի կատարելագործում, տվյալների հասանելիության ապահովում

Կատարելագործվել է ԱՃԹՆ-ի հաշվետվություններին առցանց հարթակը՝ օգտագործողի համար այն ավելի հեշտ դարձնելու և առցանց հաշվետվությունները ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու առումով, մասնավորապես, e-reports համակարգում ստեղծվել են գծապատկերների ենթաէջեր¹, որոնք ինքնաշխատ կերպով ձևավորված տվյալների բազայի հիման վրա ստեղծում են գծապատկերներ:

Փոփոխությունների են ենթարկվել նաև առցանց հաշվետվությունների ձևերը, որոնցով մուտքագրվել են 2018թ. հաշվետվությունները: Ուկրաինայում կայացած ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի 42-րդ նիստի քննարկումների ժամանակ Հայաստանը ներկայացվել է որպես մեկը այն փոքրաթիվ երկրներից, որը ներդրել է հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային հարթակ:

Նախավավերացում և վավերացում

ԱՃԹՆ-ի միջազգային վավերացման գործընթացին Հայաստանի նախապատրաստվածության գնահատման աշխատանքների շրջանակում ԱՃԹՆ-ի քարտուղարությունը համագործակցել է Գերմանիայի ԱՃԹՆ-ի քարտուղարության հետ, ԲՇԽ-ի անդամների համար կազմակերպվել է նախավավերացման ինքնագնահատման աշխատաժողով-քննարկում:

ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության վավերացնողների խմբին են տրամադրվել պահանջված տեղեկատվությունը, կազմակերպվել է վավերացնողների այցը Հայաստան:

2019թ. նոյեմբերի 4-8-ը ապահովվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին միջազգային վավերացման շրջանակում ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչների

¹ <https://reports.eiti.am/hy/graphics>

Հայաստան կատարած այցով նախատեսված հանդիպումների անցկացումն ու վավերացման գործընթացի համար անհրաժեշտ աշխատանքների իրականացումը:

Հանրային իրազեկում, կարողությունների զարգացում

2019թ. միջոցառումների շրջանակում իրականացվել են աշխատանքներ՝ ԱՃԹՆ-ի, ինչպես նաև Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի բովանդակությունը հանրության լայն շերտերին փոխանցելու ուղղությամբ: Մասնավորապես, 2019թ. հունվարի 30-ն կայացել է Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի ներկայացման համաժողովը, ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցը 2019թ. փետրվարին 19-ին ներկայացվել է Երևանի պետական համալսարանի ուսանողության և դասախոսներ համար կազմակերպված ԱՃԹՆ-ի և առաջին ազգային զեկույցի ներկայացումը: Այնուհետ, ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցը ներկայացվել է Գեղարքունիքի, Լոռու և Սյունիքի մարզերում կայացած հանդիպում-քննարկումների ժամանակ: Բացի դրանից, հանրային ավելի լայն իրազեկման համար պատրաստվել են թեմատիկ 5 տեսահոլովակներ: Այդ տեսանյութերը տեղադրվել ու տարածվել են սոցիալական ցանցերի միջոցով, հեռարձակվել են առաջնային սպառող հանդիսացող Լոռիի ու Սյունիքի մարզային հեռուստաալիքներով: Բացի դրանից, Ֆեյսբուք սոցիալական ցանցում իրականացվել է ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի գովազդային արշավը: ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից կազմակերպվող ծրագրային միջոցառումների մասնակիցների համար պատրաստվել են տպագրական նյութեր: Հայաստանի ԱՃԹՆ-ն և ԱՃԹՆ-ի առցանց հաշվետվությունների հարթակը միջազգային հանրությանն է ներկայացվել մի շարք միջազգային միջոցառումների ընթացքում: Բացի դրանցից, իրականացվել են նաև փաստաթղթերի մեծածավալ թարգմանչական աշխատանքներ:

«Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից կազմակերպվել և համակարգվել են մի շարք հանրային իրազեկման աշխատանքներ:

Պատասխանատու հանքարդյունաբերություն

Հաշվետու ժամանակահատվածում Պատասխանատու հանքարդյունաբերության խնդիրները զբաղվող աշխատանքային խումբը անցկացրել է մի շարք հանդիպումներ, որոնց արդյունքում մշակվել և ԲՇԽ-ի կողմից հաստատվել է «Հայաստանյան ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթուղթը: Իրականացվել են նաև Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրման ճանապարհային քարտեզով պլանավորված աշխատանքները:

Միջազգային համագործակցություն

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է ԱՃԹՆ-ի ներդրմանն ուղղված միջազգային համագործակցությունը: Մասնավորապես, Հայաստանի ԱՃԹՆ-ի պատվիրակությունները մասնակցել են ԱՃԹՆ-ի խոչըրդի նիստերին, համաժողովների, միջազգային թեմատիկ քննարկումների, ուսուցողական այցերի: Հանդիպումների ժամանակ ձեռք են բերվել միջազգային համագործակցության պայմանավորվածություններ:

Հայաստանի ԱՃԹՆ-ի պատվիրակությունը հունիսի 17-19-ը Փարիզում մասնակցել է ԱՃԹՆ-ի 2019թ. համաշխարհային համաժողովին, որի ժամանակ Հայաստանն արժանացել է ԱՃԹՆ-ի նախագահության մրցանակին:

Հայաստանի Հանրապետության և OpenOwnership կազմակերպության միջև համագործակցության շրջանակում Հայաստան են ացելել ԻՄ բացահայտման համաշխարհային ռեգիստր հանդիսացող OpenOwnership-ի բրիտանական փորձագետներ, որոնք տեխնիկական աջակցություն են տրամադրել հայտարարագիր ներկայացնող ընկերություններին՝ տվյալները օգտագործողների համար առավելագույնս հասկանալի ու մատչելի դարձնելու վերաբերյալ:

Ամբողջ տարվա ընթացքում աշխատանքային հանդիպումներ և քննարկումներ են տեղի ունեցել Համաշխարհային բանկի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ներկայացուցիչների հետ՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019-2020թթ. աշխատանքային ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման շուրջ: Այդ քննարկումների և բանակցությունների արդյունքում հաջողվել է նաև երկարաձգել Համաշխարհային բանկի՝ «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցության ծրագիր» դրամաշնորհային ծրագրի վերջնաժամկետը մինչև 2021 թվականի հունվարի 31-ը՝ նախկին 2020 թվականի ապրիլի 30-ի փոխարեն:

Հաջողությամբ իրականացվել են Համաշխարհային բանկի՝ «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցության ծրագիր» դրամաշնորհային ծրագրի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն գլոբալ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակներում հաշվետու տարվա համար պլանավորված միջոցառումները:

2. ՀՀ ԱՃԹՆ-ի 2019թ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԹԻՐԱԽՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՃԹՆ-Ի 2019թ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ՆՊԱՏԱԿԸ	Մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովում		
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 1. ՀՀ ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի զարգացում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքները՝ ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի կատարելագործված տարբերակ՝ տվյալները բաց տվյալների սկզբունքով, օգտագործողի համար մատչելի եղանակով հասանելի դարձնելու համար գործիքների ապահովմամբ Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Ընթացիկ 2019թ. իրականացվել են e-reports համակարգում գործիքների ու ձևավորված տվյալների բազայի հիման վրա գծապատկերների, ֆիլտրերի ստեղծման, ԱՃԹՆ-ի առցանց հաշվետվությունների օրենսդրությանը համապատասխանեցնելու աշխատանքները:	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 2. ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի զարգացման աշխատանքների տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքը՝ տեխնիկական առաջադրանք Վերջնաժամկետը՝ առաջին եռամսյակ, 2019թ.	Իրականացվել է	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 3. ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի զարգացում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքները՝ պայմանագիր կազմակերպության հետ, տվյալների բազաներ, տվյալների բազաների վերլուծության գործիքներ, առցանց հաշվետվությունների ներկայացման հարթակի կատարելագործում՝ այն օգտագործողի համար ավելի մատչելի դարձնելու նպատակով Վերջնաժամկետը՝ երկրորդ եռամսյակ, 2019թ.	Իրականացվել է Տես՝ միջոցառում 1	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 4. Կայքի ընթացիկ սպասարկում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները

	Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Ընթացիկ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 5. ԱՃԹՆ-ի կայքի համալրում արդիական տեղեկատվությամբ	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքները՝ կայքում հրապարակված զեկույցներ, հաշվետվություններ, տեսագրությունների, իրավական ակտեր, նորություններ Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Ընթացիկ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 6. Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքները՝ տեղեկատվական թերթիկներ, ինֆոգրամներ, ԱՃԹՆ-ի եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ԱՃԹՆ-ի զեկույց, զեկույցի սեղմագիր, տեղեկատվական տեսահոլովակներ Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 7. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով (YouTube, Twitter, facebook և այլ ցանցեր)	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքը՝ սոցիալական ցանցերում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հրապարակված տեղեկատվություն Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 8. Իրազեկվածության բարձրացման միջոցառումների, շահագրգիռ կողմերի հետ աշխատանքային հանդիպումների իրականացում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքները՝ հանդիպումներ (այդ թվում՝ մարզային), հանդիպումներ կրթական հաստատությունների հետ, հանդիպումներ լայն խմբակցությունների հետ Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 9. ԱՃԹՆ-ի 1-ին զեկույցի պաշտոնական ներկայացում / կոնֆերանս, ԱՃԹՆ-ի կայքի, առանց հաշվետվությունների համակարգի և տվյալների բազայի ներկայացում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքը՝ ԱՃԹՆ-ի կոնֆերանս Վերջնաժամկետը՝ հունվար, 2019թ.	Իրականացվել է	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 11. «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվական /ճանաչողական նյութերի ստեղծում և տարածում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքները՝ ԱՃԹՆ-ի և հանքարդյունաբերության վերաբերյալ կրթական տեսանյութեր Վերջնաժամկետը՝ Երկրորդ եռամսյակ, 2019թ.	Իրականացվել է մասամբ / ընթացիկ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 12. «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացում/ քննարկումներ, մասնավորապես՝ ազդակիր համայնքներում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացվել է մասամբ / ընթացիկ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն
	Արդյունքները՝ ԱՃԹՆ-ի վերաբերյալ մոդուլներ ԲՇԽ-ի, ՔՀԿ-ների, ՔԵԿ-ների, տեղական խմբերի և ակտիվիստների համար և դասընթացներ թիրախային խմբերի համար (ԲՇԽ, ՔՀԿ-ներ, տեղական խմբեր և ակտիվիստներ) Վերջնաժամկետը՝ Երկրորդ եռամսյակ, 2019թ.		

ՆՊԱՏԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջոցառում 1. ՀՀ ԱՃԹՆ պաշտոնական կայքի զարգացում ,

*Միջոցառում 2. ԱՃԹՆ-ի հրապարակման հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի զարգացման
աշխատանքների տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում*

Միջոցառում 3. ԱՃԹՆ-ի հրապարակման հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի զարգացում

Միջոցառում 4. Կայքի ընթացիկ սպասարկում

Միջոցառում 5. ԱՃԹՆ-ի կայքի համալրում արդիական տեղեկատվությամբ

Հաշվետու ժամանակահատվածից, հաշվի առնելով «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից ԱՃԹՆ-ի կայքի ստեղծման և շահագործման փաստը, ինչպես նաև www.eiti.am կայքի և reports.eiti.am հաշվետվությունների առցանց հարթակի զարգացման աշխատանքների շարունակականության ապահովման անհրաժեշտությունը, ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից կազմվել և Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի հետ համաձայնեցվել է «Վերլուծության էլեկտրոնային գործիքների զարգացման (ծրագրային ապահովման մշակման) ծառայության» տեխնիկական առաջադրանքը, որը հաստատվել է ԲՇԽ-ի կողմից: Մշակված տեխնիկական առաջադրանքի հիման վրա «մեկ անձից գնման» ընթացակարգով «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ ընկերությունից ձեռք է բերվել նշված ծառայությունը և կնքվել համապատասխան պայմանագիր վերջինիս հետ: ՀՀ ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի զարգացման աշխատանքները ընթացել են ԱՃԹՆ-ի քարտուղարության հետ սերտ համագործակցության պայմաններում:

Կայքի տեխնիկական և բավանդակային զարգացման համար իրականացված աշխատանքների համառոտ բնութագիրը շարադրվում է ստորև.

- Առցանց հաշվետվության համակարգում իրականացվել են տվյալների ներկայացման գրաֆիկական էջերի նախագծման, ծրագրավորման և ներդրման աշխատանքներ: Աշխատանքների արդյունքում, առցանց

հաշվետվությունների հարթակի «Գծապատկերներ» ենթաբաժնում² ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունների միջոցով ձևավորված տվյալներով ինքնաշխատ կարգով ստեղծվում են գծապատկերներ՝ օգտագործողին ավելի ընկալելի տարբերակով ներկայացնելով ԱՃԹՆ-ի տվյալները: Օգտագործողները կարող են իրականացնել իրենց վերլուծությունը և տարբեր ֆիլտրների (օրինակ՝ ըստ հաշվետվություն ներկայացրած ընկերությունների, ըստ հաշվետու ժամանակաշրջանների, ըստ տվյալների դաշտերի) միջոցով ստանալ գրաֆիկական արդյունքներ՝ ապահովելով տվյալները պատկերի և csv ձևաչափով ներբեռնելու հնարավորությունը:

- ԱՃԹՆ-ի կայքի համապատասխան ենթաէջում ստեղծվել է հաշվետվությունների տվյալների համադրման աղյուսակ²,
- Կայքը կատարելագործվել է՝ ապահովելու համար e-reports համակարգում հաշվետու ընկերությունների և պետական մարմինների կողմից հրապարակային հաշվետվություններով ներկայացվող տեղեկատվությունը «բաց տվյալների» ձևաչափով դիտելու և հետագայում օգտագործելու հնարավորությունը:
- Կայքում ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվություններով ներկայացվող տեղեկատվության հիմնական մասի համար (արտադրություն ու արտահանում, զբաղվածություն, կազմակերպությունների կողմից պետական և համայնքային բյուջեներ վճարված հարկեր և այլն) ներդրվել են նաև ֆիլտրեր, որոնց կիրառմամբ օգտատերը կարող է արտահանել իրեն առավել հետաքրքրող տեղեկատվությունը:
- Հաշվետու ընկերությունների և պետական մարմինների կողմից տրամադրվող առցանց հաշվետվությունների ձևերում կատարվել են փոփոխություններ՝ դրանք համապատասխանեցնելով ՀՀ կառավարության 2019 թվականի հուլիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 666-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 871-Ն որոշմամբ լրամշակված ձևաչափերին³:
- Ապահովվել է առցանց հաշվետվությունների հարթակի միջոցով օգտատերերի գրանցման և հրապարակային հաշվետվությունների ներկայացման հնարավորությունը:

Բացի վերը նշվածը, «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի հետ կնքվել է նաև համաձայնագիր, որի շրջանակներում ընկերությունը պարտավորվել է Պայմանագրի ավարտից՝ 2019 թվականի դեկտեմբերի 10-ից հետո մեկ տարվա ընթացքում անվճար մատուցել հետևյալ ծառայությունները՝

1. Պատվիրատուի կողմից տեղեկացվելուց հետո առնվազն 3 օրվա ընթացքում վերացնել Համակարգի կամ դրանում ներառված ծրագրերի խափանման հետևանքով առաջացած թերությունները ,
2. Տրամադրել խորհրդատվություն՝ համակարգում տվյալների մուտքագրման ժամանակ խնդիրների առաջացման դեպքում:

Հաշվետու տարվա ընթացքում.

- համալրվել է կայքի բոլոր բաժինների բովանդակությունը, տեղադրվել են ԱՃԹՆ-ի բաց գործելառճի կանոններով հանրության համար հասանելի փաստաթղթերը և համապատասխան տեղեկություններն ու նորությունները,
- տեղադրվել են ԱՃԹՆ-ի հայաստանյան պատմության, կարևորության և ընդհանուր գործընթացի, ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի համաժողովի ամփոփ ներկայացման, զեկույցի ֆինանսական և կոնստեքստուալ տվյալների, իրական սեփականատերերի և հայտարարագրում ներկայացվող տվյալների վերաբերյալ «Ալտեռա» ՍՊԸ-ի պատրաստած տեսանյութերը,
- առանձին բաժնում հրապարակվել է ՀՀ ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցը, ինչպես նաև կայքի

² <https://reports.eiti.am/hy/combinations/>

³ <https://www.eiti.am/hy/%D5%80%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B1%D6%87%D5%A1%D5%B9%D5%A1%D6%83%D5%A5%D6%80>

տեղեկատվությունը թարգմանվել է անգլերեն:

Միջոցառում 6. Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում

ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքում հրապարակվել են հաշվետու ժամանակահատվածում իրականացված միջոցառումների վերաբերյալ 28 նորություն⁴, ապրիլի 16-ին, սեպտեմբերի 5-ին և նոյեմբերի 7-ին կայացած ԲՇԽ-ի նիստերի արձանագրությունները⁵, ԱՃԹՆ-ի 2018 թվականի տարեկան հաշվետվությունը⁶, «Հայաստանյան ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթուղթը⁷, «ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության ձևավորման, անդամների և այլընտրանքային անդամների թեկնածուների առաջադրման, ընտրության և լիազորությունների դադարեցման կարգը⁸», ԲՇԽ-ի վերանայված աշխատակարգը⁹ և դրանց անգլերեն թարգմանությունները, ինչպես նաև ԲՇԽ-ի կողմից հաստատված ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների եռամսյակային հաշվետվությունները¹⁰:

Իրականացվել են հանրային իրազեկման միջոցառումներ: ԱՃԹՆ-ի ներդրման վերաբերյալ սոցիալական հոլովակների պատրաստման համար ընտրվել է «Ալտեռա» ՄՊԸ-ն, որը պատրաստել է ԱՃԹՆ-ի հայաստանյան պատմության, կարևորության և ընդհանուր գործընթացի, ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի համաժողովի ամփոփ ներկայացման վերաբերյալ տեսաֆիլմեր, ինչպես նաև զեկույցի ֆինանսական և կոնստեքստուալ տվյալների վերաբերյալ ինֆոգրաֆիկ տեսահոլովակներ, դրանք տեղադրել է ու տարածել սոցիալական ցանցերի միջոցով (facebook, YouTube, Twitter), հեռարձակել է Լոռիի ու Սյունիքի մարզային ավիքներով և իրականացրել է ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի գովազդային արշավ ֆեյսբուք սոցիալական ցանցում: «Ալտեռա» ՄՊԸ-ի կողմից պատրաստվել և դեկտեմբերի 2-ին

⁴ <https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80>

⁵ <https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents>

⁶ <https://www.eiti.am/hy/%D4%B5%D5%BC%D5%A1%D5%B4%D5%BD%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80>

⁷ <https://www.eiti.am/hy/%D5%A1%D5%B5%D5%AC>

⁸ <https://www.eiti.am/hy/%D4%B2%D5%87%D4%BD-%D5%AB-%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A1%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A8%D5%B6%D5%A9%D5%A1%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A5%D6%80%D5%A8>

⁹ <https://www.eiti.am/hy/%D4%B2%D5%87%D4%BD-%D5%AB-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3>

¹⁰ <https://www.eiti.am/hy/%D4%B5%D5%BC%D5%A1%D5%B4%D5%BD%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80>

հանրությանն է ներկայացվել նաև իրական սեփականատերերի և հայտարարագրում ներկայացվող տվյալների վերաբերյալ տեղեկատվական տեսահոլովակ, որը նույնպես տեղադրվել է ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքում¹¹ և տարածվել սոցիալական ցանցերի միջոցով (facebook, YouTube, Twitter):

Տեղեկատվական նյութերի տպագրության համար ընտրվել է «Պրինտ Պարտներ» ՍՊԸ-ն, որը ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից կազմակերպվող Ծրագրային միջոցառումների (ԱՃԹՆ-ի առաջին զեկույցին նվիրված համաժողով, մարզային այցելություններ, կարողությունների զարգացման աշխատաժողովներ) մասնակիցների համար իրականացրել է տպագրական նյութերի և իրերի պատրաստում (նոթատետր, գրիչ, թղթապանական, անվանաքարտ, շնորհակալագիր, գիքույկ, կրծքանշան, պալյուսակ):

Մայիսի 7-ին Լոռու մարզի Վանաձոր քաղաքում ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցի ներկայացմանը նվիրված մարզային հանդիպում-քննարկման վերաբերյալ նորություն է հրապարկվել Վանաձոր համայնքապետարանի պաշտոնական կայքում¹², իսկ Սյունիքի մարզի Կապան քաղաքում մայիսի 23-ին կայացած հանդիպում-քննարկման մասին տեսանյութ է հեռարձակվել մարզային Զանգեզուր TV-ով¹³:

ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցի ներկայացմանը նվիրված Գեղարքունիքի, Լոռու և Սյունիքի մարզային հանդիպում-քննարկումների վերաբերյալ նորությունները հրապարկվել են ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքում¹⁴ ¹⁵ և ՀՀ ԱՃԹՆ-ի ֆեյսբուքյան էջում:

Տպագրվել են մետաղական հանքարդյունաբերության ոլորտում տվյալների համակարգային բացահայտման և ԻՄ բացահայտման վերաբերյալ իրազեկման թերթիկներ (բուկլետներ), որոնք տարածվել են նաև հունիսի 17-19 Փարիզում կայացած ԱՃԹՆ-ի 2019թ. համաշխարհային համաժողովի ընթացքում երկրների նորարարական էքսպոյի ժամանակ:

Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից մշակվել է տեղեկագիր՝ հունիսի 17-19 Փարիզում կայացած ԱՃԹՆ-ի 2019թ. համաշխարհային համաժողովի վերաբերյալ և էլեկտրոնային եղանակով տարածվել է շահագրգիռ կողմերի միջև:¹⁶

¹¹ <https://www.eiti.am/hy/%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%BF%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%B8%D5%AC%D5%B8%D5%BE%D5%A1%D5%AF%D5%B6%D5%A5%D6%80%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%B8%D5%AC%D5%B8%D5%BE%D5%A1%D5%AF%D5%B6%D5%A5%D6%80>

¹² http://vanadzor.am/%d5%b0%d5%b0-%d5%a1%d6%80%d5%a4%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%a1%d5%b0%d5%a1%d5%b6%d5%b8%d5%b2-%d5%b3%d5%b5%d5%b8%d6%82%d5%b2%d5%a5%d6%80%d5%a1-%d5%b6%d5%b8%d5%b2-%d5%a9%d5%a1%d6%83%d5%a1%d5%b6%d6%81%d5%a1%d5%af%d5%b8/?fbclid=IwAR2LN-fLTNA2qdsGmuGFrIXIZRmQZP-splLaCfWHa8_NR3dfSTKftIHRpE

¹³ https://www.youtube.com/watch?v=uZpdvY-TrpA&feature=youtu.be&fbclid=IwAR1GJ7dorFugpr0GK0z0wq9yO7kzDWw-9yO92_zrovpH1scRQnrlU4HKW2w

¹⁴ <https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2019/05/07/%D5%B0%D5%A1%D5%B6%D5%A4%D5%AB%D5%BA%D5%B8%D6%82%D5%B4-%D6%84%D5%B6%D5%B6%D5%A1%D6%80%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80/68/>

¹⁵ <https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2019/05/24/%D4%B1%D6%80%D5%A4%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B8%D5%B2%20%D5%B3%D5%B5%D5%B8%D6%82%D5%B2%D5%A5%D6%80%D5%AB%20%D5%A9%D5%A1%D6%83%D5%A1%D5%B6%D6%81%D5%AB%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%B1%D5%A5%D5%BC%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%AB%D6%80%D5%A1%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B4%D5%A1%D5%B6%20%D5%B4%D5%AB%D5%BB%D5%B8%D6%81%D5%A1%D5%BC%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80%20%D5%AB%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D6%81%D5%BE%D5%A5%D6%81%D5%AB%D5%B6%20%D5%8D%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D6%84%D5%AB%20%D5%B4%D5%A1%D6%80%D5%A6%D5%B8%D6%82%D5%B4/62/>

¹⁶ https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/News%20and%20Media/EITI_Armenia_newsletter_June_2019.pdf

Հրապարակվել են ԱՃԹՆ-ի հաշվետվողականությունը ապահովող բոլոր իրավական ակտերը և նախագծերը, հրապարակային հաշվետվությունների xls ձևաչափերը:

Միջոցառում 7. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով (YouTube, Twitter, Facebook և այլ ցանցեր)

Շարունակաբար թարմացվել են Facebook¹⁷ YouTube¹⁸ և Twitter¹⁹ ցանցերում Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը, որոնցում հրապարակվել է ԱՃԹՆ-ի ներդրման և ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն՝ ապահովելով դրա հասանելիությունը լայն հանրության համար:

Միջոցառում 8. Իրազեկության բարձրացման միջոցառումների, շահագրգիռ կողմերի հետ աշխատանքային հանդիպումների իրականացում

Հաշվետու տարվա հունվարի 30-ին տեղի է ունեցել ՀՀ ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցի հրապարակմանը և ներկայացմանը նվիրված համաժողովը:

Փետրվարի 19-ին Երևանի պետական համալսարանում ԵՊՀ երկրաբանության և աշխարհագրության, էկոլոգիայի և բնության պահպանության, տնտեսագիտության, հանրային կառավարման և քաղաքագիտության, ժուռնալիստիկայի մասնագիտացում ունեցող ուսանողների և համապատասխան ֆակուլտետների դասախոսների հետ տեղի է ունեցել հանդիպում-քննարկում Հայաստանի ԱՃԹՆ-ի շուրջ, որի ընթացքում ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար Լիլիա Շուշանյանը, ԱՃԹՆ-ի փորձագետներ Լուսինե Թովմասյանը և Անահիտ Առուստամյանը, ԱՃԹՆ ԲՇԽ-ի հանքարդյունահանող խմբակցության անդամ, «Գեոմայնինգ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Վահե Վարդանյանը և ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության անդամ, ԵՊՀ օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ Հարություն Մովսիսյանը ԵՊՀ ուսանողությանը և դասախոսական անձնակազմին են ներկայացրել նախաձեռնությունը, Հայաստանում ԱՃԹՆ-ի գործընթացը: Ներկայացվել է ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցը և զեկույցում ամփոփված տեղեկատվությունը հանքարդյունահանող ընկերությունների եկամուտների, դրանց կողմից կառավարությանը կատարած վճարումների, ինչպես նաև պետության ստացած եկամուտների և այդ հոսքերի կառավարման, մետաղական հանքարդյունաբերության ոլորտում օգտակար հանածոների պաշարների, արտադրության, ներքին իրացման և արտահանման վերաբերյալ, ինչպես նաև ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքում առանձին առցանց հաշվետվության համակարգի միջոցով հասանելի տվյալներն ու համակարգից օգտվելու ձևը: Հարց ու պատասխանի ձևաչափով քննարկվել են նաև ոլորտային այլ հարցեր:

ՀՀ ԱՃԹՆ-ի իրազեկման միջոցառումների շրջանակում մայիսի 6-ին Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում և մայիսի 7-ին Լոռու մարզի Վանաձոր քաղաքում²⁰, իսկ մայիսի 23-ին և 24-ին Սյունիքի մարզի Կապան և Ագարակ քաղաքներում²¹ կայացան ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցի ներկայացմանը նվիրված հանդիպում-քննարկումներ:²²

¹⁷ <https://www.facebook.com/EITIArmenia/>

¹⁸ https://www.youtube.com/channel/UCx_9yOLmQCj_rwy2wYgRh6A

¹⁹ https://twitter.com/EITI_Armenia

Գեղարքունիքի և Լոռու մարզերի մարզային հանդիպումներին մասնակցել են ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը, փորձագետ Անահիտ Առուստամյանը, ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի ՀՀ կառավարության ներկայացուցիչ Տարաճքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանը, ԱՃԹՆ ԲՇԽ-ի հանքարդյունահանող ընկերությունների խմբակցության անդամներ Արմեն Ստեփանյանը և Արամ Օսիկյանը (այլընտրանքային անդամ), քաղաքացիական հասարակության խմբակցության անդամ Ինգա Զարաֆյանը և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ներկայացուցիչ Գոռ Խաչատրյանը:

Սյունիքի մարզի մարզային հանդիպում-քննարկումներին մասնակցել են ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը, քարտուղարության փորձագետ Անահիտ Առուստամյանը, ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի ՀՀ կառավարության ներկայացուցիչ Տարաճքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանը, ԲՇԽ հանքարդյունահանող ընկերությունների խմբակցության անդամներ Արթուր Նիկողոսյանը և Վահե Վարդանյանը, ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության անդամներ Հարություն Մովսիսյանը, Արթուր Համբարձումյանը: Հանդիպումներին մասնակցել է նաև Համաշխարհային բանկի ներկայացուցիչ Նարինե Թադևոսյանը:

Հանդիպումների ընթացքում ՀՀ վարչապետի աշխատակազմի ԱՃԹՆ-ի քարտուղարության և ԱՃԹՆ ԲՇԽ-ի ՀՀ կառավարությունը, արդյունահանող կազմակերպությունները և քաղաքացիական հասարակությունը ներկայացնող անդամները մարզպետարանների և համայնքապետարանների, քաղաքացիական հասարակության և հանքարդյունահանող ընկերությունների ներկայացուցիչներին ներկայացրեցին նախաձեռնությունը, 2019 թվականին հրապարակված ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցը, խոսեցին զեկույցով հասանելի դարձած տվյալների մասին, մասնավորապես՝ ընդերքօգտագործման թույլտվությունների, մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների պայմանագրերի, մետաղական հանքարդյունաբերության ոլորտից համայնքի ստացած եկամուտների, ընկերությունների՝ համայնքի առջև սոցիալական պարտավորությունների մասին:

Հանդիպումներին ներկայացվել են նաև ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի՝ www.eiti.am և առցանց հաշվետվությունների հարթակի՝ reports.eiti.am միջոցով հասանելի դարձած տվյալները, ԻՄ բացահայտմանն ուղղված ընթացիկ աշխատանքները, ինչպես նաև քննարկվել ոլորտային այլ հարցեր:

ԱՃԹՆ-ի իրազեկման միջոցառումները կրում են շարունակական բնույթ և նպատակն ավելի թափանցիկ և

²⁰ <https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2019/05/07/%D5%B0%D5%A1%D5%B6%D5%A4%D5%AB%D5%BA%D5%B8%D6%82%D5%B4-%D6%84%D5%B6%D5%B6%D5%A1%D6%80%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80/68/>

²¹ <https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2019/05/24/%D4%B1%D6%80%D5%A4%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B8%D5%B2%20%D5%B3%D5%B5%D5%B8%D6%82%D5%B2%D5%A5%D6%80%D5%AB%20%D5%A9%D5%A1%D6%83%D5%A1%D5%B6%D6%81%D5%AB%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%B1%D5%A5%D5%BC%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%AB%D6%80%D5%A1%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B4%D5%A1%D5%B6%20%D5%B4%D5%AB%D5%BB%D5%B8%D6%81%D5%A1%D5%BC%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80%20%D5%AB%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D6%81%D5%BE%D5%A5%D6%81%D5%AB%D5%B6%20%D5%8D%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D6%84%D5%AB%20%D5%B4%D5%A1%D6%80%D5%A6%D5%B8%D6%82%D5%B4/62/>

²² Մարզային այցելությունները կազմակերպվել են Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Աջակցություն զլոբալ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (EITI) իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակում: Ծրագիրն ամբողջությամբ ֆինանսավորվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության «Հանրային վարչարարության բարեփոխումներ Արևելյան գործընկերության երկրներում» նախաձեռնությամբ:

հաշվետվողական պետական ու գործարար համակարգերի ստեղծումն է, ինչպես նաև հանրային երկխոսության կայացմանը խթանելն է՝ դրանով իսկ երաշխավորելով կողմերի միջև փոխըմբռնումը:

Հուլիսի 18-ին «Դիվելոփ Արմենիա» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպվել է «Հանքարդյունաբերության ոլորտում լավ կառավարման կլոր սեղան», որի ժամանակ ներկա հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները քննարկել են Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և այդ աշխատանքներին քաղաքացիական հասարակության արդյունավետ մասնակցության հետ կապված հարցեր: Կլոր սեղանին մասնակցել է նաև ՀՀ ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարության ղեկավարը:

Միջոցառում 9. ԱՃԹՆ-ի 1-ին զեկույցի պաշտոնական ներկայացում / կոնֆերանս, ԱՃԹՆ-ի կայքի, առցանց հաշվետվությունների համակարգի և տվյալների բազայի ներկայացում

Հունվարի 30-ին տեղի է ունեցել ՀՀ կառավարության, Համաշխարհային բանկի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից համատեղ կազմակերպված Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցի հրապարակմանը նվիրված համաժողովը, որին ներկա էին ՀՀ կառավարության, հանքարդյունահանող կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և այլ անդամ երկրների կառավարությունների, միջազգային գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլք: Համաժողովին բացման խոսքով հանդես է եկել ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանը, որը նշեց.

«Հայաստանում մետաղական հանքարդյունաբերության ոլորտը մշտապես գտնվել է հասարակության ուշադրության կենտրոնում՝ հաշվի առնելով երկրի տնտեսության մեջ վերջինիս դերը, ինչպես նաև ոլորտի գործունեության հետ կապված սոցիալական, բնապահպանական, տեխնոլոգիական և այլ հարցերը: Հետևապես պարզ է, որ ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացումը, միջազգային չափանիշներին համահունչ դարձնելը մեզ համար առաջանային նպատակ է, որին հասնելու ամենահուսալի ճանապարհը Հայաստանում EITI-ի սկզբունքների բազմակողմանի ներդրումն էր»:

Համաժողովի ընթացքում Համաշխարհային բանկի Հայաստանի գրասենյակի տնօրեն Սիլվի Բոսուրդոն ասաց.

«Ցանկանում եմ ընդգծել հաջողությամբ ձևավորված բազմաշահառու խմբի կարևորությունը: Վերջինիս տարբեր կողմերի անդամները՝ կառավարությունից, քաղաքացիական հասարակությունից և հանքարդյունաբերության ոլորտի կազմակերպություններից, կարևոր դեր են ունեցել Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման գործում և կշարունակեն կարևոր դեր ունենալ հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության վերաբերյալ քննարկումների ժամանակ»:

ԱՃԹՆ-ի փոխնախագահ Էդդի Բիչը նշեց.

«Հանքարդյունաբերությունը Հայաստանում ամենաարագ աճող ոլորտներից է: Գնալով ավելի կարևոր է դառնում այն հարցում համոզված լինելը, որ ոլորտային քաղաքականության մասին տեղեկացվածության մակարդակը բարձր է, և այն արդյունավետ է իրականացվում: Արդյունքում կապահովվի, որ Հայաստանը ստանա այն, ինչ պետք է ստանար՝ միաժամանակ ստեղծելով գրավիչ ներդրումային միջավայր: Մենք շնորհավորում ենք Հայաստանին ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի հրապարակման կապակցությամբ, որտեղ առաջին անգամ մեկ տեղում մանրամասն ներկայացվել է, թե ինչպես է ողջ ոլորտը կառավարվում: Այդ տեղեկատվությունը հիմնականում հասանելի է առցանց: Եվ այն լավ քաղաքականության հիմք է»:

Համաժողովի ընթացքում ներկայացվել է նաև www.eiti.am պաշտոնական կայքը, որտեղ հրապարակված են ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացում բոլոր առանցքային փաստաթղթերը: Ներկայացվել է ԱՃԹՆ-ի առցանց

հաշվետվության համակարգը, որի միջոցով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, 2018 թվականին առաջին անգամ պետական մարմինները և հանքարդյունահանող կազմակերպություններն առցանց եղանակով ներկայացրել են ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունները, որոնք հասանելի են PDF ձևաչափով www.eiti.am հղմամբ: Համաժողովին տեղի ունեցան նաև պանելային քննարկումներ ԱՃԹՆ-ի փոխակերպիչ դերի և համակարգային տվյալների հրապարակման ապագայի, ԻՍ Բացահայտման, ինչպես նաև պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ:

Միջոցառում 11. «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվական/ ճանաչողական նյութերի ստեղծում և տարածում

Միջոցառում 12. «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում / քննարկումներ, մասնավորապես՝ ազդակիր համայնքներում

Միջոցառումների շրջանակում իրականացված աշխատանքների նկարագրությունը ներկայացված է Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019 թվականի եռամսյակային հաշվետվություններում²³:

ՆՊԱՏԱԿԸ	Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծում և իրական սեփականատերերի մասին տեղեկատվության հանրայնացում		
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 13. Իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի, իրավական կարգավորումների հանրային իրազեկման և իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի մեկնարկի միջոցառման իրականացում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքը՝ մամուլի ասուլիս Վերջնաժամկետը՝ առաջին և չորրորդ եռամսյակներ, 2019թ.	Չի իրականացվել Տե՛ս 15-րդ և 16-րդ միջոցառումներ	ԲԾԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 14. Իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագրերի մշակման և ներկայացման միջազգային փորձի վերաբերյալ ուսուցում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքը՝ ուսուցում Վերջնաժամկետը՝ առաջին եռամսյակ, 2019թ.	Իրականացվել է սահմանված վերջնաժամկետից ուշացումով՝ երրորդ և չորրորդ եռամսյակներում:	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲԾԽ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 15. Իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի մշակում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքը՝ իրավական ակտերի նախագծեր Վերջնաժամկետը՝ երկրորդ եռամսյակ, 2019թ.	Իրականացվել է մասամբ / ընթացիկ Չորրորդ եռամսյակում մշակվել է իրական սեփականատերերի բացահայտման	Իրական սեփականատերերի բացահայտման միջգերատեսչական աշխատանքային խումբ, Արդարադատության

		ենթաօրենսդրական ակտերի նախագծերի փաթեթը և պաշտոնապես շրջանառվել ԲՀԽ-ի և շահագրգիռ պետական մարմինների միջև՝ առաջարկների ներկայացման նպատակով: Վերջնական տարբերակները պատրաստ կլինեն 2020 թվականի առաջին եռամսյակում՝ ամփոփելով և հաշվի առնելով ներկայացված առաջարկները:	նախարարություն, ԲՀԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 16. Իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի հաստատում ԲՀԽ-ի կողմից և շրջանառված նախագծերի ներկայացում ՀՀ կառավարություն	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքը՝ իրավական ակտերի նախագծեր Վերջնաժամկետը՝ Երկրորդ եռամսյակ, 2019թ.	Չի իրականացվել Իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի հաստատումը և շրջանառված նախագծերի ներկայացում ՀՀ կառավարություն նախատեսվում է իրականացնել 2020թ. 1-ին եռամսյակի ընթացքում:	ԲՀԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, Արդարադատության նախարարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 17. Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման տեխնիկական առաջադրանքի կազմում և հաստատում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքը՝ տեխնիկական առաջադրանք Վերջնաժամկետը՝ Երկրորդ եռամսյակ, 2019թ.	Իրականացվել է հաշվետու ժամանակահատվածում՝ աշխատանքային ծրագրով հաստատված ժամկետից ուշացումով: Երկրորդ եռամսյակում կազմվել է իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման տեխնիկական առաջադրանքի նախագիծը, որը հաստատվել է չորրորդ եռամսյակում՝ հաշվի առնելով ԲՀԽ-ի, շահագրգիռ պետական մարմինների և միջազգային փորձագետների առաջարկները:	ԲՀԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, Արդարադատության նախարարություն

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 18. Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման համար կազմակերպության ընտրություն և հանրային ռեգիստրի ստեղծում	Արդյունքը և վերջնաժամկետը <i>Արդյունքը՝</i> հանրային ռեգիստր <i>Վերջնաժամկետը՝</i> չորրորդ եռամսյակ, 2019թ.	Իրականացման կարգավիճակը ընթացիկ Չորրորդ եռամսյակում մեկնարկել է իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման համար ծառայությունների գնման գործընթացը: Անցկացվել է մրցույթ, որի արդյունքում ընտրված կազմակերպության հետ ֆինանսական և տեխնիկական առաջարկների շուրջ բանակցություններն անցկացվելու են 2020 թվականի առաջին եռամսյակում:	Պատասխանատուները ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, պետական մարմիններ, ընտրված կազմակերպություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 19. Իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագրերի լրացման և ներկայացման վերաբերյալ ուսուցում	Արդյունքը և վերջնաժամկետը <i>Արդյունքը՝</i> ուսուցում <i>Վերջնաժամկետը՝</i> չորրորդ եռամսյակ, 2019թ.	Իրականացման կարգավիճակը Չի իրականացվել (2019թ. աշխատանքային ծրագրով հաստատված ժամկետի ընթացքում իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը դեռ մշակման փուլում է)	Պատասխանատուները ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, համապատասխան պետական մարմիններ, ընտրված կազմակերպություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 20. Իրական սեփականատերերի հայտարարագրերի ներկայացում ընկերությունների կողմից	Արդյունքը և վերջնաժամկետը <i>Արդյունքը՝</i> հայտարարագրեր <i>Վերջնաժամկետը՝</i> չորրորդ եռամսյակ, 2019թ.	Իրականացման կարգավիճակը Չի իրականացվել (2019թ. աշխատանքային ծրագրով հաստատված ժամկետի ընթացքում իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը դեռ մշակման փուլում է)	Պատասխանատուները Ընկերություններ, իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստր
ՆՈՍՏԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ			

Միջոցառում 13. Իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի, իրավական կարգավորումների հանրային իրազեկման և իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի մեկնարկի միջոցառման իրականացում

2019թ. ապրիլի 23-ին ՀՀ Ազգային ժողովն Ը նդունեց «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին» օրենսգրքում, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին և «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին օրենքի նախագծերի փաթեթը, որով կարգավորվում է մետաղական հանքարդյունաբերության ոլորտի կազմակերպությունների ԻՍ բացահայտման ողջ գործընթացը:²⁴ Բացի այդ, 2019 թվականի նոյեմբերի 13-ին ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում կատարվել է լրացում այն մասին, որ ԻՍ հայտարարագրի կամ ԻՍ վերաբերյալ փոփոխված տեղեկությունների վերաբերյալ քաղվածք ներկայացնելու պարտավորություն ունեցող իրավաբանական անձանց դեպքում ԻՍ հայտարարագիր լրացնելիս ԻՍ են համարվում նաև տվյալ ընկերության կառավարման միանձնյա և կոլեգիալ մարմինների (բաժնետերերի ժողովի, խորհրդի եւ գործադիր մարմնի) անդամ ֆիզիկական անձինք, և ԻՍ մասով օրենսդրությամբ սահմանված իրավական կարգավորումները տարածվում են նրանց վրա:²⁵

ԻՍ բացահայտման գործընթացի, իրավական կարգավորումների հանրային իրազեկման և ԻՍ բացահայտման գործընթացի մեկնարկի միջոցառումները կիրականացվեն 2020 թվականին՝ պայմանավորված ԱԺ-ի կողմից ընդունված ԻՍ բացահայտումն ապահովող իրավական ակտերի հիման վրա ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակման աշխատանքների հետաձգմամբ:

Միջոցառում 14. Իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագրերի մշակման և ներկայացման միջազգային փորձի վերաբերյալ ուսուցում

Հաշվետու տարվա առաջին եռամսյակում ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության հարցումով ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից էլեկտրոնային եղանակով տրամադրվել են նյութեր՝ ԻՍ բացահայտման հայտարարագրերի մշակման և ներկայացման միջազգային համապատասխան փորձի վերաբերյալ:

Հայաստանում ԻՍ բացահայտման հայտարարագրերի մշակման և ներկայացման ենթաօրենսդրական ակտերի մշակման աշխատանքներին աջակցություն ցուցաբերելու պատակով: Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Աջակցություն գլոբալ ԱՃԹՆ-ի իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակում ներգրավվել է խորհրդատու ընկերություն միջազգային և տեղական խորհրդատուների մասնակցությամբ:

Սեպտեմբերի 16-17-ը ուսուցողական այց է կազմակերպվել Միացյալ Թագավորություն՝ ուսումնասիրելու ԻՍ բացահայտման ՄԹ-ի առաջավոր փորձը: Ուսուցողական այցին մասնակցել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, ԱՃԹՆ-ի ԲԾԽ-ի անդամ Լիլիա Շուշանյանը, Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն, ԱՃԹՆ ԲԾԽ-ի անդամ Սոնա Այվազյանը, «Զանգեզուրի

²⁴ <http://parliament.am/agenda.php?AgendaID=516&day=23&month=04&year=2019&lang=#23.04.2019>

²⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137114>

պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի իրավաբանական դեպարտամենտի ղեկավար, ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ Պերճ Խաչատրյանը, «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կայուն զարգացման գծով փոխնախագահ, ԲՇԽ-ի անդամ Արմեն Ստեփանյանը, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետի տեղակալ Տաթևիկ Մկրտչյանը, ՀՀ արդարադատության նախարարության կառուցվածքային բաժիններում առանձին գործառնությունների համակարգման խորհրդատու Անի Վարդերեսյանը և Երևանում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ազգային համակարգող Գոռ Խաչատրյանը: Ուսուցողական այցի շրջանակում Հայաստանի ԱՃԹՆ-ի պատվիրակության համար կազմակերպվել է աշխատաժողով Միացյալ Թագավորության կառավարության Գործարարության, Էներգետիկայի և արդյունաբերական ռազմավարության վարչությունում (BEIS Department), հանդիպումներ են տեղի ունեցել Բաց կառավարման գործընկերության (ԲԳԿ) ներկայացուցիչներ Թոնու Բասուի, Ադնա Կարամեհիկ-Օստեսի, ՄԹ Միացյալ հակակոռուպցիոն բաժնի քաղաքականության գլխավոր խորհրդատու Մելմա Ֆիշերի և «Օփեն Օուներշիփ» ԻՍ համաշխարհային ռեգիստրի Ծրագրերի և քաղաքականության գլխավոր կառավարիչ Լուիս Ռասել-Պրիվատայի հետ: Այցի ժամանակ Հայաստանի պատվիրակությունը ՄԹ Գործարարության, Էներգետիկայի և արդյունաբերական ռազմավարության վարչությունից և Ընկերությունների պալատից տեղեկացել է Միացյալ Թագավորության ընկերությունների ԻՍ ռեգիստրի հիմնելու, իրավական կարգավորումների, ռեգիստրի վարման փորձի մասին, ՀՀ պատվիրակությանը ներկայացվել է Ընկերությունների պալատի՝ նշանակալի ազդեցություն ունեցող անձանց՝ ԻՍ ռեգիստրի վարման գործառնությունները, իրավական կարգավորումները, համագործակցությունն այլ պետական գործակալությունների և հասարակական կազմակերպությունների հետ, ինչպես նաև այլ երկրների հետ համագործակցության շրջանակը: Ներկայացվել է տեղեկատվության հավաքագրման, տվյալները հանրության համար հասանելի դարձնելու, անձնական տվյալների պաշտպանության, ԻՍ բացահայտման պահանջների կատարման իրավական կարգավորումները: Հայաստանի պատվիրակության անդամներն ուսումնասիրել են ՄԹ ռեգիստրի տեխնիկական բնութագրիչները, առցանց և թղթային տարբերակներով տվյալների ներկայացման գործընթացները, ներկայացված տվյալների ստուգման ներդրված պրակտիկան: Վարչության ներկայացուցիչները ներկայացրել են նաև ընթացիկ բարեփոխումները և ոլորտում սպասվող միջազգային զարգացումները:

Բաց կառավարման գործընկերության (ԲԳԿ) ներկայացուցիչների և ՄԹ Միացյալ հակակոռուպցիոն բաժնի քաղաքականության գլխավոր խորհրդատուի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի կառավարության կողմից ԻՍ բացահայտման աշխատանքները, առաջիկա գործողությունները և համագործակցության հեռանկարները, իսկ «Օփեն Օուներշիփ» ԻՍ համաշխարհային ռեգիստրի Ծրագրերի և քաղաքականության գլխավոր ղեկավարը Հայաստանի պատվիրակությանը ներկայացրել է կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունները: Հանդիպման մասնակիցները քննարկել ԻՍ ռեգիստրի ստեղծման և հանրության համար դրա հասանելիության ապահովման խնդիրները, ինչպես նաև, Օփեն Օուներշիփի կողմից Հայաստանին խորհրդատվական և տեխնիկական աջակցություն տրամադրելու հնարավորությունները: Հայաստանի պատվիրակության խնդրանքով տրամադրվել են ԻՍ բացահայտման գործընթացի վերաբրյալ Օփեն Օուներշիփի կողմից մշակված նյութերը, հայտարարագրի ձևերը:

Հոկտեմբերի 29-ին ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի և ազգային քարտուղարության ներկայացուցիչները մասնակցել են Հայաստանում ԻՍ թափանցիկության թեմայով աշխատաժողովին²⁶, որի ընթացքում Հայաստան հրավիրված Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնության գլխավոր գործադիր տնօրենը և Օփեն Օուներշիփի Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչները ներկայացրել են միջազգային փորձը և քննարկել այդ ուղղությամբ Հայաստանում կատարված աշխատանքները՝ ներկայացնելով համապատասխան առաջարկներ:

Դեկտեմբերի 2-3-ը Օփեն Օուներշիփի ներկայացուցիչները այց են կատարել Հայաստան՝ տեխնիկական աջակցություն ցուցաբերելու Հայաստանում ԻՍ բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծմանը և հանրային

²⁶ https://www.ogp.am/hy/news/item/2019/10/29/BO_Armenia/

ռեգիստրում ընկերությունների կողմից տվյալների ներկայացման ընթացակարգի շուրջ: Այցի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարությունում տեղի է ունեցել երկօրյա քննարկում-աշխատաժողով Օփեն Օուներշիփի, Արդարադատության նախարարության, ԱՃԹՆ-ի քարտուղարության, Բաց կառավարման գործընկերության և Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի ներկայացուցիչների հետ իրական սեփականատերերի բացահայտումն ապահովող իրավական ակտերի, ԻՍ հայտարարագրի, տվյալների՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստր ներկայացման, գրառման, հրապարակման ընթացակարգերի վերաբերյալ:

Միջոցառում 15. Իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի մշակում

Միջոցառում 16. Իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի հաստատում ԲՇԽ-ի կողմից և շրջանառված նախագծերի ներկայացում ՀՀ կառավարություն

ԻՍ բացահայտման ենթաօրենսդրական ակտերի մշակման աշխատանքները հետաձգվել են ԻՍ բացահայտման գործընթացը կարգավորող օրենքների նախագծերի փաթեթը ՀՀ Ազգային ժողովի կողմից նախատեսված ժամկետից ուշ՝ 2019թ. ապրիլի 23-ին ընդունվելու պատճառով:

ԻՍ վերաբերյալ վերը նշված օրենսդրական փաթեթը ԱԺ-ի կողմից ընդունվելուց հետո, անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերի մշակման ծառայությունների գնման համար ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից մշակվել է տեխնիկական առաջադրանք, որի հիման վրա Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Աջակցություն գլոբալ ԱՃԹՆ-ի իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակում ընտրվել է համապատասխան խորհրդատվական ընկերություն, հունիսի 14-ին ընկերության և ԱՃԹՆ-ի քարտուղարության հետ կայացած հանդիպման ժամանակ հաստատվել են աշխատանքների շրջանակը և վերջնաժամկետները, որից հետո սկսվել են ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները:

Մշակվել են «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրում ներառված՝ հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման և «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը, լրացման և ներկայացման կարգը սահմանելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի հրամանի նախագծերը, որոնց վերաբերյալ հանդիպում-քննարկումներ են տեղի ունեցել ԱՃԹՆ-ի քարտուղարության, ԲՇԽ-ի, ԻՍ աշխատանքային խմբի և պատասխանատու լիազոր պետական մարմինների ներկայացուցիչների հետ: Վերջնական տարբերակները պատրաստ կլինեն 2020 թվականի առաջին եռամսյակում՝ ամփոփելով և հաշվի առնելով ներկայացված առաջարկները:

Միջոցառում 17. Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման տեխնիկական առաջադրանքի կազմում և հաստատում

Միջոցառում 18. Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման համար կազմակերպության ընտրություն և հանրային ռեգիստրի ստեղծում

ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից կազմվել է ԻՍ բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման տեխնիկական առաջադրանքի նախագիծը, որը ԲՇԽ-ի կողմից հաստատվել է 3-րդ եռամսյակում՝ այն ԲՇԽ-ի անդամների և ԻՍ բացահայտման միջգերատեսչական աշխատանքային խմբի անդամների, ինչպես նաև միջազգային քարտուղարության ու ԻՍ բացահայտման հարցերով զբաղվող մի շարք միջազգային կազմակերպությունների հետ

քննարկումներից հետո:

ԲՇԽ-ի կողմից տեխնիկական առաջադրանքի հաստատումը հետաձգելու հետևանքով ԻՍ բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման համար ծառայությունների գնման գործընթացը մեկնարկել է միայն չորրորդ եռամսյակում:

Ռեգիստրի ծրագրային ապահովման մշակման տեխնիկական առաջադրանքը ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ Համաշխարհային բանկի համաձայնությանը ներկայացնելու և ծառայությունների գնման գործընթացն ապահովելու համար: Այնուհետև անցկացվել է մրցույթ, որի արդյունքում ընտրված կազմակերպության հետ ֆինանսական և տեխնիկական առաջարկների շուրջ բանակցություններն անցկացվելու են 2020 թվականի առաջին եռամսյակում:

Միջոցառում 19. Իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագրերի լրացման և ներկայացման վերաբերյալ ուսուցում

Միջոցառում 20. Իրական սեփականատերերի հայտարարագրերի ներկայացում ընկերությունների կողմից

Չի իրականացվել՝ պայամանավորված այն հանգամանքով, որ ԻՍ վերաբերյալ հայտարարագրի ձևը հաշվետու ժամանակահատվածում գտնվել է մշակման փուլում:

ՆՊԱՏԱԿԸ	Հայաստանի ԱՃԹՆ թեկնածության / անդամակցության կարգավիճակի ապահովում		
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 23. Վավերացման գործընթացի պատրաստածության նախնական ստուգում և բացերի վերհանում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքները՝ նախավավերացման հարցաթերթեր Վերջնաժամկետը՝ երկրորդ եռամսյակ	Իրականացվել է հաշվետու ժամանակահատվածում՝ աշխատանքային ծրագրով հաստատված ժամկետից ուշացումով՝ չորրորդ եռամսյակում:	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 24. Վավերացման գործընթաց	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքները՝ վավերացում Վերջնաժամկետը՝ սեպտեմբեր, 2019թ.	Իրականացվել է մասամբ / ընթացիկ: 2019թ. սեպտեմբերի 9-ին մեկնարկել է Հայաստանի ԱՃԹՆ-ի վավերացման գործընթացը և վավերացումը նախատեսվում է 2020 թվականին:	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն, միջազգային վավերացնողներ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 25. ԲՇԽ-ի նիստերի անցկացում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները

	Արդյունքները՝ ԲՇԽ-ի նիստեր Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 26. ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հանդիպումների անցկացում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքները՝ հանդիպումներ Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ-ի աշխատանքային խմբեր, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 27. ԲՇԽ-ի նոր անդամների ներկայացում և ԲՇԽ-ի կազմի հաստատում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքները՝ ՀՀ վարչապետի որոշում, ԲՇԽ Վերջնաժամկետը՝ չորրորդ եռամսյակ, 2019թ.	Իրականացվել է մասամբ / ընթացիկ	ԲՇԽ-ի խմբակցություններ, ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 28. ԲՇԽ-ի աշխատակարգում փոփոխություններ (անհրաժեշտության դեպքում)	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքը՝ ԲՇԽ-ի աշխատակարգ Վերջնաժամկետը՝ չորրորդ եռամսյակ, 2019թ.	Իրականացվել է երրորդ եռամսյակում	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 29. ԱՃԹՆ-ի խորհրդի նիստերին և կոնֆերանսների մասնակցություն	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքները՝ ԱՃԹՆ-ի խորհրդի նիստեր	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 30. Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018թ. աշխատանքային ծրագրի կատարողականի մշակում և հաստատում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքը՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018թ. աշխատանքային ծրագրի կատարողական Վերջնաժամկետը՝ առաջին եռամսյակ, 2019թ.	Իրականացվել է (Առաջին եռամսյակում մշակվել է ԱՃԹՆ-ի 2018թ. աշխատանքային ծրագրի կատարողականը, հաստատվել է երկրորդ եռամսյակում՝ պայմանավորված ԲՇԽ-ի նիստի հետաձգմամբ)	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 34. Գործընկեր և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքը՝ դոնոր կազմակերպությունների հետ հանդիպումներ Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 35. Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքների ընթացք	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքները՝ պետական բյուջեի աշխատանք, հաշվետվությունների կազմում, ծրագրերի իրականացման համակարգում գնումների գործընթացի ապահովում Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Ընթացիկ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 36. ՀՀ ԱՃԹՆ-ի 2018 տարեկան հաշվետվության կազմում և հաստատում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքները՝ ՀՀ ԱՃԹՆ-ի 2018 տարեկան հաշվետվություն Վերջնաժամկետը՝ Երկրորդ եռամսյակ, 2019թ.	Իրականացվել է երկրորդ եռամսյակում: Երրորդ եռամսյակում 2018 տարեկան հաշվետվության մեջ կատարվել են փոփոխություններ և լրացումներ՝ հաշվի առնելով ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացրած նկատառումները, որոնք մասնավորապես վերաբերում էին ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջ 1-ի և պահանջ 7-ի կատարողականի գնահատմանը:	ԲԾԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 38. ՀՀ ԱՃԹՆ-ի եռամսյակային հաշվետվությունների կազմում և հաստատում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքները՝ եռամսյակային հաշվետվություններ Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Ընթացիկ	ԲԾԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 39. Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և այլ ԱՃԹՆ-ի անդամ երկրների հետ	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքները՝ գործություններ, հանդիպումներ, կոնֆերանս զանգեր Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Ընթացիկ	ԲԾԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 40. ԱՃԹՆ-ի անդամավճարի վճարում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Վերջնաժամկետը՝ Երկրորդ եռամսյակ, 2019թ.	Իրականացվել է հաշվետու ժամանակահատվածում՝ աշխատանքային ծրագրով հաստատված ժամկետից ուշացումով՝ չորրորդ եռամսյակում:	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 41. Թարգմանչական	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման	Պատասխանատուները

աշխատանքներ	կարգավիճակը	
	Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Ընթացիկ
ՆՊԱՏԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ		
<i>Միջոցառում 23. Վավերացման գործընթացի պատրաստվածության նախնական ստուգում և բացերի վերհանում</i>		
GIZ-ի աջակցությամբ Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը հուլիսի 8-10-ին հյուրընկալել է Գերմանիայի ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար Բորիս Ռեդերին, որը ժամանել էր՝ աջակցելու համար նախաձեռնվող վավերացման գնահատման իրականացմանը, օգնելու համար այն բացերի բացահայտման գործում: Նախաձեռնվող վավերացման աշխատանքների շրջանակում հուլիսի 10-ին կազմակերպվել է աշխատաժողով²⁷՝ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամների և ԱՃԹՆ-ի քարտուղարության հետ: ԱՃԹՆ-ի քարտուղարության և ԲՇԽ-ի անդամներին տրամադրվել են նախաձեռնվող վավերացման ուղեցույցը, գնահատման թերթիկը, ինչպես նաև Գերմանիայի վավերացման նյութերը: Աշխատաժողովի ընթացքում քննարկվել է ԱՃԹՆ-ի վավերացման ընթացակարգը, մասնավորապես՝ ներկայացվել է Հայաստանի վավերացման ժամանակացույցի նախագիծը, ԲՇԽ-ի (խմբակցությունների) դերը և պարտականությունները, Գերմանիայի վավերացման փորձը: Հանդիպման ընթացքում ներկայացվել է նախաձեռնվող վավերացման գնահատման թերթիկը, քննարկվել են կոնկրետ պահանջները, դրանց իրականացման կարգավիճակը, վավերացման ընթացքում դրանց գնահատումը և հնարավոր ճշգրտումների կարիքը: Աշխատաժողովի ընթացքում մասնակիցներին հետաքրքրող հարցերին հարց ու պատասխան ֆորմատով տրվել են պատասխաններ, քննարկվել են նաև ոլորտային այլ հարցեր: Նախքան Հայաստանի ԱՃԹՆ-ի վավերացման գործընթացի մեկնարկը Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը լրացրել է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից տրամադրված նախաձեռնվող վավերացման հարցաթերթիկը, որի շուրջ կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ ԲՇԽ-ի անդամների հետ՝ ներկայացված հարցերի, դրանց պատասխանների և առկա բացերի շուրջ: Բոլորի դիտարկումներն ամփոփելուց հետո այն տրամադրվել է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության Հայաստանի վավերացման գործընթացի պատասխանատուներին:		
<i>Միջոցառում 24. Վավերացման գործընթաց</i>		
Նոյեմբերի 4-8-ը ԱՃԹՆ-ի միջազգային վավերացման աշխատանքների համար ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության վավերացնողների խումբը այցելել է Հայաստան: Նախքան այցը, ազգային քարտուղարության կողմից իրականացվել են վավերացման այցի կազմակերպչական և նախաձեռնվող վավերացման հարցաթերթի մշակման աշխատանքները, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը տրամադրվել են վավերացման գործընթացի համար պահանջվող փաստաթղթերն ու անհրաժեշտ տեղեկատվությունը:		
<i>Տե՛ս Հավելված 1</i>		

27

https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2019/07/10/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%AB_%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D6%81%D5%A1%D5%BE_%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%BE%D5%A1%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE/65/

Միջոցառում 25. ԲՇԽ-ի նիստերի անցկացում

Հաշվետու տարում տեղի են ունեցել ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի 3 նիստ՝ ապրիլի 16-ին, սեպտեմբերի 5-ին և նոյեմբերի 7-ին²⁸։ Այդ նիստերի ընթացքում քննարկված հարցերի շրջանակը և ընդունված որոշումները ներկայացված են համապատասխան արձանագրություններում։

ԲՇԽ-ի նիստերին.

- հաստատվել է Հայաստանի 2019թ. ազգային զեկույցը կազմող անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքը,
 - ընդունվել է Հայաստանի 2-րդ ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակը սահմանող մի շարք որոշումներ,
 - հաստատվել են ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների եռամսյակային հաշվետվությունները,
 - հաստատվել է ՀՀ ԱՃԹՆ-ի 2018թ. աշխատանքային ծրագրի կատարողականը,
 - հաստատվել է 2018 թվականի տարեկան հաշվետվությունը,
 - հաստատվել են Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգի փոփոխությունները
 - հաստատվել է «Հայաստանյան ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթուղթը,
 - քննարկվել են 2019թ. իրականացվելիք նախնական ուսումնասիրության շրջանակի վերաբերյալ մի շարք հարցեր,
- քննարկվել է 2020թ. ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքը,
- քննարկվել են ընթացիկ աշխատանքներ կապված՝
 - ԱՃԹՆ-ի միջազգային վավերացման գործընթացին Հայաստանի նախապատրաստվածության,
 - ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի կազմման աշխատանքների մրցույթի ընթացքի, տվյալների համակարգային բացահայտման ուսումնասիրության,
 - ԱՃԹՆ-ի նոր ստանդարտի շրջանակում առաջարկվող միջազգային ծրագրերի,
 - իրական սեփականատերերի բացահայտման և
 - ՀՀ ԱՃԹՆ-ի 2018թ. ազգային զեկույցի բացահայտումների և այլնի հետ։

Նոյեմբերի 7-ին կայացած նիստին ներկա էր նաև Հայաստանի առաջին վավերացման առաքելությունն իրականացնող ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության վավերացնողների խումբը, որը ԲՇԽ-ի անդամներին ներկայացրեց վավերացման գործընթացի ընթացքը և առաջիկա քայլերը, շահագրգիռ կողմերի հետ քննարկեց լրացուցիչ պարզաբանման կարիք ունեցող հարցերը։

Միջոցառում 26. ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հանդիպումների անցկացում

Հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի պատասխանատու հանքարդյունաբերության հարցերով զբաղվող աշխատանքային խմբի ղեկավար, ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ, Շրջակա միջավայրի նախարարի առաջին տեղակալ Իրինա Ղափլանյանի գլխավորությամբ տեղի է ունեցել ԱՃԹՆ-ի պատասխանատու հանքարդյունաբերության հարցերով

²⁸ <https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents>

գրադվող աշխատանքային խմբի 6 հանդիպում՝ մարտի 19-ին, մարտի 26-ին, ապրիլի 12-ին, մայիսի 31-ին, հունիսի 25-ին և հուլիսի 26-ին՝ ԱՃԹՆ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության (ՊՀ) հայեցակարգային փաստաթղթի մշակման շուրջ, որոնց ընթացքում մշակվել են փաստաթղթի բովանդակային բաժինները, պատասխանատու հանքարդյունաբերության սահմանումը կամ շրջանակը, ինչպես նաև սահմանվել են ՊՀ հիմնական ուղղությունները, առաջնահերթությունները և ՊՀ աշխատանքային խմբի ընդհանուր հանձնառությունը:

Հուլիսի 12-ին տեղի է ունեցել ԻՍ բացահայտման ռեգիստրի ծրագրային ապահովման տեխնիկական առաջադրանքի նախագծի շուրջ ԻՍ աշխատանքային խմբի քննարկումը, օգոստոսի 6-ին՝ ԻՍ ռեգիստրի ծրագրային ապահովման տեխնիկական առաջադրանքի վերջնականացման, մասնավորապես, open source գործառնության նախատեսման թեմայով հանդիպում, օգոստոսի 27-ին՝ ԲՇԽ-ի անդամների աշխատանքային քննարկում 2020 թվականին ԱՃԹՆ-ի ընդգրկման շրջանակի ընդլայնման առնչվող հարցերի ու նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի շուրջ և ԻՍ բացահայտման աշխատանքային խմբի մի շարք հանդիպումներ ԻՍ ենթաօրենսդրական ակտերի նախագծերի շուրջ:

Հոկտեմբերի 2-ին տեղի է ունեցել հանդիպում-քննարկում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Աջակցություն գլոբալ ԱՃԹՆ-ի իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակում Հայաստանի ԱՃԹՆ-ի տվյալների համակարգային բացահայտման իրագործելիության ուսումնասիրությունը կազմող խորհրդատու Արմեն Մկրտչյանի և Մավրիտանիայում այդ աշխատանքները կոորդինացող, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Ապակենտրոնացման և հանրային ֆինանսների հզորացման ծրագրի» (ProDeF) տեխնիկական օգնական Սոֆի Գիրկեի հետ: Հանդիպմանը մասնակցում էին ԲՇԽ-ի անդամները և համապատասխան պետական մարմիններից ներկայացուցիչներ, ովքեր պատասխանատու են տեղեկատվական համակարգերի, տվյալների բազաների կառավարման և արդյունահանող ոլորտին առնչվող ֆինանսական և ոչ ֆինանսական տվյալների մշակման, տնօրինման և հրապարակման համար:²⁹

Միջոցառում 27. ԲՇԽ-ի նոր անդամների ներկայացում և ԲՇԽ-ի կազմի հաստատում

Տե՛ս սույն՝ ԱՃԹՆ-ի 2019թ. տարեկան հաշվետվության Բաժին 4:

Միջոցառում 28. ԲՇԽ-ի աշխատակարգում փոփոխություններ (անհրաժեշտության դեպքում)

ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության կողմից առաջարկվել է ԲՇԽ-ի աշխատակարգում հստակեցնել ԲՇԽ-ի անդամների և այլընտրանքային անդամների լիազորությունների ժամկետների հաշվարկման կարգը: Լրամշակված աշխատակարգը, որում ներառվել են նաև ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված առաջարկությունները՝ ԲՇԽ-ի անդամների ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) հաստատվել է սեպտեմբերի 5-ին կայացած ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստին և հրապարակվել ԱՃԹՆ-ի հայաստանյան պաշտոնական կայքում³⁰:

Միջոցառում 29. ԱՃԹՆ-ի խորհրդի նիստերին և կոնֆերանսներին մասնակցություն

²⁹ <https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2019/10/03/mauritania/77/>

³⁰ <https://www.eiti.am/hy/%D4%B2%D5%87%D4%BD-%D5%AB-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3>

ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարության ներկայացուցիչները մասնակցել են Ուկրաինայի Կին քաղաքում փետրվարի 27-28-ին կայացած ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի 42-րդ նիստին, որտեղ քննարկել են գլոբալ գործընթացի զարգացումները, Համաշխարհային բանկի և այլ դոնորների աջակցության հեռանկարները, անդամ երկրների վավերացման գնահատականները, ինչպես նաև երեք տարին մեկ կազմակերպվող ԱՃԹՆ-ի միջազգային համաժողովին ընդառաջ ԱՃԹՆ-ի ստանդարտի փոփոխությունների փաթեթը:³¹

ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի 42-րդ նիստին զուգահեռ կազմակերպվել էր նաև համակարգային բացահայտման թեմայով քննարկում: Ներկայացվող երկրների շարքում էր Հայաստանը, որն այն փոքրաթիվ երկրներից մեկն էր, որում ներդրել է հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային հարթակ: Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավարը, ներկայացնելով հայաստանյան փորձը, ներկայացրել է նաև հիմնական տվյալները բաց ձևաչափով օգտատերերին հասանելի դարձնելու գործիքակազմը:³²

Մարտի 19-20-ը ԱՃԹՆ-ի քարտուղարության, Արդարադատության նախարարության, Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերության (GIZ) և լրագրողական համայնքի ներկայացուցիչներից կազմված հայաստանյան պատվիրակությունը Ֆիլիպինների մայրաքաղաք Մանիլայում մասնակցել է ԻՍԹ թեմայով Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային երկօրյա աշխատաժողովին, որտեղ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության ներկայացուցիչ Արփինե Սարգսյանը ներկայացրել է նաև Հայաստանում բարձրաստիճան պաշտոնյաների եկամուտների հայտարարագրման համակարգը: Միացյալ Թագավորության Բիզնեսի, Էներգետիկայի և արդյունաբերական ռազմավարության ղեկավարման Կորպորատիվ թափանցիկության և ռեգիստրի բարեփոխման ղեկավար Ստեֆան Վեբստերի հետ առանձին հանդիպման ընթացքում Հայաստանի ԱՃԹՆ-ի ղեկավար Լիլիա Շուշանյանը և Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերության (GIZ) խորհրդատու Գոռ Խաչատրյանը քննարկել են նաև Մեծ Բրիտանիայում ներդրված փորձը: Միաժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել փորձի փոխանակման նպատակով շարունակական համագործակցության հաստատման շուրջ:³³

Հայաստանի ԱՃԹՆ-ի պատվիրակությունը, որի կազմում էին ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը, փորձագետ Անահիտ Առուստամյանը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանը, ԲՇԽ-ի հանքարդյունահանող ընկերությունների խմբակցության անդամներ Վահե Վարդանյանը, Արմեն Ստեփանյանը, քաղաքացիական հասարակության խմբակցության անդամ Հարություն Մովսիսյանը, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Նարինե Թադևոսյանը, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ներկայացուցիչներ Ալեքսանդր Դրագոյովիչը և Գոռ Խաչատրյանը, հունիսի 17-19-ը Փարիզում մասնակցել են ԱՃԹՆ-ի 2019թ. համաշխարհային համաժողովին, որն ԱՃԹՆ-ի 52 անդամ երկրների և արդյունահանող ոլորտի շահառուների համար հարթակ է հանդիսանում ոլորտի կառավարման և ԱՃԹՆ-ի ազդեցության հետ կապված բազմաբովանդակ քննարկումների համար, ինչպես նաև զուգահեռ տեղի ունեցած ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի 43-րդ և 44-րդ նիստերին՝ համապատասխանաբար հունիսի 17-ին և հունիսի 19-ին:

Համաժողովի ընթացքում ԱՃԹՆ-ի խորհուրդը հաստատել է ԱՃԹՆ-ի վերանայված ստանդարտը: ԱՃԹՆ-ի խորհրդի նախագահ է ընտրվել Նոր գելանդիային նախկին վարչապետ, ՄԱԶԾ-ի նախկին ադմինիստրատոր տիկին Հելեն Քլարքը:

Հայաստանն ԱՃԹՆ-ի համաշխարհային համաժողովի ժամանակ արժանացել է ԱՃԹՆ-ի նախագահության

³¹ <https://bit.ly/2VYW4Tx>

³² <https://bit.ly/2K7G4fm>

³³ <https://bit.ly/342qU2e>

մրցանակին, որի մասին համաժողովի բացման ժամանակ նշեց ԱՃԹՆ-ի նախագահ Ֆրեդրիկ Ռայնֆելդը, - «Նորեկ երկրի անդամակցումն ԱՃԹՆ-ին սկսվեց նորարարությամբ և բարձր տեմպերով: Խթանելով կառավարության, արդյունահանող կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցությունը՝ ԱՃԹՆ-ն օգնել է բազմաշահառու կողմերի համար ստեղծել բնական ռեսուրսների կառավարման շուրջ երկխոսության նոր մշակույթ: Շեղծելով համակարգային տվյալների բացահայտման ուղուն՝ Հայաստանի ԱՃԹՆ-ն ստեղծել է համակարգային տվյալների բացահայտման առցանց հաշվետվությունների համակարգ, որն էլ ծառայում է որպես տվյալների պորտալ»:³⁴

Համաժողովի «Փիրօ անկյունում» ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմայանը ներկայացրել է ԱՃԹՆ-ի շրջանակում տվյալների համակարգային բացահայտումները՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքը, առցանց հաշվետվությունների հարթակը, հաշվետվությունների առցանց ներկայացման գործընթացը, հավաքագրված տվյալները և ինչ գործիքների միջոցով են այդ տվյալները հասանելի դառնում հանրությանը:

2019 թվականի նոյեմբերի 29-30-ը ՀՀ վարչապետի աշխատակազմի ԱՃԹՆ-ի քարտուղարության պատվիրակությունը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում մասնակցել է Լավ կառավարման ֆորումի ներքո «Կոռուպցիայի դեմ պայքարի ինովացիոն մոտեցումների քննարկում» թեմայով համաժողովին³⁵: Համաժողովը կազմակերպել էր Տեղեկատվության ազատության զարգացման ինստիտուտը (The Institute for Development of Freedom of Information - IDFI) Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) աջակցությամբ:

Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի պատվիրակության կազմում համաժողովին մասնակցում էին ներկայացուցիչներ ՀՀ վարչապետի աշխատակազմից, ԱՃԹՆ-ի քարտուղարությունից, փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակից, Արդարադատության նախարարությունից, Ֆինանսների նախարարությունից, ինչպես նաև ՀՀ ԱՃԹՆ ԲԾԽ-ի անդամներ:

Լավ կառավարման ֆորումին ԱՃԹՆ-ի գլոբալ ստանդարտի պանելային քննարկման ժամանակ, որտեղ որպես զեկուցող ընդգրկված էին Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության ղեկավարը և Համաշխարհային բանկի «Հայաստանի ԱՃԹՆ-ին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի համակարգողը, Հայաստանի պատվիրակության կողմից ներկայացվեց Հայաստանի փորձը, քննարկվեցին ԱՃԹՆ-ի իրականացման հաջող փորձերը:

«ԱՃԹՆ-ի ներդրումը կոռուպցիայի դեմ պայքարում. Օրինակներ և հնարավորություններ Եվրասիայի համար» աշխատաժողովի ժամանակ, որը վարում էր Հայաստանի պատվիրակությունից Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն գլոբալ ԱՃԹՆ-ի իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի համակարգողը, Հայաստանի ԱՃԹՆ ԲԾԽ-ի քաղաքացիական խմբակցության անդամը ներկայացրեց ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկուցում բացահայտված Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտի ֆինանսական հոսքերը: Աշխատաժողովի այլ երկրների մասնակիցների հետ քննարկվեցին ֆինանսական հոսքերի կառավարման հաջողված փորձերը՝ ի նպաստ կոռուպցիայի դեմ պայքարին:

Աշխատաժողովին քննարկվեցին նաև Բաց կառավարման գործընկերության (OGP) դերը կոռուպցիայի դեմ պայքարում, ԻՍ բացահայտման կարևորությունը, OpenOwnership-ի կողմից ստեղծված ԻՍ գլոբալ ռեգիստրը, տվյալների հավաքագրման եղանակները և թե ինչպես օգտվել այդ տվյալներից, ներկայացվեց ԻՍ բացահայտման Ուկրաինայի և Նորվեգիայի փորձը:³⁶

³⁴ <https://bit.ly/2VX9tvx>

³⁵ https://idfi.ge/en/good_governance_forum

³⁶

<https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2019/12/04/29-30-november-good-governance-forum-in-tbilisi/79/>

Միջոցառում 30. Հայաստանի ԱՃԹՆ 2018թ. աշխատանքային ծրագրի կատարողականի մշակում և հաստատում

Հաշվետու տարվա առաջին եռամսյակում Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից կազմվել Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018թ. աշխատանքային ծրագրի կատարողականը, որում ներառվել են ԲՇԽ անդամների դիտարկումները: Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018թ. աշխատանքային ծրագրի կատարողականը հաստատվել է ԲՇԽ-ի կողմից երկրորդ եռամսյակում՝ ապրիլի 16-ին տեղի ունեցած ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստին:

Միջոցառում 34. Գործընկեր և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը հանդիպումներ է ունեցել Համաշխարհային բանկի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ներկայացուցիչների հետ Հայաստանի ԱՃԹՆ 2019-2020թթ. աշխատանքային ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման և իրականացման ժամանակացույցի քննարկման շուրջ:

Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի գործընկերների հետ քննարկվել է դրամաշնորհային համաձայնագրի փակման ժամկետը երկարաձգելու հնարավորությունը, որի վերաբերյալ ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի կողմից պաշտոնական նամակ է ուղարկվել է Համաշխարհային բանկի դրամաշնորհային ծրագրերի պատասխանատուներին: Արդյունքում, Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի միջև կնքված «Հայաստանի ԱՃԹՆ-ին աջակցության» դրամաշնորհային ծրագրի վերջնաժամկետը 2020 թվականի ապրիլի 30-ից երկարաձգվել է մինչև 2021 թվականի հունվարի 31-ը: Համաշխարհային բանկի հետ ձեռք է բերվել նաև պայմանավորվածություն՝ դրամաշնորհի խնայված միջոցների հաշվին մշակել Հայաստանի ԱՃԹՆ-ի 3-րդ զեկույցը և դրա նախնական ուսումնասիրությունը, իրականացնել հանրային լուսաբանման և կարողությունների զարգացման միջոցառումներ և ավարտել 2019 թվականի ընթացքում ավարտին չհասցված աշխատանքները:

Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանի ԱՃԹՆ-ին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1. հունվարի 30-ին կազմապերպվել է ՀՀ ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի ներկայացման համաժողովը,
2. հունվար ամսին շարունակվել են ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության համար վարձված հասարակայնության հետ կապերի փորձագետի ծառայությունների մատուցումը,
3. պատրաստվել են տպագրական նյութեր՝ ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից կազմակերպվող ծրագրային միջոցառումներին օգտագործելու համար,
4. հանրային իրազեկման բարձրացման նպատակով պատրաստվել են ԱՃԹՆ-ի հայաստանյան պատմության, կարևորության և ընդհանուր գործընթացի, ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի կոնֆերանսի ամփոփ ներկայացման, զեկույցի ֆինանսական և կոնտեքստուալ տվյալների և ԻՍ և հայտարարագրում ներկայացվող տվյալների վերաբերյալ 5 տեսանյութ, որոնք տեղադրվել ու տարածվել են սոցիալական ցանցերի միջոցով և հեռարձակվել Լոռիի ու Սյունիքի մարզային ալիքներով, իրականացվել է ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի գովազդային արշավ ֆեյսբուք սոցիալական ցանցում,
5. իրականացվել են ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի և առցանց հաշվետվության համակարգի ծրագրային թարմացումներ,
6. Մարտի 19-20-ը Ֆիլիպինների մայրաքաղաք Մանիլայում տեղի ունեցած Ասիա-խաղաղօվկիանոսյան

տարածաշրջանային երկօրյա աշխատաժողովին ՀՀ ԱՃԹՆ-ի ներկայացուցչի մասնակցության համար դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվել է գործուղումը (օրապահիկ և մուտքի արտոնագրի վճար):

7. 2019 թվականի դեկտեմբերին սկսվել են 2019 թվականի ազգային զեկույցի կազմման աշխատանքները, որը կիրառարակվի և հանրությանը կներկայացվի 2020 թվականին,
8. շարունակվել են ԱՃԹՆ-ի փաստաթղթերի թարգմանական աշխատանքները թարգմանչական ծառայություններ մատուցող Խորհրդատու կողմից, որի պայմանագրի ժամկետն ավարտվել է 2019թ. դեկտեմբերին:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հետ իրականացվող «Աջակցություն գլոբալ ԱՃԹՆ-ի իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակում ցուցաբերվել է աջակցություն՝

1. 2019 թվականի հունվարի 30-ին տեղի ունեցած ԱՃԹՆ-ի 1-ին ազգային զեկույցի ներկայացմանը նվիրված համաժողովի կազմակերպչական աշխատանքներին: Տպագրվել են ՀՀ ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի և դրա սեղմագրի լրացուցիչ օրինակներ, պատրաստվել են տեղեկատվական նյութեր հունիսի 17-19-ը Փարիզում կայացած ԱՃԹՆ-ի համաշխարհային համաժողովի ընթացքում Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների վերաբերյալ հարային իրազեկումն ու Հայաստանի պատշաճ ներկայացումն ապահովելու համար:
2. ՀՀ ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի և Հայաստանում ԱՃԹՆ-ի իրականացման շուրջ հանրային իրազեկվածության բարձրացման 4 մարզային հանդիպումների կազմակերպմանը Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում, Լոռու մարզի Վանաձոր համայնքում, Սյունիքի մարզի Կապան և Ագարակ համայնքերում:
3. Հայաստանի ԱՃԹՆ-ի ներկայացուցիչների մասնակցությանը 2019թ. փետրվարի 27-28-ը Կիևում կայացած ԱՃԹՆ-ի խորհրդի 42-րդ նիստին, մարտի 19-20 Մանիլայում ԻՍԹԵՄ թեմայով Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային երկօրյա աշխատաժողովին, հունիսի 17-19-ը Փարիզում կայացած ԱՃԹՆ-ի համաշխարհային համաժողովին, ԱՃԹՆ-ի խորհրդի 43-րդ և 44-րդ նիստերին, նոյեմբերի 29-30-ը Թբիլիսիում կայացած «Կոռուպցիայի դեմ պայքարի ինովացիոն մոտեցումների քննարկում» թեմայով համաժողովին:
4. ԻՍԹԵՄ բացահայտման ենթաօրենսդրական ակտերի նախագծերի փաթեթի մշակմանը, ԻՍԹԵՄ հանրային ռեզիստրի ստեղծման Միացյալ Թագավորության առաջավոր փորձն ուսումնասիրելու համար 2019 թվականի սեպտեմբերին Հայաստանի ԱՃԹՆ-ի պատվիրակության Միացյալ Թագավորություն ուսուցողական այցի իրականացմանը,
5. Հայաստանի ԱՃԹՆ-ի միջազգային վավերացման նախավավերացման աշխատանքներին՝ հուլիսի 10-ին կազմակերպելով ԱՃԹՆ-ի նախավավերացման աշխատաժողով՝ Հայաստանի ԱՃԹՆ -ի բազմաշահառու խմբի և ԱՃԹՆ-ի քարտուղարության հետ և Գերմանիայի ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավարի մասնակցությամբ, ինչպես նաև վավերացնող խմբի և ԲՇԽ-ի ներկայացուցիչների ու դոնորների հետ հանդիպմանը:
6. «Հայաստանի ԱՃԹՆ-ի տվյալների համակարգային բացահայտման իրագործելիության ուսումնասիրության» նախագծի մշակմանը և այդ աշխատանքների ընթացքում Մավրիտանիայում այդ աշխատանքները կոորդինացնող, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Ապակենտրոնացման և հանրային ֆինանսների հզորացման ծրագրի» (ProDeF) տեխնիկական օգնական Սոֆի Գիրկեի հետ հոկտեմբերի 2-ին Երևանում հանդիպում-քննարկման անցկացմանը:
7. Հայաստանում ԱՃԹՆ-ի իրականացման վերաբերյալ տեղեկատվական նյութերի պատրաստման և հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպման համար հասարակայնության հետ կապերի փորձագետի ներգրավմանը:

Միջոցառում 35. Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքների ընթացք

Հաշվետու տարում Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը կատարել է հետևյալ աշխատանքները՝

- ՀՀ վարչապետի աշխատակազմ ու ՀՀ ֆինանսների նախարարություն է տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն՝ կապված 2019 թվականի բյուջեի պլանավորման և կառավարման հետ կապված աշխատանքների հետ:
- համակարգել է ՀՀ ԱՃԹՆ-ի 2019 աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումների պլանավորման և իրականացման աշխատանքները՝ համաձայնեցնելով դոնոր կազմակերպությունների՝ Համաշխարհային բանկի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հետ:
- Համակարգել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի ԱՃԹՆ-ին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի ֆիդուցիար հարցերի, մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում գնումների գործընթացի ապահովման, մատուցված ծառայությունների ընդունման հետ կապված աշխատանքները,
- մշակել է ԱՃԹՆ-ի իրականացման առնչվող փաստաթղթերի նախագծերը և ծառայությունների գնման համար համապատասխան ծառայությունների տեխնիկական առաջադրանքների նախագծերը, մշակել է ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունների ձևերում փոփոխություններն ու լրացումները,
- կազմակերպել է հանդիպումներ շահագրգիռ կողմերի, գործընկերների, ԲՇԽ-ի անդամների, ԲՇԽ-ի պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խմբի և ԻՍ բացահայտման միջգերատեսչական աշխատանքային խմբի անդամների հետ՝ ապահովելով վերջիններիս հետ ԱՃԹՆ-ի ստանդարտի իրականացման հարցերի շուրջ պարբերաբար քննարկումներն ու համագործակցությունը, համակարգել է ԻՍ բացահայտումը ապահովող աշխատանքների գործընթացը:
- իրականացրել է հունիսի 17-19-ը Փարիզում տեղի ունեցած ԱՃԹՆ-ի 2019թ. համաշխարհային համաժողովում՝ երկրների էքսպոյի համար Հայաստանի ստենդի պատրաստման աշխատանքները, մշակել է տեղեկատվական փերֆիկների բովանդակությունը:
- Իրականացրել է Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին վավերացման գործընթացի նախապատրաստական աշխատանքները և աջակցել է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին վավերացման գործընթացի կազմակերպչական աշխատանքներում՝ տրամադրելով անհրաժեշտ փաստաթղթեր և աջակցելով նոյեմբերի 4-8-ը ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հայաստանյան հանդիպումների կազմակերպմանը,
- կազմել և ՀՀ կառավարությանն է ներկայացրել 2020-2022 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրերի (ՄԺԾԾ) և 2020 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտը,
- կատարել է 2020 թվականի բյուջեի պլանավորման հետ կապված աշխատանքներ,
- կազմակերպել է ԲՇԽ-ի 3 նիստ,
- կազմել է ԱՃԹՆ ներդրման աշխատանքների 2019թ. եռամսյակային և 2018թ. տարեկան հաշվետվությունները

- Իրականացրել է Հայաստանում ԱՃԹՆ-ի իրականացմանն ուղղված այլ աշխատանքներ:

ՀՀ վարչապետի ապրիլի 9-ի 373-Ա որոշմամբ³⁷ ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար Լիլիա Շուշանյանը նշանակվել է տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալի պաշտոնում: ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար է նշանակվել Լուսինե Թովմասյանը:

Միջոցառում 36. ՀՀ ԱՃԹՆ-ի 2018 տարեկան հաշվետվության կազմում և հաստատում

Երկրորդ եռամսյակում ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից մշակվել է 2018 տարեկան հաշվետվությունը, որը հաստատվել է ԲՇԽ-ի կողմից ՀՀ ԱՃԹՆ-ի 2018 տարեկան հաշվետվությունը ներկայացվել է նաև ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության դիտարկմանը: Վերջինիս նկատառումները հաշվի առնելով՝ 2018 տարեկան հաշվետվության մեջ կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որոնք, մասնավորապես, վերաբերում էին ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջ 1-ի և պահանջ 7-ի կատարողականի գնահատմանը³⁸:

Միջոցառում 38. ՀՀ ԱՃԹՆ-ի եռամսյակային հաշվետվությունների կազմում և հաստատում

Հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից մշակվել է ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2018 թվականի 4-րդ եռամսյակի և 2019 թվականի առաջին, երկրորդ և երրորդ եռամսյակների հաշվետվությունները: ԲՇԽ-ի կողմից հաշվետվությունների հաստատվելուց հետո դրանք հրապարակվել ԱՃԹՆ-ի հայաստանյան կայքում³⁹:

Միջոցառում 39. Համագործակցություն ԱՃԹՆ միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի այլ անդամ երկրների հետ

Հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի քարտուղարության պատասխանատուները մշտապես համագործակցել են ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տարածաշրջանային պատասխանատուների հետ: Քննարկվող հարցերի շրջանակը վերաբերվել է Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրմանը, ԱՃԹՆ-ի զեկույցին, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն ներկայացրած մեկնաբանություններին և խորհրդատվությանը, ԱՃԹՆ-ի համաշխարհային համաժողովում Հայաստանի մասնակցության կազմակերպչական հարցերին, ԱՃԹՆ-ի 2019թ. ստանդարտի նոր պահանջներին, Հայաստանում ԱՃԹՆ-ի վավերացման գործընթացի նախապատրաստական և ԱՃԹՆ-ի միջազգային վավերացման համար ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչների հայաստանյան այցի կազմակերպմանը, Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018 թվականի տարեկան հաշվետվությանը, ԲՇԽ-ի փոփոխված աշխատակարգին և այլ ընթացիկ հարցերին: Համագործակցության ընթացքում լայնորեն կիրառվել են տեսազանգերի պրակտիկան:

³⁷ <https://www.e-gov.am/decrees/item/20065/>

³⁸ <https://www.eiti.am/hy/%D4%B5%D5%BC%D5%A1%D5%B4%D5%BD%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80>

³⁹ <https://www.eiti.am/hy/%D4%B5%D5%BC%D5%A1%D5%B4%D5%BD%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80>

ՀՀ ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի հրապարակմանն նվիրված համաժողովին մասնակցել են ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ղեկավարի տեղակալը, տարածաշրջանային ղեկավարը, հասարակայնության հետ կապերի համակարգողը, Ֆիլիպինների Հանրապետության ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավարը, Ուկրաինային արդարադատության նախարարի տեղակալը, ներկայացուցիչներ Վրաստանի շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարությունից, Վրաստանի Էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարությունից, Ղրղզստանի ազգային վիճակագրական կոմիտեից, Ղազախստանի ներդրումների և զարգացման նախարարությունից, Համաշխարհային բանկի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ)-ի տարածաշրջանային ներկայացուցիչներ և այլք:

Համաժողովի ընթացքում հունվարի 31-ին հանդիպում-քննարկում է տեղի ունեցել համաժողովի մասնակից Վրաստանի պատվիրակության ներկայացուցիչների, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության միջև՝ Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման փորձի ներկայացման շուրջ:

Ուկրաինայի Կիև քաղաքում փետրվարի 27-28-ն ընթացող ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի նիստին զուգահեռ փետրվարի 27-ին ՀՀ ԱՃԹՆ-ի ներկայացուցիչները և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) Գերմանիայի դաշնային կառավարության Եվրոպայի արևելյան գործընկերության հանրային վարչարարության ծրագրի ներկայացուցիչները GIZ-ի Ուկրաինայի գրասենյակում համատեղ հանդիպում են ունեցել Վրաստանի և Ուկրաինայի շահագրգիռ կողմերի հետ՝ նպատակ ունենալով փոխանակել ձեռք բերված փորձով և մշակել առաջիկա մեկ տարվա համագործակցության աշխատանքային ծրագիրը:⁴⁰ Ինչպես նաև ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարության խնդրանքով, մինչև ԱՃԹՆ խորհրդի նիստը, ՀՀ ԱՃԹՆ-ի պատվիրակությունը հանդիպում-քննարկում է ունեցել Ուկրաինայի գործարար համայնքի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Ուկրաինայում գործող և նախագծային փուլում գտնվող օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև ընկերությունների փաստացի գործելաոճն ԻՄ հայտարարագրման և այլ գործընթացներում:⁴¹

Մայիսի 15-16-ը ԱՃԹՆ-ի բազմաշախատու խմբի անդամ, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Սոնա Այվազյանը և ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը մասնակցել են Բեռլինում կայացած «Իրական սեփականատերերի թափանցիկությունը» խորագրով եվրոպական տարածաշրջանային քննարկմանը, որը կազմակերպվել էր Թրանսփարենսի Ինթերնեշնլի կողմից Բաց կառավարման գործընկերության շրջանակում: Հանդիպման նպատակն էր ԻՄ բացահայտման, տվյալների հրապարակման, անձնական տվյալների գաղտնիության ապահովման և հայտարարագրված տվյալների ստուգման գործընթացներում երկրների փորձի ներկայացումն ու մարտահրավերների քննարկումը: Հանդիպմանը Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Լատվիայի, Սլովակիայի, Իսպանիայի, Ֆրանսիայի, Հայաստանի, ինչպես նաև Բաց կառավարման գործընկերության, Թրանսփարենսի Ինթերնեշնլի և մի շարք կազմակերպությունների պատասխանատուներ ներկայացրել են մինչև այժմ եվրոպական տարածաշրջանի երկրներում իրականացված

⁴⁰ <https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2019/02/27/giz/51/>

⁴¹ <https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2019/02/27/%D4%B1%D5%83%D4%B9%D5%86%20%D6%84%D5%A1%D6%80%D5%BF%D5%B8%D6%82%D5%B2%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8%20%D5%B0%D5%A1%D5%B6%D5%A4%D5%AB%D5%BA%D5%A5%D5%AC%20%D5%A5%D5%B6%20%D5%88%D6%82%D5%AF%D6%80%D5%A1%D5%AB%D5%B6%D5%A1%D5%B5%D5%AB%20%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%20%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B5%D5%B6%D6%84%D5%AB%20%D5%B6%D5%A5%D6%80%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D6%81%D5%B8%D6%82%D6%81%D5%AB%D5%B9%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%20%D5%B0%D5%A5%D5%BF/52/>

աշխատանքները, քննարկել առկա խնդիրները և առաջարկել լուծումներ ներկայումս միջազգային ասպարեզում մեծ կարևորություն վայելող նախաձեռնության՝ բաց տվյալների սկզբունքին համապատասխանող իրականացման սեփականատերերի ռեգիստրների ստեղծման գործընթացի բարելավման ուղղությամբ:⁴²

Հունիսի 17-19-ը Փարիզում կայացած ԱՃԹՆ-ի համաշխարհային համաժողովի ընթացքում հանդիպում-քննարկում է տեղի ունեցել Բաց կառավարման գործընկերության ներկայացուցիչների հետ՝ Հայաստանում ԻՍ բացահայտման գործընթացի կարգավիճակի և հեռանկարների թեմայով, ինչպես նաև ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը առաձին հանդիպում է ունեցել Միացյալ Թագավորության ԻՍ բացահայտման ռեգիստրի և քաղաքականության մշակման լիազոր պետական մարմինների պատասխանատուներ Թորի Մաքուել-Լայթի և Օլգա Բինիոնսի հետ, որի ժամանակ քննարկվել են ԻՍ բացահայտման ՄԹ գործընթացի ու ռեգիստրի տեխնիկական առանձնահատկությունների հետ կապված հարցեր, ինչպես նաև ՀՀ ԱՃԹՆ-ի պատվիրակության ուսումնական այցի կազմակերպման հնարավորությունները: Իրականացվել են քննարկումներ ԱՃԹՆ-ի գործընկեր միջազգային կազմակերպությունների, ոլորտի միջազգային փորձագետների հետ ԱՃԹՆ-ի նոր պահանջների իրականացմանը վերաբերող հարցերի շուրջ: Նորարարական էքսպոյի ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել նաև ԱՃԹՆ-ի անդամ-երկրների ներկայացուցիչների հետ:

Սեպտեմբերի 16-17-ը իրականացվել է ուսուցողական այց Միացյալ Թագավորություն: Ուսուցողական այցի հիմնական նպատակն էր ԻՍ բացահայտման ՄԹ-ի առաջավոր փորձի ուսումնասիրությունը (տես միջոցառում 19):

Միջոցառում 40. ԱՃԹՆ-ի անդամավճարի վճարում

Չորրորդ եռամսյակում ՀՀ վարչապետի աշխատակազմը կատարել է ԱՃԹՆ-ի անդամակցության 2019 թվականի տարեկան անդամավճարի վճարումը: Անդամավճարի վճարումը իրականացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից պետական բյուջեի միջոցներից:

ՆՊԱՏԱԿԸ	ԱՃԹՆ ստանդարտին համապատասխան ԱՃԹՆ-ի զեկույցի կազմում		
ՄԻԶՈՑԱՌՈՒՄ N 42. ՀՀ կառավարության 2018թ. Հունիսի 8-ի N666 որոշման մեջ փոփոխությունների և լրացումների կատարում, նախագծի հաստատում ԲԾԽ-ի կողմից և ներկայացում ՀՀ կառավարություն	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքը՝ ՀՀ կառավարության որոշում Վերջնաժամկետը՝ երկրորդ եռամսյակ, 2019թ.	Իրականացվել է հաշվետու ժամանակահատվածում՝ աշխատանքային ծրագրով հաստատված ժամկետից ուշացումով՝ երրորդ եռամսյակում:	ԲԾԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն

⁴² <https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2019/05/17/%D4%B2%D5%A5%D5%BC%D5%AC%D5%AB%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4%20%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D6%81%D5%A1%D5%BE%20%C2%AB%D4%B8%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%BD%D5%A5%D6%83%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BF%D5%A5%D6%80%D5%A5%D6%80%D5%AB%20%D5%A9%D5%A1%D6%83%D5%A1%D5%B6%D6%81%D5%AB%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8%C2%BB%20%D5%AD%D5%B8%D6%80%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D5%BE%20%D5%A5%D5%BE%D6%80%D5%B8%D5%BA%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%AE%D5%A1%D5%B7%D6%80%D5%BB%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%20%D6%84%D5%B6%D5%B6%D5%A1%D6%80%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4/61/>

		(Երկրորդ եռամսյակում ԲՀԽ-ի կողմից հաստատվել է կառավարության որոշման նախագիծը և ներկայացվել ՀՀ կառավարություն: Կառավարության որոշումն ընդունվել է երրորդ եռամսյակում)	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 43. ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի ներկայացման արդյունքում ստացված առաջարկությունների, բացահայտված թերությունների և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված բացերի քննարկում ԲՀԽ-ի կողմից՝ առաջարկությունների իրականացման մեխանիզմների որոշման և անհամապատասխանությունների պատճառների վերացման նպատակով	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքները՝ հանդիպում, առաջարկություններ, ԲՀԽ-ի նիստ Վերջնաժամկետը՝ առաջին եռամսյակ, 2019թ.	Իրականացվել է մասամբ Ընթացիկ	ԲՀԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, այլ շահագրգիռ մարմիններ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 44. ԱՃԹՆ-ի 2019թ. ազգային զեկույցը կազմող անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքները՝ Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի նախագիծ Վերջնաժամկետը՝ ապրիլ, 2019թ.	Իրականացվել է	ԲՀԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 45. Անկախ ադմինիստրատորի ընտրություն (մրցույթ և հաստատում)	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքները՝ Անկախ ադմինիստրատորի մրցույթի հայտարարություն, մրցույթ, անկախ ադմինիստրատորի հետ կքված պայմանագիր Վերջնաժամկետը՝ երկրորդ եռամսյակ, 2019թ.	Իրականացվել է հաշվետու ժամանակահատվածում՝ աշխատանքային ծրագրով հաստատված ժամկետից ուշացումով՝ չորրորդ եռամսյակում՝ պայմանավորված ծառայությունների գնման գործընթացի հետաձգմամբ: Մրցույթի ընթացքում անկախ ադմինիստրատոր է ընտրվել «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ-ն, որի հետ 2019 թվականի դեկտեմբերի 17-ին կնքվել է պայմանագիր:	ԲՀԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 46. Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. զեկույցի մշակում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքը՝ ԱՃԹՆ-ի զեկույց Վերջնաժամկետը՝ չորրորդ եռամսյակ, 2019թ.	Իրականացվել է մասամբ / ընթացիկ (Չորրորդ եռամսյակում մեկնարկել են Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. զեկույցի	Անկախ ադմինիստրատոր, ԲՀԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն

		մշակման աշխատանքները)	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 47. ԱՃԹՆ-ի 2020թ. զեկույցի նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում (անհրաժեշտության դեպքում)	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքը՝ տեխնիկական առաջադրանք Վերջնաժամկետը՝ 2019թ. չորրորդ եռամսյակ և 2020թ. առաջին եռամսյակ	Ընթացիկ 2019թ. չորրորդ եռամսյակում չի իրականացվել և նախատեսվում է իրականացնել 2020 թվականի առաջին եռամսյակում:	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 48. ԱՃԹՆ-ի 2020թ. զեկույցի նախնական ուսումնասիրություն (անհրաժեշտության դեպքում) և անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքը՝ պայմանագիր կազմակերպության հետ, նախնական ուսումնասիրություն, ԱՃԹՆ-ի 2020թ. զեկույցի անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի նախագիծ Վերջնաժամկետը՝ 2019թ. չորրորդ եռամսյակ և 2020թ. առաջին եռամսյակ	Ընթացիկ 2019թ. չորրորդ եռամսյակում չի իրականացվել և նախատեսվում է իրականացնել 2020 թվականի առաջին եռամսյակում:	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն

ՆՊԱՏԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջոցառում 42. ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N666 որոշման մեջ փոփոխությունների և լրացումների կատարում, նախագծի հաստատում ԲՇԽ-ի կողմից և ներկայացում ՀՀ կառավարություն

Իրականացվել են ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N 666 որոշման մեջ փոփոխությունների և լրացումների կատարելու կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքները: Մայիսի 13-ին Պետական եկամուտների կոմիտեում անցկացվել է հանդիպում՝ ՊԵԿ-ի ԱՃԹՆ-ի քարտուղարության և հաշվետու ընդերքօգտագործող ընկերությունների ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել են ներկայացված առաջարկությունները և ավարտին հասցվել որոշման նախագիծը: Նախագիծը՝ ապրիլի 16-ին տեղի ունեցած ԲՇԽ-ի նիստի ժամանակ ընդունված որոշումների հետ միասին տրամադրվել է հաշվետու մարմիններին:

Հուլիսի 11-ին կայացած ՀՀ կառավարության նիստում ընդունվել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 666-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 871-Ն որոշումը:⁴³ Մինչև 2019 թվականի օգոստոսի 1-ը ՀՀ կառավարությամբ սահմանված պետական մարմինները և մետաղական հանքաքար արդյունահանող բոլոր ընկերությունները ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացրել ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված հաշվետվությունները:

⁴³ <https://www.e-gov.am/gov-decrees/item/32181/>

Միջոցառում 43. ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի ներկայացման արդյունքում ստացված առաջարկությունների, բացահայտված թերությունների և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված բացերի քննարկում ԲՇԽ-ի կողմից՝ առաջարկությունների իրականացման մեծանիզմների որոշման և անհամապատասխանությունների պատճառների վերացման նպատակով

Առաջին եռամսյակում ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից առանձնացվել են մի շարք օրենսդրական և ինստիտուցիոնալ և իմպլեմենտացիոն բացեր, որոնք ներկայացվել են ԲՇԽ-ի նախագահին: Դրանց համապատասխան ընթացք է տրվել՝ հանձնարարականների տեսքով: Հաշվետվությունների ձևերի վերաբերյալ զեկույցում ներկայացված բոլոր առաջարկությունները հաշվի են առնվել ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N666 որոշման մեջ փոփոխությունների նախագծի մեջ:

Միջոցառում 44. ԱՃԹՆ-ի 2019թ. ազգային զեկույցը կազմող անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում

ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից մշակվել է ԱՃԹՆ-ի 2019թ. ազգային զեկույցը կազմող անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքը, շրջանառվել ԲՇԽ անդամների միջև և հաստատվել ԲՇԽ-ի՝ ապրիլի 16-ին տեղի ունեցած նիստում:⁴⁴

Միջոցառում 45. Անկախ ադմինիստրատորի ընտրություն (մրցույթ և հաստատում)

Անկախ ադմինիստրատորի ընտրությունն (մրցույթ և հաստատում) իրականացվել է նախատեսված ժամկետից շեղումով՝ պայմանավորված ծառայությունների գնման գործընթացի հետաձգմամբ: Երկրորդ եռամսյակում Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքը ներկայացվել է ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողով, որի 2019 թվականի հուլիսի 4-ին կայացած նիստին այն հաստատվել է, որից հետո ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպվել է ծառայությունների գնման գործընթաց և մրցույթի արդյունքում անկախ ադմինիստրատոր է ընտրվել «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ-ն, որի հետ 2019 թվականի դեկտեմբերի 17-ին կնքվել է համապատասխան պայմանագիր:

Միջոցառում 46. Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ-ի զեկույցի մշակում

Անկախ ադմինիստրատորի ծառայությունների գնման գործընթացի հետաձգմամբ պայմանավորված Հայաստանի ԱՃԹՆ-ի երկրորդ՝ 2019թ. հաշվետու տարվա զեկույցի մշակման աշխատանքները մեկնարկել են չորրորդ եռամսյակում՝ դեկտեմբերի 17-ին:

Միջոցառում 47. ԱՃԹՆ-ի 2020թ. զեկույցի նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում (անհրաժեշտության դեպքում)

Միջոցառում 48. ԱՃԹՆ-ի 2020թ. զեկույցի նախնական ուսումնասիրություն (անհրաժեշտության դեպքում) և անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակում

⁴⁴ <https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents>

Հաշվետու ժանակահատվածում չի իրականացվել և նախատեսվում է իրականացնել 2020 թվականի առաջին եռամսյակում:

ՆՊԱՏԱԿԸ	ԱՃԹՆ ստանդարտի ներդրման շրջանակի ընդլայնման նպատակով Հայաստանի Հանրապետության իրավական դաշտի համապատասխանեցում		
ՄԻՋՈՑԱԴՌՈՒՄ N 51. Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված իրավական բացերի վերհանման և նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի կազմում և հաստատում	Արդյունքը և վերջնաժամկետը <i>Արդյունքները՝</i> Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման մասին ԲՇԽ-ի որոշում, Տեխնիկական առաջադրանք <i>Վերջնաժամկետը՝</i> Երկրորդ եռամսյակ, 2019թ.	Իրականացման կարգավիճակը Չի իրականացվել: Նախատեսվում է իրականացնել 2020թ. Հաշվետու ժամանակահատվածում սկսվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված իրավական բացերի վերհանման և նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակման աշխատանքները և որոշվել է այն ընդգրկել ԱՃԹՆ-ի 3-րդ՝ 2019 հաշվետու տարվա ազգային զեկույցի տեխնիկական առաջադրանքում: Տե՛ս նաև միջոցառում 48:	Պատասխանատուները ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ
ՄԻՋՈՑԱԴՌՈՒՄ N 52. Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված իրավական բացերի վերհանման և նախնական ուսումնասիրության իրականացում	Արդյունքը և վերջնաժամկետը <i>Արդյունքները՝</i> նախնական ուսումնասիրություն, իրավական ակտերի նախագծում <i>Վերջնաժամկետը՝</i> Երրորդ եռամսյակ, 2019թ.	Իրականացման կարգավիճակը Չի իրականացվել: Տե՛ս 48-րդ և 51-րդ միջոցառումները:	Պատասխանատուները ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ընտրված կազմակերպություն, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ
ՄԻՋՈՑԱԴՌՈՒՄ N 53. Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված քննարկումների շահագրգիռ կողմերի հետ (ընկերություններ, պետական մարմինների ներկայացուցիչներ, այլ մասնակիցներ)	Արդյունքը և վերջնաժամկետը <i>Արդյունքը՝</i> հանդիպում, քննարկում <i>Վերջնաժամկետը՝</i> Երրորդ եռամսյակ, 2019թ.	Իրականացման կարգավիճակը Ընթացիկ Տե՛ս 48-րդ և 51-րդ միջոցառումները	Պատասխանատուները ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, պետական մարմին, ընտրված կազմակերպություն, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ
ՄԻՋՈՑԱԴՌՈՒՄ N 54. Ուսումնասիրության և իրավական ակտերի հաստատում ԲՇԽ-ի	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները

կողմից և իրավական ակտերի շրջանառված տարբերակի ներկայացում ՀՀ կառավարություն	Արդյունքը՝ իրավական ակտերի նախագծեր՝ Վերջնաժամկետը՝ չորրորդ եռամսյակ 2019, առաջին եռամսյակ, 2020	Չի իրականացվել: Տե՛ս 48-րդ և 51-րդ միջոցառումները:	ԲԾԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, համապատասխան նախարարություն
---	---	--	---

ՆՊԱՏԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջոցառում 51. Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված իրավական բացերի վերհանման և նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի կազմում

Միջոցառում 52. Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված իրավական բացերի վերհանման և նախնական ուսումնասիրության իրականացում

Հաշվի առնելով, որ Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020 թվականի զեկույցը կազմելու համար Անկախ ադմինիստրատորի կողմից նախատեսվում է նաև մշակել հաջորդ զեկույցի (զեկույցների) համար նախնական ուսումնասիրությունը՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված իրավական բացերի վերհանման և նախնական ուսումնասիրության ԲԾԽ-ի կողմից քննարկված տեխնիկական առաջադրանքի աշխատանքները կներառվեն ԱՃԹՆ-ի 2020 թվականի զեկույցի տեխնիկական առաջադրանքում:

Տե՛ս Միջոցառում 48:

Միջոցառում 53. Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ (ընկերություններ, պետական մարմինների ներկայացուցիչներ, այլ մասնակիցներ)

Երկրորդ եռամսյակում՝ ապրիլի 16-ին կայացած ԱՃԹՆ ԲԾԽ-ի նիստի ժամանակ քննարկվեցին ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման համար Հայաստանի Հանրապետությունում մետաղական հանքաքարի և խտանյութի վերամշակմամբ զբաղվող կազմակերպություններին (այսուհետև՝ ձուլարաններ), հանքային ջրեր արդյունահանող տնտեսվարող սուբյեկտներին, ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտը ԱՃԹՆ-ի շրջանակում հաշվետու դարձնելու նպատակահարմարության ուսումնասիրության անհրաժեշտությունը: Որոշվեց հանքային և ստորերկրյա քաղցրահամ ջրերի պարագայում՝ նախնական ուսումնասիրությունում ընդգրկել միայն հանքային ջրերը, որպեսզի հնարավոր լինի կառավարել այդ ամբողջ ծավալը և ռեսուրսներն արդյունավետ օգտագործել: Իսկ նախքան նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքը ԲԾԽ-ի կողմից հաստատելը՝ հանքային ջրերի և ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտները նախնական ուսումնասիրության շրջանակում ներառելու վերաբերյալ կազմակերպել ԲԾԽ-ի աշխատանքային քննարկում: Այդ նպատակով Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից ԱՃԹՆ-ի քարտուղարությանն է տրամադրվել հանքային ջրերի և պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն ունեցող տնտեսվարող սուբյեկտների ցանկը: ՊԵԿ-ին ուղարկվել է հանձնարարական՝ 2018 հաշվետու տարվա համար հանքային ջրերի և ոչ մետաղական հանքաքարի արդյունահանման թույլտվություն ունեցող իրավաբանական անձանց կողմից համապատասխան հարկերի և վճարումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրելու վերաբերյալ:

Երրորդ եռամսյակում, համաձայն ապրիլի 16-ի ԲԾԽ-ի նիստի ժամանակ ընդունված որոշման, ԱՃԹՆ-ի 2020 թվականի զեկույցի նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի նախագիծը քննարկելիս կայացած որոշմանը՝ նախքան տեխնիկական առաջադրանքը հաստատելն աշխատանքային կարգով քննարկել 2020 թվականին ԱՃԹՆ-ի ընդգրկման շրջանակի ընդլայնմանն առնչվող հարցերը՝ օգոստոսի 27-ին տեղի ունեցավ աշխատանքային

հանդիպում շահագրգիռ կողմերի հետ, որի ժամանակ քննարկվեցին մասնավորապես հետևյալ հարցերը՝

- մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող ձուլարանների ֆիսկալ քաղաքականությունը, հարկերի հաշվարկման կարգն ու տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչներում գործունեության դասակարգումը, Հայաստանում գործունեություն ծավալող ձուլարաններից մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող ձուլարաններին ըստ գործունեության տեսակների տարանջատելու և ԱՃԹՆ-ի շրջանակում հաշվետու դարձնելու հարցերը,
- ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման ոլորտը ԱՃԹՆ-ի շրջանակում ընդգրկելու և ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունք ունեցող կազմակերպությունները հաշվետու դարձնելու նպատակահարմարությունը,
- ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ոլորտից պետության եկամուտների չափը և ոլորտը ԱՃԹՆ-ի շրջանակում դիտարկելու հարցը:

Նախքան հանդիպումը ՊԵԿ-ի կողմից տրամադրվել են ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունք ունեցող կազմակերպությունների և ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունք ունեցող կազմակերպությունների կողմից 2018 թվականի համար պետական բյուջե վճարված հարկերի և վճարումների մասին տեղեկատվություն:

2020թ. ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի նախագիծը ներկայացվեց սեպտեմբերի 5-ին կայացած ԲՇԽ-ի նիստին, որի ընթացքում ԲՇԽ-ն, հաշվի առնելով նաև ֆինանսական միջոցների սահմանափակ լինելու հանգամանքը, որոշում կայացրեց առաջիկա նախնական ուսումնասիրության շրջանակում ուսումնասիրել ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման, (ներառյալ հանքաքարի և խտանյութի առք ու վաճառքով զբաղվող տեղական կազմակերպությունների գործունեությունը) ոլորտները, իսկ հաջորդ տարի դիտարկել ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ոլորտը:⁴⁵ Համաձայն նիստի քննարկումների և ԲՇԽ-ի որոշումների՝ ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից կատարվում են համապատասխան փոփոխություններ նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքում, որից հետո տեխնիկական առաջադրանքի լրամշակված տարբերակը կներկայացվի ԲՇԽ-ին՝ հաստատելու համար:

Միջոցառում 54. Ուսումնասիրության և իրավական ակտերի հաստատում ԲՇԽ-ի կողմից և իրավական ակտերի շրջանառված տարբերակի ներկայացում ՀՀ կառավարություն

Հաշվետու ժամանակահատվածում չի իրականացվել:

ՆՊԱՏԱԿԸ	Պատասխանատու հանքարդյունաբերության գործելառճի ներդրում		
ՄԻՋՈՑԱԴՐՈՒՄ N 55. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելառճի	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները

⁴⁵ https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_05_09_2019.pdf

ներդրման աջակցության ճանապարհային քարտեզի գործողությունների իրականացում	Արդյունքը՝ ճանապարհային քարտեզի միջոցառումներ Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Ընթացիկ	ԲՀԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՀԽ-ի աշխատանքային խումբ, պետական մարմիններ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 56. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաձևի ներդրման աջակցության աշխատանքային խմբի հանդիպումներ	Արդյունքը և վերջնաժամկետը Արդյունքը՝ հանդիպումներ Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Իրականացման կարգավիճակը Ընթացիկ	Պատասխանատուները ԲՀԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՀԽ-ի աշխատանքային խումբ, պետական մարմիններ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 57. Պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ներդրման ճանապարհային քարտեզի լրամշակում	Արդյունքը և վերջնաժամկետը Արդյունքը՝ լրամշակված ճանապարհային քարտեզ Վերջնաժամկետը՝ չորրորդ եռամսյակ, 2019թ.	Իրականացման կարգավիճակը Զի իրականացվել	Պատասխանատուները ԲՀԽ-ի աշխատանքային խումբ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն

ՆՊԱՏԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջոցառում 55. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաձևի ներդրման աջակցության ճանապարհային քարտեզի գործողությունների իրականացում

Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել են Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաձևի ներդրման աջակցության ճանապարհային քարտեզի 1-ին միջոցառման՝ «Հայաստանյան ԱՃԹՆ ԲՀԽ-ի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ հայեցակարգային փաստաթղթի մշակման աշխատանքները: 2019 թվականի սեպտեմբերի 5-ին տեղի ունեցած ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի նիստի ընթացքում ՀՀ ԱՃԹՆ ԲՀԽ-ն հաստատել է «Հայաստանյան ԱՃԹՆ ԲՀԽ-ի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթուղթը:

Համաձայն Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաձևի ներդրման աջակցության ճանապարհային քարտեզի 2-րդ միջոցառման՝ «Հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական վերլուծության աշխատանքներին մասնակցություն»/ մարտի 27-ին կարծիքների և առաջարկությունների տրամադրման նպատակով ՊՀ աշխատանքային խմբին էլեկտրոնային եղանակով ուղարկվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ EV Consulting կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի ընդերքի ոլորտի տնտեսական վերլուծությունը և դրա ազդեցությունը կայուն զարգացման վրա» ուսումնասիրության ամփոփ նկարագիրը, որտեղ ներկայացված են մեթոդաբանությունն ու իրականացվելիք աշխատանքները, այնուհետև ապրիլի 15-ին՝ ամփոփ նկարագրի (առաջին արդյունք) վերանայված տարբերակը, իսկ երրորդ եռամսյակում՝ հուլիսի 11-ին, «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական վերլուծություն և ոլորտի ազդեցությունը կայուն զարգացման վրա» ուսումնասիրության նախագիծը:

Համաձայն Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաձևի ներդրման աջակցության ճանապարհային

քարտեզի 3-րդ միջոցառման՝ «մասնակցություն Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական և առողջապահական գնահատման աշխատանքներին՝ ոլորտի քաղաքականության մշակմանը նպաստելու նպատակով», չորրորդ եռամսյակում ՊՀ աշխատանքային խմբին առաջարկների և դիտողությունների ներկայացման համար տրամադրվել է DMT GmbH & Co.KG-ի և Ֆինլանդիայի երկրաբանական հետազոտական կենտրոնի (GTK) համատեղ ձեռնարկության (JVDGA) կողմից կազմվող «Շրջակա միջավայրի և առողջության վրա ազդեցության գնահատում» ուսումնասիրության 1A (հոկտեմբերի 16-ին) և 1B (դեկտեմբերի 6-ին) մեկնարկային հաշվետվությունները:

Միջոցառում 56. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրման աջակցության աշխատանքային խմբի հանդիպումներ

ԱՃԹՆ-ի պատասխանատու հանքարդյունաբերության հարցերով զբաղվող աշխատանքային խմբի ղեկավար, ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ, Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Իրինա Ղափլանյանի գլխավորությամբ «Հայաստանյան ԱՃԹՆ ԲՇԽ-ի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթղթի մշակման շուրջ տեղի է ունեցել 6 հանդիպում՝ մարտի 19-ին և մարտի 26-ին, որոնց ընթացքում մշակվել են փաստաթղթի հետևյալ բովանդակային մասերը՝ նախաբան, հայեցակարգային փաստաթղթի մշակման գործընթացը և նպատակը, պատասխանատու հանքարդյունաբերության սահմանումը կամ շրջանակը, ապրիլի 12-ին և մայիսի 31-ին, որոնց ընթացքում քննարկվել են պատասխանատու հանքարդյունաբերության հիմնական ուղղություններն ու Հայաստանի համար առաջնահերթությունները, այնուհետև հունիսի 25-ին և հուլիսի 26-ին, որոնց ընթացքում քննարկվել են ՊՀ աշխատանքային խմբի անդամների կողմից ներկայացված հիմնական ուղղությունները և ՊՀ աշխատանքային խմբի կողմից սահմանվել են ՊՀ հինգ հիմնական ուղղություններ՝ պետության բարեվարքություն, գործարար միջավայրի բարեվարքություն, դրական ժառանգության ապահովման պլանավորում, սոցիալական պատասխանատվություն և բնապահպանական պատասխանատվություն, ու յուրաքանչյուր ուղղության համար ենթաուղղություններ/միջոցառումներ, որոնցից ՊՀ աշխատանքային խմբի կողմից քվեարկությամբ ընտրվել են առաջնահերթությունները Հայաստանի համար:⁴⁶

Հունիսի 27-ին տեղի է ունեցել հանդիպում-քննարկում ԲՇԽ-ի, ՊՀ աշխատանքային խմբի անդամների և ուսումնասիրությունը կատարող EV Consulting կազմակերպության ներկայացուցիչների հետ՝ «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական վերլուծություն և ոլորտի ազդեցությունը կայուն զարգացման վրա» ուսումնասիրության կազմման շուրջ կարծիքների և առաջարկությունների քննարկման նպատակով:

Հուլիսի 25-ին տեղի է ունեցել աշխատանքային խմբի հանդիպում-քննարկում ուսումնասիրությունը կազմող EV Consulting ընկերության ներկայացուցիչների հետ «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական վերլուծություն և ոլորտի ազդեցությունը կայուն զարգացման վրա» ուսումնասիրության նախագծի վերաբերյալ ներկայացված դիտարկումների շուրջ:

Հոկտեմբերի 17-ին հանդիպում-քննարկում է տեղի ունեցել Շրջակա միջավայրի և առողջության վրա ազդեցության գնահատման ուսումնասիրության աշխատանքների խմբի ղեկավար Ջեֆ Սմելի հետ՝ «Շրջակա միջավայրի և առողջության վրա ազդեցության գնահատում» ուսումնասիրության 1A մեկնարկային հաշվետվության շուրջ:

Հուլիսի 26-ին ԲՇԽ-ի անդամները և քարտուղարության ներկայացուցիչները հանդիպում են ունեցել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հանքերի փակման և տնտեսական վերականգնման հետազոտություն Կենտրոնական Ասիայում և Կովկասում» ծրագրի շրջանակում հետազոտություն իրականացվող SRK

⁴⁶https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/MSG%20Procedures/Responsible_Mining_Roadmap_ARM.pdf

Consulting ընկերության ներկայացուցիչների հետ և քննարկել առկա խնդիրները և ԲՇԽ-ի տեսակետները դրանց լուծման վերաբերյալ:

Միջոցառում 57. Պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ներդրման ճանապարհային քարտեզի մշակում
Չի իրականացվել:

ՆՊԱՏԱԿԸ		ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի և շահագրգիռ մարմինների կարողությունների հզորացում, ԱՃԹՆ-ի մեյնսթրիմինգ, տվյալների համակարգային բացահայտման խրախուսում	
ՄԻԶՈՑԱԼՈՒԻՄ N 58. Հրապարակային հաշվետվություններ ներկայացնող պետական մարմինների և ընդերքօգտագործողների ներկայացուցիչների ուսուցում հրապարակային հաշվետվությունների ներկայացման առցանց հարթակը օգտագործելու վերաբերյալ	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքը՝ ուսուցում Վերջնաժամկետը՝ Երկրորդ եռամսյակ, 2019	Չի իրականացվել հաշվետու ժամանակահատվածում՝ աշխատանքային ծրագրով հաստատված ժամկետում: Առցանց համակարգ հաշվետվությունները մուտքագրվել են 2020թ. հունվարին, հաշվետվություններ կայացնողներին տրամադրվել է խորհրդատվություն:	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ընտրված կազմակերպություն, անկախ աուդիտոր
ՄԻԶՈՑԱԼՈՒԻՄ N 59. Բաց տվյալների սկզբունքին համապատասխանող տվյալների համակարգային բացահայտման իրագործելիության ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում, կատարող կազմակերպության ընտրություն	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքը՝ տեխնիկական առաջադրանք, պայմանագիր Վերջնաժամկետը՝ Երկրորդ եռամսյակ, 2019	Իրականացվել է հաշվետու ժամանակահատվածում՝ աշխատանքային ծրագրով հաստատված ժամկետից ուշացումով: Երկրորդ եռամսյակում մշակվել է տեխնիկական առաջադրանքի նախագիծը, որի հաստատումից հետո՝ չորրորդ եռամսյակում պայմանագիր է կնքվել ուսումնասիրություն կատարող Խորհրդատուի հետ:	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՄԻԶՈՑԱԼՈՒԻՄ N 60. Բաց տվյալների սկզբունքին համապատասխանող տվյալների համակարգային բացահայտման իրագործելիության ուսումնասիրություն, տվյալների համակարգային բացահայտման քարտեզագրում ԱՃԹՆ-ի գործիքակազմով (toolkit), տվյալների հրապարակման գործընթացի ինստիտուցիոնալիզացման ճանապարհային քարտեզի մշակում և	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքը՝ ուսումնասիրություն, ԱՃԹՆ-ի գործիքակազմով քարտեզագրում, ճանապարհային քարտեզ /գործողությունների ծրագիր	Իրականացվել է մասամբ / Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ընտրված կազմակերպություն

հաստատում	Վերջնաժամկետը՝ Երրորդ եռամսյակ, 2019թ.		
ՄԻՋՈՑԱԴՈՒՄ N 61. Տվյալների համակարգային բացահայտման գործընթացի ինստիտուցիոնալիզացման ճանապարհային քարտեզի իրականացում	Արդյունքը և վերջնաժամկետը	Իրականացման կարգավիճակը	Պատասխանատուները
	Արդյունքը՝ ճանապարհային քարտեզի/գործողությունների ծրագրի միջոցառումներ Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Չի իրականացվել Տե՛ս Միջոցառում 60	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն
ՆԱԾԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ			
<i>Միջոցառում 58. Հրապարակային հաշվետվություններ ներկայացնող պետական մարմինների և ընդերքօգտագործողների ներկայացուցիչների ուսուցում հրապարակային հաշվետվությունների ներկայացման առցանց հարթակն օգտագործելու վերաբերյալ</i> Հրապարակային հաշվետվությունների ներկայացման առցանց հարթակն օգտագործելու վերաբերյալ հրապարակային հաշվետվություններ ներկայացնող պետական մարմինների և ընդերքօգտագործողների ներկայացուցիչների ուսուցումը հետաձգվել է՝ հուլիսի 11-ին ՀՀ կառավարության «ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 666-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման համաձայն առցանց հարթակում հաշվետվությունների ձևաչափերի փոփոխությունների իրականացման և Անկախ ադմինիստրատորի ընտրության հետաձգման պատճառով (Տե՛ս Միջոցառում 3 և 45): Սակայն հաշվետու մարմիններին տրամադրվել են լրամշակված հրապարակային հաշվետվությունների ձևերը (xls ֆայլ) և մինչև օգոստոսի 1-ը հաշվետվությունների xls ֆայլերը և դրանց pdf տարբերակները ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ և eiti@gov.am հասցեին՝ կից տրամադրելով նաև հրապարակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների ճշգրտությունը և հավաստիությունը հավաստող գրություն՝ ստորագրված համապատասխան պետական մարմնի կամ ընդերքօգտագործող ընկերության ղեկավարի ստորագրությամբ: <i>Միջոցառում 59. Բաց տվյալների սկզբունքին համապատասխանող տվյալների համակարգային բացահայտման իրագործելիության ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում, կատարող կազմակերպության ընտրություն</i> Չորրորդ եռամսյակում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ՝ «Աջակցություն գլոբալ ԱՃԹՆ-ի իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակում իրականացվել է ԱՃԹՆ-ի տվյալների համակարգային բացահայտման (mainstreaming-ի) իրագործելիության ուսումնասիրության կազմման համար Խորհրդատուի ծառայությունների գնման գործընթացը, կնքվել է պայմանագիր Խորհրդատուի հետ: <i>Միջոցառում 60. Բաց տվյալների սկզբունքին համապատասխանող տվյալների համակարգային բացահայտման իրագործելիության ուսումնասիրություն, տվյալների համակարգային բացահայտման քարտեզագրում ԱՃԹՆ-ի գործիքակազմով (toolkit), տվյալների հրապարակման գործընթացի ինստիտուցիոնալիզացման ճանապարհային քարտեզի մշակում և հաստատում</i> <i>Միջոցառում 61. Տվյալների համակարգային բացահայտման գործընթացի ինստիտուցիոնալիզացման ճանապարհային</i>			

քարտեզի իրականացում

Երկրորդ եռամսյակում ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից մշակվել է Բաց տվյալների սկզբունքին համապատասխանող տվյալների համակարգային բացահայտման իրագործելիության ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքը, որը տրամադրվել է ԲՇԽ-ի անդամներին կարծիքի: ԲՇԽ-ի անդամների միջև շրջանառվելուց հետո ԲՇԽ-ի կողմից այն հաստատվել է երրորդ եռամսյակում, ու սկսվել է ծառայությունների գնման գործընթացը, որն իրականացվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ՝ «Աջակցություն գլոբալ ԱՃԹՆ-ի իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակում:

Չորրորդ եռամսյակում ԱՃԹՆ-ի տվյալների համակարգային իրագործելիության ուսումնասիրությունը կազմող Խորհրդատուի կողմից տրամադրվել է ուսումնասիրության նախագիծը, որի մեջ ներառված են ԱՃԹՆ-ի գործիքակազմով տվյալների համակարգային բացահայտման քարտեզագրումը և տվյալների հրապարակման գործընթացի ճանապարհային քարտեզը/գործողությունների ծրագիրը:

2.2. ԱՃԹՆ-ի 2019թ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՃԹՆ-Ի 2019
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**



30.01.2019

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՃԹՆ-Ի
2016-2017թթ.
ԱՌԱՋԻՆ ՁԵԿՈՒՅՑ**



30.01.2019

**ԱՌԱՋԻՆ ՁԵԿՈՒՅՑԻ
ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ
ՀԱՄԱԺՈՂՈՎ**



**ԲԱՑ
ՏՎՅԱԼՆԵՐ**

**ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԱԾ
REPORTS.EITI.AM
ՀԱՐԹԱԿ**



23.04.2019

**ԻՐԱԿԱՆ
ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԻ
ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ**



**2019 EITI PARIS
GLOBAL
CONFERENCE**

**ԱՃԹՆ-Ի
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՄՐՑԱՆԱԿ**



**ԱՃԹՆ-Ի
ԱՌԱՋԻՆ
ՎԱԿԵՐԱՑՄԱՆ
ՄԵԿՆԱՐԿ**



**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱ-
ԲԵՐՈՒԹՅԱՆ
ԲԾԽ-Ի
ՀԱՅԵՑԱԿԱՐԳ**

Նպատակ 1.

Մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովում. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ մատչելի, ժամանակին և ամբողջական տեղեկատվության առկայություն

Արդյունքներ.

- ✓ ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի կատարելագործված տարբերակը, որը օգտագործողներին ժամանակին տրամադրում է մատչելի և ամբողջական տեղեկատվություն՝ « բաց տվյալների» սկզբունքով,
- ✓ ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի կատարելագործված տարբերակը, որը օգտագործողներին տրամադրում է տվյալների բազաներ (2016-2017թթ-ի համար) և դրանց վերլուծության նոր գործիքներ,
- ✓ Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ հետևյալ տեղեկատվության հրապարակային հասանելիությունը ներքոհիշյալ միջոցներով՝
 - ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի, զեկույցի սեղմագրի և այլ տեղեկատվական թերթիկների մատչելի լեզվով շարադրումը և տպագրում,
 - ԱՃԹՆ-ի հայաստանյան կայքում ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի, սեղմագրի, ԱՃԹՆ-ի տարեկան և եռամսյակային հաշվետվությունների, իրավական ակտերի, հայեցակարգային փաստաթղթերի, ԲՇԽ-ի նիստերի արձանագրությունների և այլ նորությունների հրապարակում,
 - ԱՃԹՆ-ի հայաստանյան կայքի, սոցիալական ցանցերի (YouTube, Twitter, facebook և այլն), Լոռիի ու Սյունիքի մարզային հեռուստաալիքների, ԱՃԹՆ-ի 1-ին զեկույցին նվիրված կոնֆերանսի միջոցով ԱՃԹՆ-ի և ԱՃԹՆ-ի առաջին զեկույցով ներկայացվող տեղեկատվության, ինչպես նաև ԻՍ հայտարարագրում ներկայացվող տվյալների վերաբերյալ սոցիալական գովազդի, լուսաբանումների, տեսահոլովակների և ինֆոգրաֆիկ պատկերների տարածում,
- ✓ ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկվածության աճ հետևյալ միջոցառումների շնորհիվ.
 - հանդիպումներ Երևանի պետական համալսարանում, Գեղարքունիքի, Լոռու և Սյունիքի մարզերում, այլ ազդակիր համայնքներում, քննարկումներ և աշխատանքային հանդիպումներ՝ հանրային լայն խմբակցությունների և շահառուների հետ,
 - «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի օգնությամբ ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվական/ճանաչողական նյութերի, կրթական տեսանյութերի պատրաստումը և տարածում,

- ԲՇԽ-ի, ՔՀԿ-ների, ՔԵԿ-ների, տեղական խմբերի, ակտիվիստների և այլ թիրախային խմբերի համար կազմակերպված դասընթացներ:

Ազդեցությունը

Իրականացված աշխատանքների շնորհիվ ապահովվել է մետաղական հանքարդյունահանման ոլորտում տեղեկատվության համակարգային բացահայտման և թափանցիկության ապահովման գործընթացների կայունությունը, դրվել են առաջիկա տարիների համակարգված բացահայտման հիմքերը: Հանրային իրազեկվածության աճը նպաստել է իրազեկ երկխոսությունների մշակույթի ձևավորմանը: ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջների համապատասխանող համակողմանի և ամբողջական բաց տվյալների առկայությունը, ԱՃԹՆ-ի զեկույցի և առցանց գործիքների ու հարթակների միջոցով տվյալների համակարգային բացահայտումն ապահովել է ոլորտի ֆինանսական, ինստիտուցիոնալ և իրավական թափանցիկությունը:

Նպատակ 2.

Հաշվետվողականության և հանրային վերահսկողության բարձրացում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում

2.1. Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծում և իրական սեփականատերերի մասին տեղեկատվության հանրայնացում

Արդյունքները.

- ✓ ԻՍ բացահայտման հայտարարագրերի մշակման և ներկայացման միջազգային փորձի ուսումնասիրում, ակտիվ միջազգային համագործակցություն,
- ✓ 2019թ. ապրիլի 23-ին մետաղական հանքարդյունաբերության ոլորտի կազմակերպությունների ԻՍ բացահայտման գործընթացը կարգավորող օրենսդրական փաթեթի ընդունումը ԱԺ-ի կողմից,
- ✓ 2019թ. նոյեմբերի 13-ին ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում կատարված լրացումը, ըստ որի ԻՍ հայտարարագրի կամ ԻՍ վերաբերյալ փոփոխված տեղեկությունների վերաբերյալ քաղվածք ներկայացնելու պարտավորություն ունեցող իրավաբանական անձանց դեպքում ԻՍ հայտարարագիր լրացնելիս ԻՍ են համարվում նաև տվյալ ընկերության կառավարման միանձնյա և կոլեգիալ մարմինների (բաժնետերերի ժողովի, խորհրդի եւ գործադիր մարմնի) անդամ ֆիզիկական անձինք, և ԻՍ մասով օրենսդրությամբ սահմանված իրավական կարգավորումները տարածվում են նրանց վրա,
- ✓ ԻՍ բացահայտման ենթաօրենսդրական ակտերի նախագծերի փաթեթի մշակման ընթացք,
- ✓ ԻՍ բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման համար տեխնիկական առաջադրանքի մշակումը և դրա հիման վրա համապատասխան ծառայության գնման գործընթացի մեկնարկ:

Ազդեցությունը

Ապահովվել է մետաղական հանքարդյունաբերության ոլորտի կազմակերպությունների ԻՍ բացահայտման գործընթացի կայունությունը, շարունակականությունը, ԻՍ բացահայտման հայտարարագրերի մշակման ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, միջազգային համագործակցության ընդլայնումը: Բացի դրանից, վերը նշված աշխատանքների թափանցիկությունը նպաստել է աշխատանքների հանրային վերահսկողության մեծացմանը, դրանում ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի շրջանակից դուրս՝ լրագրողների, հետաքրքրված շահագրգիռ կողմերի, քաղաքացիական հասարակության լայն շերտերի շրջանում քննարկումների անցկացմանը:

2.2. Հայաստանի ԱՃԹՆ թեկնածության / անդամակցության կարգավիճակի ապահովում

Արդյունքները

- ✓ ԱՃԹՆ-ի խորհրդի 42-րդ, 43-րդ և 44-րդ նիստերին և կոնֆերանսներին, Լավ կառավարման ֆորումի ներքո «Կոռուպցիայի դեմ պայքարի ինովացիոն մոտեցումների քննարկում» թեմայով համաժողովին ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի, ԱՃԹՆ-ի քարտուղարության և շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների մասնակցությունը,
- ✓ Հայաստանի ԱՃԹՆ-ի՝ միջազգային վավերացման գործընթացին նախապատրաստումը՝ նախավավերացման հարցաթերթի նախնական ստուգումը և վերհանված բացերի լրացումը, նախավավերացման հարցաթերթիկի լրացումը ու տրամադրումը ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն,
- ✓ 2019թ. սեպտեմբերին վավերացման գործընթացի մեկնարկը, նոյեմբերի 4-8-ը ԱՃԹՆ-ի միջազգային վավերացման աշխատանքային խմբի՝ երևանյան այցի կազմակերպումը,
- ✓ ԲՇԽ-ի 3 նիստերը, ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի մի շարք հանդիպումները,
- ✓ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության նոր անդամների ընտրությունը և նոր անդամների ներկայացումը,
- ✓ ԲՇԽ-ի աշխատակարգի փոփոխությունները՝ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության առաջարկների ներառմամբ,
- ✓ Գործընկեր և դոնոր կազմակերպությունների՝ Համաշխարհային բանկի և Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերության (GIZ) հետ շարունակական աշխատանքային համագործակցությունը,
- ✓ Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքների սահուն աշխատանքը,
- ✓ ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից կազմված և ԲՇԽ-ի կողմից հաստատված Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018թ. աշխատանքային ծրագրի կատարողականը, ՀՀ ԱՃԹՆ-ի 2018 տարեկան հաշվետվությունը, եռամսյակային հաշվետվությունները,
- ✓ ԱՃԹՆ-ի հիմնական փաստաթղթերի հայերեն և անգլերեն թարգմանված տարբերակների առկայությունը,

- ✓ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի այլ անդամ երկրների հետ գրագրության, հանդիպումների, կոնֆերա-զանգերի միջոցով իրականացված համագործակցությունը,
- ✓ ԱՃԹՆ-ի անդամավճարի վճարումը:

Ազդեցությունը

ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջների և ստանդարտի պահանջները գերազանցող հանձնառությունների իրականացման շնորհիվ ապահովվել է մետաղական հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկությունը, ինչպես նաև հաշվետվողականությունը՝ հաշվետու մարմինների և ընկերությունների կողմից տվյալների համակարգային հրապարակման միջոցով: Կայացել է հանքարդյունաբերության ոլորտում բազմաշահառու կառավարման արդյունավետ հարթակը՝ խմբակցությունների իրավահավասար և լիարժեք մասնակցությամբ: Ուժեղացել է Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջների կատարումը:

2.3. ԱՃԹՆ ստանդարտին համապատասխան ԱՃԹՆ-ի զեկույցի կազմում

Արդյունքները.

- ✓ ԱՃԹՆ-ի 2016-2017թթ. առաջին ազգային զեկույց,
- ✓ ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի ներկայացման արդյունքում ստացված առաջարկությունների, բացահայտված թերությունների և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված բացերի քննարկումը ԲՇԽ-ի կողմից: ԲՇԽ-ի նախագահի պաշտոնակատար ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի կողմից հանձնարարականների հղում համապատասխան լիազոր պետական մարմիններին՝ համայնքների տարածքներում մետաղական հանքաքար արդյունահանելու իրավունք ունեցող իրավաբանական անձանց չգրանցված անշարժ գույքի վերաբերյալ տեղեկանք ներկայացնելու մասին՝ ըստ ընկերությունների և համայնքների, ինչպես նաև ընդերքօգտագոծողների կողմից շրջակա միջավայրի պահպանության համար հատկացվող գումարների մասով առկա ապառքի չափի և սահմանված ժամկետում դրանք վճարելու վերաբերյալ: Լիազոր մարմինները ապահովել են դրանց կատարումը՝ սահմանված կարգով:
- ✓ ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N666 որոշման մեջ փոփոխությունների և լրացումների նախագծի մշակումը, դրա հաստատումը ԲՇԽ-ի կողմից և ՀՀ կառավարության կողմից ընդունումը,
- ✓ ԱՃԹՆ-ի՝ 2019թ-ի հունիսի 17-19-ը Փարիզում կայացած համաշխարհային համաժողովին Հայաստանին շնորհված ԱՃԹՆ-ի նախագահության մրցանակը
- ✓ ԱՃԹՆ-ի երկրորդ՝ 2018 հաշվետու տարվա Ազգային զեկույցի կազմման համար մշակված անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի հիման վրա Անկախ ադմինիստրատորի մրցույթի հայտարարությունը, մրցույթի արդյունքում ընտրված անկախ ադմինիստրատորի հետ կնքված պայմանագիրը և աշխատանքների մեկնարկը:

Ազդեցությունը

Մետաղական հանքարդյունահանման ոլորտի վերաբերյալ հրապարակված աննախադեպ և մեծ ծավալի տեղեկատվությունը հնարավորություն է ընձեռնել կատարել փաստարկված վերլուծություններ և ընդունել համապատասխան կառավարչական որոշումներ: ԱՃԹՆ-ի միջազգային համայնքի կողմից բարձր գնահատականի արժանացած Հայաստանի փորձը խթան է հանդիսացել ամրապնդելու ԱՃԹՆ-ի ներդրման ընտրված ռազմավարությունը և շարունակելու ջանքերը՝ ստանդարտի հետ առավելագույն համապատասխանության ուղղությամբ:

Նպատակ 3.

Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնում, ՀՀ իրավական դաշտի ուսումնասիրություն իրավական անհամապատասխանությունների և բացերի բացահայտման նպատակով. ԱՃԹՆ ստանդարտի ներդրման շրջանակի ընդլայնման նպատակով Հայաստանի Հանրապետության իրավական դաշտի համապատասխանեցում

Արդյունքները.

- ✓ ԲՇԽ-ի նիստերի ընթացքում ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հնարավորությունների, ոլորտային խնդիրների և իրավական դաշտի կարգավորումների քննարկումները,
- ✓ ԱՃԹՆ համայնքի ընդլայնումը, մասնավորապես, ընդլայնված կազմով աշխատանքային խմբերում ԲՇԽ-ի օրակարգում ներառված հարցերի շուրջ քննարկումների անցկացումը, դրանցում բազմակարծության ապահովումը, շահագրգիռ կողմերի՝ ընկերությունների, պետական մարմինների ներկայացուցիչների, այլ շահառուների դիրքորոշումների ազատ ներկայացումը,
- ✓ Վերը նշված քննարկումների արդյունքում՝ 2019թ. սեպտեմբերի 5-ի ԲՇԽ-ի նիստում ընդունված որոշումը՝ առաջիկա 2019 հաշվետու տարվա Ազգային Զեկույցի նախնական ուսումնասիրության շրջանակի մեջ ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման, ինչպես նաև մետաղական բնական պաշարների վերամշակման (ներառյալ հանքաքարի և խտանյութի առք ու վաճառքով զբաղվող տեղական կազմակերպությունների գործունեությունը) ոլորտների ուսումնասիրությունը ներառելու վերաբերյալ:

Ազդեցությունը.

Խնդրո առարկայի վերաբերյալ քննարկումները և ԲՇԽ-ի որոշումը մեկնարկ է հանդիսացել ոլորտի իրավական կարգավորումները ուսումնասիրելու, դրանցում թերություններ հայտնաբերելու և վերացման ուղղությամբ կառավարության կողմից որոշակի քայլեր ձեռնարկելու համար:

Նպատակ 4.

Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրում համաձայն ճանապարհային քարտեզի՝ հաշվի առնելով լավագույն միջազգային փորձը

Արդյունքները

- ✓ Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրման ճանապարհային քարտեզով սահմանված գործողությունների աջակցությունը, մասնավորապես.
 - «Հայաստանյան ԱՃԹՆ ԲՇԽ-ի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթղթի մշակումը, որտեղ սահմանված են պատասխանատու հանքարդյունաբերության հիմնական ուղղությունները և դրանցից բխող Հայաստանի առաջնահերթությունները,
 - Մասնակցությունը «Հայաստանի ընդերքի ոլորտի տնտեսական վերլուծությունը և դրա ազդեցությունը կայուն զարգացման վրա» և «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական և առողջապահական գնահատում՝ ոլորտի քաղաքականության մշակմանը նպաստելու նպատակով» ուսումնասիրությունների կազմման աշխատանքներին, մասնավորապես, ուսումնասիրությունների ընթացքում տրամադրվող փաստաթղթերի վերաբերյալ ԲՇԽ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խմբի կարծիքների և առաջարկությունների ապահովում և, անհրաժեշտության դեպքում, դրանց շուրջ հանդիպում-քննարկումների անցկացումը
- ✓ Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրման աջակցության աշխատանքային խմբի հանդիպում/քննարկումները:

Ազդեցությունը

Պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ հանձնառությունը հանդիսանում է ԱՃԹՆ-ի ստանդատի պահանջները գերազանցող նախաձեռնություն, որի ներդրում նպաստում է հանրության կողմից Հայաստանում ԱՃԹՆ-ի դերի կարևորության ընկալմանը և ոլորտում պատասխանատու ներդրողների բացահայտմանը: Բացի դրանից, պատասխանատու հանքարդյունաբերության միջազգային փորձի ճանաչումն ու տեղայնացումը ձևավորում է համապատասխան մշակույթ, գործելաոճ և հանրային վերաբերմունք:

Նպատակ 5.

ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի և շահագրգիռ մարմինների կարողությունների հզորացում, ԱՃԹՆ-ի մեյնսթրիմինգ, տվյալների համակարգային բացահայտման խրախուսում

Արդյունքները

- ✓ ԲՇԽ-ի կողմից հաստատված՝ «Բաց տվյալների» սկզբունքին համապատասխանող տվյալների համակարգված բացահայտման իրագործելիության» ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակումը և դրա հիման վրա համապատասխան

ծառայության գնման գործընթացի կազմակերպումը: Ուսումնասիրությունն իրականացնող ընտրված Խորհրդատուի հետ պայմանագրի կնքումը:

- ✓ Վերը նշված Խորհրդատուի կողմից ուսումնասիրության նախագծի տրամադրումը, որի մեջ ներառված են ԱՃԹՆ-ի գործիքակազմով (toolkit) տվյալների համակարգված բացահայտման քարտեզագրումը և տվյալների հրապարակման գործընթացի ինստիտուցիոնալիզացման ճանապարհային քարտեզը/գործողությունների ծրագիրը: ԲՇԽ-ի կողմից հաստատումը նախատեսվում է 2020 թվականին:

Ազդեցությունը

«Բաց տվյալների» սկզբունքին համապատասխանող տվյալների համակարգված բացահայտման իրագործելիության» ուսումնասիրությունը կնպաստի պետական մարմինների և մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների էլեկտրոնային համակարգերում ԱՃԹՆ-ի ստանդարտով պահանջվող տվյալների կանոնավոր և մեքենայացված հրապարակմանը, թափանցիկության և հաշվետվողականության գործընթացների կայունությանը և արդյունքում՝ ԱՃԹՆ-ի Ազգային զեկույցների հրապարակման գործելառճից տվյալների համակարգված բացահայտման գործելառճին հնարավորինս արագ անցմանը:

3. ԱՃԹՆ-Ի ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման ընթացքի ուժեղ և թույլ կողմերը կներկայացվեն ստորև:

Որպես ուժեղ կողմեր հարկ է նշել հետևյալը.

- ✓ ԱՃԹՆ-ի ներդրման նկատմամբ Հայաստան երկրի կայուն վերաբերմունքը, որն արտահայտվեց ՀՀ կառավարության կողմից ԱՃԹՆ-ի ներդրումը օրակարգում պահպանելը:
- ✓ ՀՀ կառավարության՝ հենց սկզբից որդեգրած և շարունակաբար զարգացրած հանձնառությունը՝ ձեռնարկել և հավուր պատշաճի իրականացնել ԱՃԹՆ-ի ներդրմանն ուղղված բոլոր հնարավոր քայլերը, ինչպես օրինակ, այդ քայլերի և գործողությունների ամրագրումը ՀՀ կառավարության 2017-2022թթ. Գործողությունների հնգամյա ծրագրեր, դրանց ներառումը հակակոռուպցիոն օրակարգում, ԱՃԹՆ-ի պահանջների հետ համապատասխանեցման օրենսդրական փոփոխությունների իրականացումը:
- ✓ Համաձայն ընդունված օրենսդրական փոփոխությունների՝ ԱՃԹՆ-ին հաշվետու են համարվում մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած բոլոր ընդերքօգտագործողները, ինչպես նաև մի շարք պետական գերատեսչություններ՝ Շրջական միջավայրի նախարարությունը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, Պետական եկամուտների կոմիտեն: Բացի դրանից, ապահովված է այլ լիազոր մարմինների՝ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի, Կադաստրի կոմիտեի, Վիճակագրական կոմիտեի կողմից անհրաժեշտ տեղեկատվության ներկայացումը:
- ✓ Օրենսդրական փոփոխություններով սահմանվեց նաև հաշվետու հանքարդյունահանող ընկերությունների և պետական մարմինների կողմից տրամադրվելիք ԱՃԹՆ տեղեկատվության շրջանակը՝ ծավալը, համակողմանիությունը և ապագրեզացման մակարդակը:
- ✓ Հայաստանում ԱՃԹՆ-ի հաշվետվողականության առցանց համակարգի առավելագույն արագ գործարկումը, այդ համակարգում հաշվետու համարվող միավորների կողմից սահմանված տեղեկատվության ժամանակին մուտքագրումը, այնուհետ՝ այդ ամբողջ տեղեկատվական բազայի հանրային հասանելիությունը:
- ✓ Լիազոր մարմնի կայքում հրապարակվող պետության և օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների միջև կնքված ընդերքօգտագործման պայմանագրերի, դրանց փոփոխությունների ու լրացումների հանրային հասանելիությունը:
- ✓ Ընդերքօգտագործման թույլտվությունների ռեգիստրում բոլոր փոփոխությունների՝ պատշաճ և օրենքով սահմանված ժամկետներում թարմացումը:
- ✓ ՀՀ կառավարության կողմից ԻՍ Բացահայտմանն ուղղված օրենքների նախագծերի փաթեթի մշակումը և դրա՝ «անհետաձգելի» կարգավիճակով Ազգային ժողով

ներկայացումը: Նշված իրավական կարգավորումների ընդունման արդյունքում ԻՍ վերաբերյալ հայտարարագրերը 2020թ-ի մարտից հանրության համար հասանելի են ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության www.e-register.am կայքում:

- ✓ ԻՍ բացահայտման հանձնառության ամրագրումը Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) ներքո մշակվող «ԲԿԳ հայաստանյան գործողությունների 4-րդ Ծրագրում», ըստ որի՝ ընդերքօգտագործող ընկերությունների ԻՍ ռեգիստրը հետագայում կծառայի որպես միասնական պետական գրանցամատյան՝ այլ ոլորտներում գործունեություն ծավալող պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց ԻՍ բացահայտման համար նույնպես՝ ապահովելով ԻՍ վերաբերյալ տվյալների հրապարակայնությունը:
- ✓ Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացի նկատմամբ միջազգային կազմակերպությունների կողմից ցուցաբերված մեծ հետաքրքրությունը և համակողմանի աջակցությունը: 2019թ. միջազգային կազմակերպություններն են շարունակել ֆինանսավորել ԱՃԹՆ-ի ներդրման հետ կապված մի շարք գործողություններ՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքի զարգացումը, հանրային իրազեկման և կարողությունների զարգացման միջոցառումները, Հայաստանում ԱՃԹՆ-ի համաժողովի անցկացումը, Հայաստանի պատվիրակության՝ 2019թ. համաշխարհային կոնֆերանսին, ԱՃԹՆ-ի խորհրդի նիստերին, այլ միջազգային միջոցառումների մասնակցությունը, ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտման իրագործելիության ուսումնասիրությունը: Աշխատանքային ծրագրով սահմանված մի շարք միջոցառումներ իրականացվել են Համաշխարհային բանկի՝ «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցության ծրագիր» դրամաշնորհային ծրագրի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն զլոբալ ԱՃԹՆ-ի իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի աջակցությամբ: ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից նույնպես իրականացվել են համապատասխան միջոցառումներ:
- ✓ ԲՇԽ-ի՝ որպես եռակողմ քննարկման հարթակի արդյունավետ աշխատանքի ընթացքը, հարթակի հնարավորությունները՝ շահագրգիռ կողմերին հուզող հարցերի առաջաջման, ազատ քննարկման և կոնսենսուսային որոշումների կայացման համար:
- ✓ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախաձեռնողական հանձնառությունը՝ անելու ավելին, քան ԱՃԹՆ-ի ստանդարտն է պահանջում, ինչպես օրինակ՝ հաշվետու տարում «պատասխանատու հանքարդյունաբերության» աշխատանքային խմբի շարունակվող աշխատանքը կամ՝ ԲՇԽ-ի նպատակադրվածությունը՝ առաջիկա տարիներին քննարկման առարկա դարձնել ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հարցը, որի նպատակով 2020թ. իրականացվելու է նախնական ուսումնասիրություն:

- ✓ Հայաստանի ԱՃԹՆ-ի տարեկան անդամավճարի, ինչպես նաև ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքի վարձատրության և պահպանման ծախսերը կրելու Հայաստանի կառավարության պատրաստակամությունը:
- ✓ Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության արհեստավարժությունը:

ԱՃԹՆ-ի ներդրման ընթացքում ի հայտ են եկել նաև մի շարք թույլ կողմեր.

- ✓ ԲՇԽ-ի կարողությունների ոչ բավարար մակարդակը, որի հետևանքով երբեմն պակասում է ներկայացված հարցերի ուսումնասիրման խորությունը, խնդիրների լուծման ոլորտում առկա միջազգային փորձի ճանաչողությունը, որոշակի մասնագիտական որակավորում պահանջող դիտարկումները:
- ✓ ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի գործունեության մեջ երբեմն հանդիպող ոչ բավարար արդյունավետությունը:
- ✓ Ժամանակակից և թափանցիկ հանքարդյունաբերության ոլորտում հանքարդյունահող ընկերությունների փորձի և կամքի պակասը:
- ✓ Հանրային նշանակություն ունեցող խնդիրները ճանաչելու, դրանք մասնագիտորեն գնահատելու ոլորտում քաղաքացիական հասարակության ունակությունների անբավարար մակարդակը, ուստի և ԲՇԽ-ի համապատասխան քննարկման օրակարգ ձևավորելու ցածր կարողությունները:
- ✓ ԱՃԹՆ-ի վերաբերյալ հասարակության անբավարար իրազեկվածությունը, ԱՃԹՆ-ի գործածության ոլորտում լրագրողական հանրության, և ընդհանրապես, ՁԼՄ-ների պասիվ ներգրավվածությունը:
- ✓ ԱՃԹՆ-ի գործընթացներում ազդակիր համայնքների պասիվ ներգրավվածությունը, ինչպես նաև կարողությունների ցածր մակարդակը:
- ✓ ԱՃԹՆ-ի, դրա ստեղծած արդյունքի հանրային առայժմ ցածր ազդեցությունը, հանքարդյունաբերության ոլորտում հասարակությանը հուզող խնդիրների քննարկման ժամանակ ԱՃԹՆ հաշվետվողականության շնորհիվ հավաքագրած տվյալների սակավ գործածությունը, հանրային լուրջ բանավեճերում ԱՃԹՆ-ով պայմանավորված արգումենտացիայի բացակայությունը:
- ✓ ԱՃԹՆ-ի արդյունավետ շահագործման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների սղությունը:
- ✓ Որոշակի օբյեկտիվ և սուբյեկտիվ թերացումների հետ կապված ԱՃԹՆ-ի 2019-2020թթ. աշխատանքային ծրագրի մի քանի միջոցառումների ժամանակացույցից շեղումները

ԱՃԹՆ-ի իրականացման ազդեցությունն ուժեղացնելու ուղղությամբ գործադրված ջանքերը

- ✓ ԲՇԽ-ն շարունակել է ունենալ ծանրակշիռ ներկայացվածություն՝ ի դեմս ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախագահ ՀՀ փոխվարչապետի և կառավարության խմբակցությունը կազմող լիազոր մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների:
- ✓ ԲՇԽ-ի կարողությունները զարգացնելու նպատակով ԲՇԽ-ի, ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության, լիազոր մարմինների ներկայացուցիչներից կազմված խումբը մասնակցել է արտասահմանում անցկացված ԱՃԹՆ-ի համաժողովներին, աշխատաժողովներին և քննարկումներին: Բացի դրանից, կազմակերպվել են կարողությունների հզորացման միջոցառումներ և քննարկումներ նաև Երևանում:
- ✓ Հայաստանի ԱՃԹՆ-ի վերաբերյալ շահառուների իրազեկվածությունը մեծացնելու նպատակով ԱՃԹՆ-ի առաջին ազգային գեկույցը ներկայացնող հանդիպումներ են անցկացվել Երևանի պետական համալսարանում, Գեղարքունիքի, Լոռու և Սյունիքի մարզերում, մասնակիցների համար պատրաստվել են տեղեկատվական բուկլետներ, քաղաքացիական հասարակության խմբակցության կողմից անցկացվել են Ա—ԹՆ-ի հանրային իրազեկման մի շարք միջոցառումներ,
- ✓ Ավելի լայն հանրային իրազեկման համար պատրաստվել են տեսահոլովակներ՝ ԱՃԹՆ-ի իրականացման, կարևորության և ընդհանուր գործընթացի վերաբերյալ, որոնք տեղադրվել ու տարածվել են սոցիալական ցանցերի, ինչպես նաև մարզային հեռուստաալիքներով:
- ✓ Ֆեյսբուք սոցիալական ցանցում իրականացվել է ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի գովազդային արշավը:
- ✓ ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտման համար կատարելագործվել է ԱՃԹՆ-ի հաշվետվությունների ներկայացման առցանց հարթակը, որի միջոցով հետաքրքրված հանրությունը կարող է ամբողջական պատկերացում կազմել երկրի տնտեսության մեջ հանքարդյունաբերության դերի ու նշանակության մասին:
- ✓ ԲՇԽ-ն նախաձեռնել է ԱՃԹՆ-ի ստանդարտի պարտադիր պահանջները գերազանցող քայլեր, մասնավորապես, հանրության համար հասանելի է դարձրել հաշվետու տարում մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերում փոփոխությունները, որոնց բովանդակությունը հանդիսանում է շահառու կողմերի հետաքրքրության առարկա:
- ✓ ԱՃԹՆ-ի կայուն ֆինանսավորումը ապահովելու նպատակով՝ Համաշխարհային Բանկի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հայաստանյան գրասենյակների հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման աջակցության վերաբերյալ, որի շնորհիվ իրականացվել են ծրագրված միջոցառումները:
- ✓ ԱՃԹՆ-ի փաստաթղթերի և ուղեցույցների առավելագույն հասանելիության համար ապահովվել են դրանց հայերեն թարգմանությունների հասանելիությունը:

- ✓ Նախավավերացման հանդիպումների և քննարկումների ժամանակ բոլոր շահագրգիռ կողմերի համար կրկին քննարկվել են ԱՃԹՆ-ի իրականացման խնդիրները և դրանց լուծման ուղիները:
- ✓ Միջազգային հանդիպումների ժամանակ ձեռք են բերվել համագործակցության պայմանավորվածություններ, որոնց շնորհիվ հնարավոր կլինի ճանաչել և օգտագործել ԱՃԹՆ-ի իրականացման լավագույն միջազգային փորձը:
- ✓ Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. աշխատանքային ծրագիրը իրականացվել է փոքր՝ ոչ բովանդակային, շեղումներով:

4. ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲՈՒՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Հաշվետու տարում ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կազմում կատարվել են հետևյալ փոփոխությունները. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախագահ առաջին փոխվարչապետ Արարատ Միրզոյանը 2019թ. հունվարի 14-ին նշանակվել է ՀՀ Ազգային ժողովի նախագահ, որից հետո ԱՃԹՆ ԲՇԽ-ն նախագահում է փոխվարչապետ Տիգրան Ավինյանը:

ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի կառավարության խմբակցության անդամ, ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանը 2019 թվականի մայիսի 30-ից դադարեցրել է անդամակցությունը՝ պաշտոնական լիազորությունների դադարեցմամբ և ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության գործառույթները ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը փոխանցմամբ պայմանավորված: Վերջինիս փոխարեն հունիսի 4-ից ԲՇԽ-ի կառավարության խմբակցության անդամ է ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառների պետական քաղաքականության մշակման և իրականացման հարցերով նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանը: ՀՀ Արդարադատության փոխնախարար Սուրեն Քրմոյանը մարտի 29-ին նշանակվել է ՀՀ փոխվարչապետի խորհրդական, և իր փոխարեն հուլիսի 24-ից ԲՇԽ-ի անդամ է ՀՀ Արդարադատության փոխնախարար Սրբուհի Գալյանը: Իսկ սեպտեմբերի 5-ից ԲՇԽ-ի կառավարության խմբակցության նոր այլընտրանքային անդամ է Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մանուկյանը:

Հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցությունը ձեռնարկել է խմբակցության անդամների և այլընտրանքային անդամների ընտրական գործընթաց: Խմբակցությունը կազմակերպել է ընտրակարգի վերաբերյալ քննարկումներ հանքարդյունաբերության ոլորտի առնչությամբ գործունեություն ծավալող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ: Հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիական հասարակության խմբակցության կողմից կազմակերպվել է 4 հանդիպում քաղաքացիական հասարակության լայն շրջանակների մասնակցությամբ: Ընտրակարգի վերջնական տարբերակը տրամադրվել է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը: Վերջինիս դիտարկումներն ընդունելուց հետո 2019 թվականի հոկտեմբերի 1-ին կայացել են ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության (ՔՀԽ) անդամների և այլընտրանքային անդամների (ներկայացուցիչների) ընտրությունները՝ համաձայն գործող «ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ ՔՀԽ ձևավորման, անդամների և այլընտրանքային անդամների թեկնածուների առաջադրման, ընտրության և լիազորությունների դադարեցման կարգի» (այսուհետ՝ Կարգ) և հաստատված Ժամանակացույցի: Հոկտեմբերի 14-ին ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ ՔՀԽ-ի ընտրական հանձնաժողովը Էլեկտրոնային եղանակով ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարությանն է ներկայացրել ընտրությունների արձանագրությունը և արդյունքները:

Ընտրությունների արդյունքում ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ ՔՀԽ ներկայացուցիչներ են ընտրվել.

Անդամներ՝

- Գոհար Ղազինյան, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ
- Սոնա Այվազյան, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
- Նազելի Վարդանյան, «Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ
- Օլեգ Դուլգարյան, «Համայնքային Համախմբման և Աջակցության Կենտրոն» ՀԿ (մարզային ներկայացուցիչ)
- Հարություն Մովսիսյան, «ԵՊՀ Ռեզիդուալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոն» (գիտության ոլորտի ներկայացուցիչ)

Այլընտրանքային անդամներ՝

- Վիկտորյա Բուրնազյան, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ
- Արթուր Համբարձումյան, «Հասարակական ձայն» ՀԿ

Ընտրված ներկայացուցիչների լիազորություններն ուժի մեջ են մտել ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ ՔՀԽ-ի գործող անդամների լիազորությունների դադարեցման հաջորդ օրը՝ 2019թ. նոյեմբերի 25-ին, երեք տարի ժամկետով՝ համաձայն ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ աշխատակարգի 14-րդ կետի և Կարգի 15-րդ կետի:

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի հանքարդյունահանող ընկերությունների խմբակցությունը ղեկավարների 9-ին էլեկտրոնային նամակով ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարությանը տեղեկացրել է, որ խմբակցության նոր անդամների ընտրությունը օբյեկտիվ պատճառներով չի կայացվել սահմանված ժամանակահատվածում: Ինչպես նաև տեղեկացրել է, որ նոր ընտրությունները պլանավորվում են իրականացնել 2020 թվականին: Մինչ նոր ընտրությունների արդյունքների ամփոփումը խմբակցությունը կշարունակի աշխատել գործող կազմով:

Հաշվետու ժամանակահատվածում ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության կողմից ԲՇԽ-ի աշխատակարգում փոփոխություններ կատարելու առաջարկ է ներկայացվել՝ մասնավորապես առաջարկելով հստակեցնել ԲՇԽ-ի անդամների և այլընտրանքային անդամների լիազորությունների ժամկետների հաշվարկման կարգը: Աշխատակարգը ԲՇԽ-ի անդամների ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) հաստատվել է սեպտեմբերի 5-ին կայացած ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստին և հրապարակվել ԱՃԹՆ-ի հայաստանյան կայքում⁴⁷:

2019 թվականին անցկացվել է ԲՇԽ-ի 3 նիստ՝ 2019 թվականի ապրիլի 16-ին, սեպտեմբերի 5-ին և նոյեմբերի 7-ին:

2019 թվականի ընթացքում ԲՇԽ-ի կողմից մի շարք փաստաթղթեր հաստատվել են էլեկտրոնային եղանակով՝ էլնելով դրանց հրատապությունից:

⁴⁷ <https://www.eiti.am/hy/%D4%B2%D5%87%D4%BD-%D5%AB-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3>

ԲՇԽ-ի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են ԲՇԽ-ի կամ ԲՇԽ-ի անդամներին փոխարինող այլընտրանքային անդամների 2/3-ը և յուրաքանչյուր խմբակցության անդամների կեսից ավելին:

Նիստերի ընթացքում ապահովվել է ԲՇԽ-ի աշխատակարգի պահանջները, այն է՝

Հանքարդյունահանող ընկերությունների ներկայացուցիչների բացակայությունները պայմանավորված են նրանց աշխատանքի հիմնական վայրի՝ Երևանից դուրս գտնվելու հետ, իսկ քաղաքացիական հասարակության խմբակցության անդամների բացակայությունը պայմանավորված է Հայաստանից դուրս գտնվող միջոցառումներին մասնակցության հետ: Նշված խնդիրները լուծելու համար նիստերի ընթացքում հնարավորության դեպքում ապահովվում է տեսակապ, և ԲՇԽ-ի անդամները կարող են առցանց՝ տեսակապի միջոցով մասնակցել հանդիպմանը (որոշ նիստերի ԲՇԽ-ի անդամները մասնակցել են տեսակապի միջոցով):

ԲՇԽ-ի նիստերին որոշ անդամների բացակայությունները համարվել են հարգելի և ԲՇԽ-ի նախագահը վերջիններիս փոխարինման հարցը չի բարձրացրել: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ԲՇԽ-ի նիստերի և անդամների մասնակցության վերաբերյալ տվյալներ:

ՀՀ ԱՃԹՆ-ի Բազմաշահառու խմբի (ԲՇԽ) անդամներն առ 05.06.2020թ.

ԲՇԽ-ի գործող անդամ
ԲՇԽ-ի նախկին անդամ
Չի հանդիսացել ԲՇԽ-ի անդամ
Մասնակցել է ԲՇԽ-ի նիստին
Չի մասնակցել ԲՇԽ-ի նիստին

ԲՇԽ-ի խմբակցությունը	ԲՇԽ-ի անդամը, կազմակերպությունը, պաշտոնը	ԲՇԽ-ի անդամության ստանձնում	ԲՇԽ-ի անդամության դադարեցում	2019թ. կայացած ԲՇԽ-ի նիստեր		
				16.04.2019թ.	05.09.2019թ.	07.11.2019թ.
Կառավարություն	Տիգրան Ավինյան, ՀՀ կառավարություն, փոխվարչապետ, ԲՇԽ-ի նախագահ	14.01.2019				
	Իրինա Ղափլանյան, Շրջակա միջավայրի նախարարություն, նախարարի տեղակալ	16.07.2018				
	Կարեն Բախանյան, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, նախարարի տեղակալ	24.11.2016				
	Լիլիա Շուշանյան, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, նախարարի տեղակալ	04.06.2019				

	Սրբուհի Գալյան, Արդարադատության նախարարություն, նախարարի տեղակալ	24.07.2019				
	Արման Պողոսյան, Ֆինանսների նախարարություն, նախարարի տեղակալ (ԲՀԽ-ի այլընտրանքային անդամ)	16.07.2018				
	Արթուր Մանուկյան, Պետական եկամուտների կոմիտե, նախագահի տեղակալ (ԲՀԽ-ի այլընտրանքային անդամ)	05.09.2019				
	Արարատ Միրզոյան, Կառավարություն, առաջին փոխվարչապետ ԲՀԽ-ի նախագահ	16.07.2018	14.01.2019			
	Դավիթ Անանյան, Պետական եկամուտների կոմիտե, նախագահ	24.11.2016	05.06.2020 (ազատվել է ՊԵԿ նախագահի պաշտոնից՝ իր դիմումի համաձայն)			
	Վարդան Գևորգյան, Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, նախարարի տեղակալ	24.11.2016	30.05.2019			
	Մուրեն Քրմոյան, Արդարադատության նախարարություն, նախարարի տեղակալ	16.07.2018	29.03.2019 (նշանակվել է ՀՀ փոխվարչապետի խորհրդական)			
Հանքարդյունահանող ընկերություններ	Արթուր Նիկողոսյան, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ, վարչական տնօրեն	24.11.2016 (26.05.2020, վերընտրվել է)				
	Արմեն Ստեփանյան, «Լիդիան Արմենիա» ՓԲԸ, կայուն	24.11.2016 (26.05.2020,				

զարգացման գծով փոխնախագահ	վերընտրվել է)				
Մանվել Շղիագարյան , «Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ, գլխավոր հաշվապահ	20.06.2018-25.05.2020՝ <i>այլընտրանքային անդամ, 26.05.2020-ից՝ հիմնական անդամ</i>				
Արտյոմ Պետրոսյան , «Գեոպրոմայինգ Գոլդ» ՍՊԸ, Իրավաբանական տնօրեն	26.05.2020				
Գագիկ Շահնագարյան , «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ, գլխավոր տնօրենի տեղակալ (ԲՀԽ-ի այլընտրանքային անդամ)	26.05.2020				
Վահե Վարդանյան , «Գեոմայինգ» ՍՊԸ, գլխավոր տնօրեն (ԲՀԽ-ի այլընտրանքային անդամ)	24.11.2016-25.05.2020՝ <i>հիմնական անդամ, 26.05.2020-ից՝ այլընտրանքային անդամ</i>				
Արամ Օսիկյան , «ԱՍՍԱԹ» ՍՊԸ, գլխավոր տնօրեն (ԲՀԽ-ի այլընտրանքային անդամ)	20.06.2018				
Անդրանիկ Աղաբալյան , «Գեոէկոնոմիկա» ՓԲԸ, գլխավոր տնօրենի տեղակալ (ԲՀԽ-ի այլընտրանքային անդամ)	20.06.2018				
Պերճ Խաչատրյան , «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ, Իրավաբանական դեպարտամենտի ղեկավար	24.11.2016	25.05.2020			
Դավիթ Թադևոսյան , «Թեդուտ» ՓԲԸ, գլխավոր	20.06.2018	25.05.2020			

	տնօրենի տեղակալ (ԲՇՆ-ի այլընտրանքային անդամ)					
Քաղաքացիական հասարակություն	Մոնա Այվազյան, «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, գործադիր տնօրեն	24.11.2016 (25.11.2019, վերընտրվել է)				
	Գոհար Ղազինյան, «Իրավաբանների Հայկական Ասոցիացիա» ՀԿ, բնապահպանական/կառավարման հարցերով փորձագետ	25.11.2019				
	Օլեգ Դուզարյան, «Համայնքային Համախմբման և Աջակցության Կենտրոն» ՀԿ, նախագահ	25.11.2019				
	Նազելի Վարդանյան, «Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ, տնօրեն	25.11.2019				
	Արթուր Համբարձումյան, «ՍիվիլՎոյս» ՀԿ, խորհրդի անդամ (ԲՇՆ-ի այլընտրանքային անդամ)	21.03.2017-16.07.2018՝ Ժամանակավոր անդամ, 16.07.2018-ից՝ հիմնական անդամ, 25.11.2019-ից այլընտրանքային անդամ				
	Վիկտորյա Բուռնազյան, «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ, փորձագետ (ԲՇՆ-ի այլընտրանքային անդամ)	25.11.2019				
	Հարություն Մովսիսյան, Երևանի պետական համալսարանի օգտակար հանածոների հանքավայրերի ոլորնման և հետախուզման ամբիոն, դոցենտ	24.11.2016 (25.11.2019, վերընտրվել է)	01.06.2020 (նշանակվել է ՀՀ ՏԿԵՆ «Հանրապետական երկրաբանական			

			ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրեն)			
	Ինգա Զարաֆյան, «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ, նախագահ	24.11.2016	24.11.2019			

5. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԵՐԸ

Նպատակը	Հ/Հ	Միջոցառում	Պլանավորված ծախսը (ԱՄՆ դոլար)	Ֆինանսավորման աղբյուրը	Վաստացի ծախսը	Փաստացի ֆինանսավորման աղբյուրը	Կարգավիճակը	Իրականացումը
Մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովում								
	1	ՀՀ ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի զարգացում	տեւ. միջ. 3	Համաշխարհային բանկ	տեւ. միջ. 3	Համաշխարհային բանկ	կատարված	
	2	ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի զարգացման աշխատանքների տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում:	1000	ՀՀ պետական բյուջե			կատարված	ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի զարգացման աշխատանքների տեխնիկական առաջադրանքը մշակվել է Հ-ԱՃԹՆ քարտուղարության կողմից

3	ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի զարգացում	6,000	Համաշխարհային բանկ	6,000	Համաշխարհային բանկ, ՀՀ պետական բյուջե	կատարված	2019 թվականի 2-րդ կիսամյակում իրականացվել են ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի զարգացման աշխատանքները Հելիքս կոնսալտինգ ընկերության կողմից, մասնավորապես առցանց հաշվետվությունների ձևաչափերը համապատասխանեցվել են ՀՀ հարկային օրենսդրությանը և ստորագրվել են ինքնաշխատ և ստեղծվող գրաֆիկական էջեր https://reports.eiti.am/hy/graphics/
4	Կայքի ընթացիկ սպասարկում	2019-ի ֆինանսավորումը ներառված է 2018թ. աշխ. ծրագրի 3-րդ միջոցառման ֆինանսավորման գումարում	ՄԱԶԾ, դոնորներ	2019-ի ֆինանսավորումը ներառված է 3-րդ միջոցառման ֆինանսավորման գումարում	Համաշխարհային բանկ	ընթացիկ	
5	ԱՃԹՆ կայքի համալրում արդիական տեղեկատվությամբ		ՀՀ պետական բյուջե			ընթացիկ	

6	Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում	7,500	Համաշխարհային բանկ, դոնորներ	40,600	Համաշխարհային բանկ, GIZ, ՀՀ պետական բյուջե	կատարված	2019 թվականին պատրաստվել են 5 տեղեկատվական հոլովակներ, հայերեն և անգլերեն լեզուներով հրատարակվել է Հայաստանի 1-ին ԱՃԹՆ-ի զեկույցը և դրա սեղմագիրը, ԱՃԹՆ-ի Համաշխարհային համաժողովին ներկայացման համար պատրաստվել են տեղեկատվական թերթիկներ, տեղեկատվական պրեզենտացիա, ԱՃԹՆ-ի հայաստանյան կայքում հրապարակվել են հաշվետու ժամանակահատվածում իրականացված միջոցառումների վերաբերյալ նորություններ, կազմվել և հրապարակվել են ԱՃԹՆ-ի եռամսյակային և տարեկան հաշվետվությունները, մարզային այցելությունների, կարողությունների զարգացման աշխատաժողովների ժամանակ օգտագործելու համար իրականացվել է տպագրություն (նոթատետր, գրիչ, թղթապանակ, անվանաքարտ, շնորհակալագիր, գրքույկ, կրծքանշան, պայուսակ: GIZ-ի աջակցությամբ
---	---	-------	------------------------------	--------	--	----------	--

պատրաստվել են տեղեկատվական նյութեր Հայաստանի ԱՃԹՆ-ի համաժողովի, Փարիզում կայացած ԱՃԹՆ-ի համաշխարհային համաժողովի, տարվա ընթացքում շահառուների հետ իրականացված հանդիպումների ու մարզային այցելությունների ժամանակ Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների վերաբերյալ հարային իրազեկումն ու Հայաստանի պատշաճ ներկայացումն ապահովելու համար:

7	Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով (YouTube, Twitter, facebook և այլ ցանցեր)					ընթացիկ	
8	Իրազեկվածության բարձրացման միջոցառումների, շահագրգիռ կողմերի հետ աշխատանքային հանդիպումների իրականացում	10000	Համաշխարհային բանկ, ՀՀ պետական բյուջե, դոնորներ	3,200	GIZ	կատարված	2019 թվականի ընթացքում անցկացվել է 4 մարզային հանդիպում 3 մարզում և մի շարք թեմատիկ հանդիպումներ Երևանում ԲՀԽ-ի խմբակցությունների, լայն խմբակցությունների, գիտական ներկայացուցիչների, հետաքննող լրագրողների և այլ շահագրգիռ խմբերի հետ:
9	ԱՃԹՆ-ի 1-ին զեկույցի պաշտոնական ներկայացում / կոնֆերանս, ԱՃԹՆ-ի կայքի, առանց հաշվետվությունների համակարգի և տվյալների բազայի ներկայացում	7500	Համաշխարհային բանկ, ՀՀ պետական բյուջե, GIZ	9,000	Համաշխարհային բանկ, GIZ, ՀՀ պետական բյուջե	կատարված	ԱՃԹՆ-ի 1-ին ազգային զեկույցի ներկայացմանը նվիրված համաժողովը տեղի է ունեցել 2019 թվականի հունվարի 30-ին:
Հաշվետվողականության և հանրային վերահսկողության բարձրացում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում							
Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծում և իրական սեփականատերերի մասին տեղեկատվության հանրայնացում							

14	Իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագրերի մշակման և ներկայացման միջազգային փորձի վերաբերյալ ուսուցում	10000	Համաշխարհային բանկ, ՀՀ պետական բյուջե	63,150	GIZ	կատարված	2019 թվականի սեպտեմբերի Հայաստանի ԱՃԹՆ-ի պատվիրակությունը ուսուցողական այց կատարեց Միացյալ Թագավորություն Միացյալ Թագավորության կառավարության Գործարարության, Էներգետիկայի և արդյունաբերական ռազմավարության վարչություն (BEIS Department), Հանդիպումներ ունեցավ OGP-ի և OpenOwnership իրական սեփականատերերի համաշխարհային ռեգիստրի ներկայացուցիչների հետ:
15	Իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի մշակում		ՀՀ պետական բյուջե	տես. միջ. 14	GIZ, ՀՀ պետական բյուջե	ընթացիկ	
16	Իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի հաստատում ԲԾԽ-ի կողմից և շրջանառված նախագծերի ներկայացում ՀՀ կառավարություն		ՀՀ պետական բյուջե			ընթացիկ	Իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի հաստատումը և շրջանառված նախագծերի ներկայացում ՀՀ կառավարություն նախատեսվում է իրականացնել 2020թ. 1-ին եռամսյակի ընթացքում

17	Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման տեխնիկական առաջադրանքի կազմում և հաստատում		ՀՀ պետական բյուջե			կատարված	2019 թ. 3-րդ եռամսյակում իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման տեխնիկական առաջադրանքը կազմվել է ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից և ներկայացվել է ԲՇԽ-ի և իրական սեփականատերերի աշխատանքային խմբի կարծիքին և հաստատմանը: Հայտարարվել է աշխատանքների իրականացման միջոյթ:
18	Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման համար կազմակերպության ընտրություն և հանրային ռեգիստրի ստեղծում	30000	Համաշխարհային բանկ			ընթացիկ	2019 թ. 3-րդ եռամսյակում հայտարարվել է աշխատանքների իրականացման միջոյթ: Ռեգիստրի ստեղծման աշխատանքները կկատարվեն 2020 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակներում:
19	Իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագրերի լրացման և ներկայացման վերաբերյալ ուսուցում	2000	դոնորներ			ընթացիկ	Իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագրերի լրացման և ներկայացման վերաբերյալ ուսուցումներ կիրականացվեն 2020թ. 1-ին կիսամյակի ընթացքում
Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածության/անդամակցության կարգավիճակի ապահովում							

23	Վավերացման գործընթացի պատրաստածության նախնական ստուգում և բացերի վերհանում			570	GIZ	կատարված	Նախավավերացման աշխատանքների շրջանակում 2019թ. հուլիսի 10-ին տեղի ունեցավ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) նախավավերացման աշխատաժողով Հայաստանի ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի և ԱՃԹՆ-ի քարտուղարության հետ և Գերմանիայի ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավարի մասնակցությամբ, որի ժամանակ ներկայացվեց Գերմանիային վավերացման հաջող փորձը, նախավավերացման հարցաթերթիկի լրացման կարգը, քննարկվեցին Հայաստանի վավերացման գործընթացին առնչվող հարցեր:
----	--	--	--	-----	-----	----------	--

24	Վավերացման գործընթաց	4000	Համաշխարհային բանկ	16,500	GIZ	Ընթացիկ	2020թ. փետրվարի դրությամբ Հայաստանի ԱՃԹՆ-ի վավերացման աշխատանքները չեն ավարտվել: Միջազգային վավերացնողների այցը Հայաստան տեղի է ունեցել 2019թ. նոյեմբերի 4-8-ը: ԱՃԹՆ-ի քարտուղարությունն աշխատում է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ վավերացման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման նպատակով:
25	ԲՇԽ-ի նիստերի անցկացում					Ընթացիկ	2019թ. ընթացքում տեղի է ունեցել Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ի 3 նիստ:
26	ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հանդիպումների անցկացում		Պետական բյուջե			Ընթացիկ	2019թ. ընթացքում տեղի են ունեցել Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ի իրական սեփականատերերի բացահայտման և պատասխանատու հանքնարդյունաբերության աշխատանքային խմբերի մի շարք հանդիպումներ, ինչպես նաև ԱՃԹՆ-ի իրականացման այլ թեմաների շուրջ մի շարք հանդիպումներ, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ԱՃԹՆ-ի

							եռամսյակային հաշվետվություններում:
27	ԲՇԽ-ի նոր անդամների ներկայացում և ԲՇԽ-ի կազմի հաստատում					Ընթացիկ	2019թ. կատարվել են փոփոխություններ ԲՇԽ-ի կառավարության և քաղաքացիական հասարակության խմբակցություններում: Նոյեմբերի 24-ին քաղաքացիական հասարակության խմբակցությունը ներկայացրել է առաջիկա 3 տարիների խմբակցության անդամների և այլընտրանքային անդամների թեկնածությունները: Թեկնածուները ընտրվել են խմբակցության կողմից կազմակերպված անկախ ընտրությունների արդյունքում: ԲՇԽ-ի արդյունահանող ընկերությունների խմբակցությունը նոր անդամների ընտրությունն անցկացնելու է 2020թ. փետրվարին, որի մասին տեղեկացրել է ԱՃԹՆ-ի քարտուղարությանը:

28	ԲՇԽ-ի աշխատակարգում փոփոխություններ (անհրաժեշտության դեպքում)					կատարված	ԲՇԽ-ի աշխատակարգում փոփոխությունները ԲՇԽ-ն հաստատել է 2019թ. սեպտեմբերի 5-ին կայացած ԲՇԽ-ի նիստի ժամանակ:
29	ԱՃԹՆ խորհրդի նիստերին և կոնֆերանսների մասնակցություն	10000	Համաշխարհային բանկ	23,230	Համաշխարհային բանկ, GIZ	ընթացիկ	Հայաստանի ԱՃԹՆ-ի ներկայացուցիչները 2019թ. մասնակցել են փետրվարի 27-28-ը Կիևում կայացած ԱՃԹՆ-ի խորհրդի նիստին, մարտի 19-20 Մանիլայում իրական սեփականատերերի թեմայով Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային երկօրյա աշխատաժողովին, հունիսի 17-19-ը Փարիզում կայացած ԱՃԹՆ-ի համաշխարհային համաժողովին, նոյեմբերի 29-30-ը Թբիլիսիում կայացած «Կոռուպցիայի դեմ պայքարի ինովացիոն մոտեցումների քննարկում» թեմայով համաժողովին:
30	Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018թ. աշխատանքային ծրագրի կատարողականի մշակում և հաստատում					կատարված	Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018թ. աշխատանքային ծրագրի կատարողականը մշակվել է ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից և հաստատվել է ԲՇԽ-ի կողմից ապրիլի 16-ին կայացած նիստի ժամանակ:

34	Գործընկեր և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն					ընթացիկ	Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից իրականացված աշխատանքների արդյունքում երկարաձգվել է Համաշխարհային բանկի «Աջակցություն Հայաստանի ԱՃԹՆ-ին» դրամաշնորհային ծրագիրը, որի արդյունքում 2020թ. կկազմվի Հայաստանի 3-րդ ազգային զեկույցը: Շարունակվել է համագործակցությունը Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հետ իրականացվող «Աջակցություն գլոբալ ԱՃԹՆ-ի իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակում: Իրականացվել է համագործակցություն այլ գործընկեր կազմակերպությունների հետ:
----	--	--	--	--	--	---------	--

35	Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքների ընթացք	72000	ՀՀ պետական բյուջե	35,800	ՀՀ պետական բյուջե, GIZ, Համաշխարհային բանկ	ընթացիկ	ՀՀ վարչապետի աշխատակազմի ներքո գործող ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարությունը համակարգել և կազմակերպել է Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի արդյունավետ իրականացման միջոցառումները, ամբողջ ծավալով իրականացրել է քարտուղարության գործառնությունները:
36	ՀՀ ԱՃԹՆ-ի 2018 տարեկան հաշվետվության կազմում և հաստատում					կատարված	ՀՀ ԱՃԹՆ-ի 2018 տարեկան հաշվետվությունը կազմվել է ԱՃԹՆ-ի քարտուղարության և ԲՇԽ-ի կողմից և ԲՇԽ-ի կողմից էլեկտրոնային եղանակով հաստատվել և հրապարակվել է 2019թ. հունիսի 28-ին:
38	ՀՀ ԱՃԹՆ-ի եռամսյակային հաշվետվությունների կազմում և հաստատում					կատարված	2019թ. ընթացքում կազմվել, հաստատվել և հրապարակվել են 4 եռամսյակային հաշվետվություններ

39	Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և այլ ԱՃԹՆ-ի անդամ երկրների հետ					ընթացիկ	Ընթացիկ տարում իրականացվել է համագործակցություն ԱՃԹՆ-ն իրականացնող մի շարք երկրների հետ, մասնավորապես, ակտիվ համագործակցություն է իրականացվել Միացյալ Թագավորության, Գերմանիայի, Ուկրաինայի հետ, իրականացվել են փորձի փոխանակման հանդիպումներ Վրաստանի գործընկերների հետ: Իրական սեփականատերի բացահայտման փորձի փոխանակման նպատակով համագործակցություն է իրականացվել մի շարք միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ, մասնավորապես, Թրանսփարենսի Ինթերնեշնլի , Բաց կառավարման գործընկերության, OpenOwnership-ի և մի շարք այլ կազմակերպությունների հետ:
40	ԱՃԹՆ-ի անդամավճարի վճարում	10000	ՀՀ պետական բյուջե	10,000	ՀՀ պետական բյուջե	կատարված	

41	Թարգմանչական աշխատանքներ	6000	Համաշխարհային բանկ, դոնորներ	4,500	Համաշխարհային բանկ	ընթացիկ	
ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխան ԱՃԹՆ-ի զեկույցի կազմում							
42	ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N666 որոշման մեջ փոփոխությունների և լրացումների կատարում, նախագծի հաստատում ԲՀԽ-ի կողմից և ներկայացում ՀՀ կառավարություն					կատարված	ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից մշակվել, ԲՀԽ-ի հետ քննարկվել, ՀՀ կառավարության կողմից ընդունվել է ՀՀ կառավարության 2019թ. հունիսի 11-ի N 871-Ն որոշումը:

43	ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի ներկայացման արդյունքում ստացված առաջարկությունների, բացահայտված թերությունների և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված բացերի քննարկում ԲՇԽ-ի կողմից առաջարկությունների իրականացման մեխանիզմների որոշման և անհամապատասխանությունների պատճառների վերացման նպատակով					ընթացիկ	
44	ԱՃԹՆ-ի 2019թ. ազգային զեկույցը կազմող անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում		Պետական բյուջե			կատարված	ԱՃԹՆ-ի 2019թ. ազգային զեկույցը կազմող անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքը մշակվել և ԲՇԽ-ի կողմից հաստատվել է 2019թ. ապրիլի 16-ին կայացած ԲՇԽ-ի նիստին:

45	Անկախ ադմինիստրատորի ընտրություն (մրցույթ և հաստատում)					կատարված	Անկախ ադմինիստրատորի ընտրության մրցույթը իրականացվել է 2019թ. 2-րդ կիսամյակում, և պայամանագիրը կնքվել է 2019թ. դեկտեմբերի 17-ին:
46	Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. զեկույցի մշակում	85000	Համաշխարհային բանկ, Պետական բյուջե			ընթացիկ	Ջեկույցի կազմման աշխատանքներն սկսվել են 2019թ. դեկտեմբերի 17-ին:
47	ԱՃԹՆ-ի 2020թ. զեկույցի նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում (անհրաժեշտության դեպքում)					ընթացիկ	Մշակվել է ԱՃԹՆ-ի 2020թ. զեկույցի նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքը, սակայն որոշում է կայացվել այն իրականացնել 2020թ. ԱՃԹՆ-ի 3-րդ զեկույցի հետ համատեղ:
48	ԱՃԹՆ-ի 2020թ. զեկույցի նախնական ուսումնասիրություն (անհրաժեշտության դեպքում) և անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակում	5000	Համաշխարհային բանկ			ընթացիկ	

Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնում, ՀՀ իրավական դաշտի ուսումնասիրություն իրավական անհամապատասխանությունների և բացերի բացահայտման նպատակով

51	Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված իրավական բացերի վերհանման և նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի կազմում և հաստատում	1000	ՀՀ պետական բյուջե			ընթացիկ	
53	Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված քննարկումների շահագրգիռ կողմերի հետ (ընկերություններ, պետական մարմինների ներկայացուցիչներ, այլ մասնակիցներ)	2000	Համաշխարհային բանկ			ընթացիկ	2019 թվականի ընթացքում անցկացվել են մի շարք հանդիպումներ շահագրգիռ խմբերի հետ:
Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաճի ներդրում համաձայն ճանապարհային քարտեզի՝ հաշվի առնելով լավագույն միջազգային փորձը							
55	Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաճի ներդրմանն աջակցության ճանապարհային քարտեզի գործողությունների իրականացում		դոնորներ			ընթացիկ	

56	Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաձևի ներդրմանն աջակցության աշխատանքային խմբի հանդիպումներ					ընթացիկ	Անցկացվել է հանդիպումների շարք, որոնց վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն ներկայացված է 2019թ. եռամսյակային հաշվետվություններում
57	Պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ներդրման Ճանապարհային քարտեզի լրամշակում					կատարվել է մասամբ	Հաստատվել է «Հայաստանյան ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթուղթը
ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի և շահագրգիռ մարմինների կարողությունների հզորացում, ԱՃԹՆ-ի մեյնսթրիմինգ, տվյալների համակարգային բացահայտման խրախուսում							
58	Հրապարակային հաշվետվություններ ներկայացնող պետական մարմինների և ընդերքօգտագործողների ներկայացուցիչների ուսուցում հրապարակային հաշվետվությունների ներկայացման առցանց հարթակը օգտագործելու վերաբերյալ	4000	Համաշխարհային բանկ, դոնորներ			ընթացիկ	ԱՃԹՆ-ի ազգային քարտոդարության կողմից անհրաժեշտության դեպքում տրամադրվում է խորհրդատվություն առցանց հաշվետվություններ ներկայացնողներին:

59	Բաց տվյալների սկզբունքին համապատասխանող տվյալների համակարգային բացահայտման իրագործելիության ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում, կատարող կազմակերպության ընտրություն:		Պետական բյուջե		GIZ	ընթացիկ	Համաձայն ԲՇԽ-ի կողմից հավանության արժանացած տեխնիկական առաջադրանքի՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հետ իրականացվող «Աջակցություն գլոբալ ԱՃԹՆ-ի իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակում ներգրավվել է խորհրդատու:
----	--	--	----------------	--	-----	---------	---

60	Բաց տվյալների սկզբունքին համապատասխանող տվյալների համակարգային բացահայտման իրագործելիության ուսումնասիրություն, տվյալների համակարգային բացահայտման քարտեզագրում ԱՃԹՆ-ի գործիքակազմով (toolkit), տվյալների հրապարակման գործընթացի ինստիտուցիոնալիզացման ճանապարհային քարտեզի մշակում և հաստատում	8000	Համաշխարհային բանկ		GIZ	ընթացիկ	2019թ. դեկտեմբերին կազմվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի տվյալների համակարգային բացահայտման իրագործելիության ուսումնասիրությունը, որը տրամադրվել է ԲՀԽ-ին և շահագրգիռ մարմիններին կարծիք ներկայացնելու նպատակով:
----	---	------	--------------------	--	-----	---------	---

6. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-Ի ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՔԱՐԴՑՈՒՆԱՀԱՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվի առնելով COVID-19 համավարակի հետևանքով ստեղծված իրավիճակը, ինչպես նաև 2020թ. սեպտեմբերի 27-ին սկսված արցախյան պատերազմը և Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելը՝ ԲՇԽ-ն Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատում է 2020 թվականի դեկտեմբերին՝ էլեկտոնային եղանակով: ԲՇԽ-ի խմբակցությունները հնարավորություն չեն ունեցել այս հաշվետվությունը քննարկել լայն խմբակցությունների ներկայացուցիչների հետ: Երկրում ստեղծված իրավիճակից ելնելով՝ ԲՇԽ-ն որոշում է, որ ավելի լայն խմբակցությունների հետ հանդիպումները և հանրային իրազեկման աշխատանքերը նպատակահարմար կլինի իրականացնել 2021 թվականի ընթացքում:

Որքանո՞վ են իրականացվել ԱՃԹՆ-ի նպատակները հաշվետու տարվա ընթացքում

Հարկ է նշել, որ 2019 թվականին Հայաստանի առաջին վավերացման աշխատանքների ներքո իրականացվող նախավավերացման աշխատանքների ընթացքում, ինչպես նաև վավերացնողների Հայաստան այցի ժամանակ իրականացվել են մի շարք հանդիպումներ բոլոր շահառու խմբերի հետ, որոնց ընթացքում մանրամասն քննարկվել են ԱՃԹՆ-ի ստանդարտի կատարման աշխատանքերը, արձանագրված արդյունքները և դրանց ազդեցությունը: Քննարկումների արդյունքները ներկայացվել են ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության Հայաստանի վավերացման գնահատականի հաշվետվության նախագծում⁴⁸ և անկախ վավերացնողի կողմից ներկայացված վավերացման զեկույցում⁴⁹: 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ԲՇԽ-ն ձեռնարկել է ԱՃԹՆ-ի ստանդարտի «Տեղական կառավարման մարմիններ կատարվող փոխանցումները» 5.2-րդ պահանջի և «Սոցիալական ծախսերը» 6.1-ին պահանջի մասով վավերացման գնահատականի նախնական հաշվետվությամբ ներկայացված ուղղիչ գործողությունները և հրապարակված

⁴⁸ Հայերեն

https://eiti.org/system/files/documents/arm_armenia_validation_2019_initial_assessment_march_2020.pdf

Անգլերեն https://eiti.org/system/files/documents/armenia_validation_2019_initial_assessment_march_2020.pdf

⁴⁹ Հայերեն https://eiti.org/system/files/documents/arm_final_validation_report.pdf

Անգլերեն https://eiti.org/system/files/documents/validation_report_armenia_final.pdf



լրացուցիչ տվյալների վերաբերյալ տեղեկատվությունը⁵⁰ տրամադրել է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը: Կատարված աշխատանքների արդյունքում անկախ վավերացնողը նշված պահանջների կատարումը գնահատել է որպես «բավարարող»: Արդյունքում, 2017-2019 թվականների Հայաստանի ԱՃԹՆ-ի իրականացման արդյունքների վավավերացմամբ ԱՃԹՆ-ի խորհուրդը ընդունել է, որ Հայաստանը ընդհանուր առմամբ բավարարող առաջընթաց է արձանագրել ԱՃԹՆ-ի 2016 ստանդարտի իրականացման գործում: ⁵¹

Հայաստանի Վավերացման հաշվետվությամբ ներկայացված ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջների կատարման գնահատականը և առաջարկված ամրապնդող գործործողությունները ընդունելի են համարվել ԲՇԽ-ի կողմից:

⁵⁰ Անգլերեն https://eiti.org/system/files/documents/msg_feedback_document_eng.pdf

⁵¹ անգլերեն https://eiti.org/board-decision/2020-39?fbclid=IwAR2vEI_YrpZexFLFouZSdMQklHbr6qOIMuXQK0LNKkt9I3z6hiqmgD_YmZQ

հայերեն

<https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2020/07/16/eiti-validation-armenia-arm/88/>



Հավելված 1

Հաշվետվություն

Հայաստանի ԱՃԹՆ-ի միջազգային վավերացման գործընթացի շրջանակում ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչների Հայաստան կատարած այցի մասին

Համաձայն Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (այսուհետ՝ ԱՃԹՆ) ստանդարտի՝ ԱՃԹՆ-ին անդամակցելուց 2.5 տարի հետո անցկացվում է երկրի վավերացում: Հայաստանն ԱՃԹՆ-ին անդամակցում է 2017 թվականի մարտի 9-ից, ուստի 2019 թվականի սեպտեմբերի 9-ից մեկնարկել է Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին վավերացման գործընթացը: Վավերացման արդյունքում գնահատվելու են մինչև 2019 թվականի սեպտեմբերի 9-ը Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքներն ու ստանդարտի պահանջների կիրառումը:

Վավերացման գործընթացի նկարագրությունը

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և անկախ վավերացնողների կողմից տրվում է երկրի առաջընթացի գնահատականը՝ ըստ ստորև ներկայացված գնահատման թերթիկի:

...

Պատկեր 1 – Գնահատման թերթիկ

ԱՃԹՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ		ԱՌԱՋԸՆԹԱՅԻ ԱՍՏԻՃԱՆ					ԱՌԱՋԸՆԹԱՅԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ
		Չկա	Անբավարար	Նշանակալի	Բավարար	Ավելի քան բավարար	
Դրույթներ	Պահանջներ						
ԲՇԽ վերահսկողություն	Կառավարության ներգրավվածություն*						
	Ընկերությունների ներգրավվածություն*						
	Քաղաքացիական հասարակության ներգրավվածություն*						
	Բազմաշահառու խումբ*						
	Աշխատանքային ծրագիր*						
Լիցենզիաներ և պայմանագրեր	Իրավական շրջանակ						
	Լիցենզիաների տրամադրում						
	Լիցենզիաների գրանցում						
	Պայմանագրերի բացահայտման քաղաքականություն						

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ,
ՀՈԿՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2019 ԹՎԱԿԱՆ

• • •

	Իրական սեփականություն						
	Պետական մասնակցություն						
Արտադրության մոնիտորինգ	Հետախուզական տվյալներ						
	Արտադրության տվյալներ						
	Արտահանման տվյալներ						
Եկամուտների հավաքագրում	Հարկեր և եկամուտներ						
	Բնափրային եկամուտներ						
	Ապրանքափոխանակության կարգավորումներ						
	Փոխադրումներից ստացվող եկամուտներ						
	ՊԶ գործարքներ						
	Տեղական կառավարման մարմիններ կատարվող ուղիղ վճարումներ						
	Տվյալների արդիականություն*						
	Տվյալների համակողմանիություն						
	Տվյալների որակ						
	Ապագադեզացում						
Եկամուտների	Տեղական կառավարման մարմիններ կատարվող փոխանցումներ						
	Եկամուտների բաշխում						

• • •

Բաշխում	Եկամուտների կառավարում և ծախսեր						
Սոցիալ- տնտեսական ներդրում	ՊԶ-ների քվադի-ֆիսկալ ծախսեր						
	Պարտադիր սոցիալական ծախսեր						
	Հայեցողական սոցիալական ծախսեր						
	Ներդրումը տնտեսության մեջ						
Արդյունքներ և ազդեցություն	Հանրային բանավեճ						
	Տվյալների հասանելիություն						
	Առաջարկությունների իրականացում						
	Իրականացման ազդեցությունը և արդյունքները						
Ընդհանուր գնահատական.							

Պայմանական նշաններ

	Երկիրն այս պահանջի ուղղությամբ որևէ առաջընթաց չի գրանցել: Պահանջի ընդհանուր նպատակը ոչ մի կերպ իրականացված չէ:
	Երկիրը ոչ բավարար առաջընթաց է գրանցել պահանջի կատարման հարցում: Պահանջի զգալի մասը դեռևս կատարման ենթակա է, պահանջի ընդհանուր նպատակը դեռևս հեռու է իրականացված լինելուց:

• • •

	Երկիրը պահանջի կատարման հարցում առաջընթաց է գրանցել: Պահանջի զգալի մասը կատարվում է, ընդհանուր նպատակը գտնվում է իրականացման փուլում:
	Երկիրը կատարում է ԱՃԹՆ-ի պահանջները:
	Երկիրն ԱՃԹՆ-ի պահանջներից դուրս ջանքեր է գործադրում:
	Այս պահանջի իրականացումն ընդամենը խրախուսվում է կամ առաջարկվում և չպետք է հաշվի առնվի ստանդարտի համապատասխանությունը գնահատելիս:
	ԲՇԽ-ն ապացուցել է, որ այս պահանջը կիրառելի չէ երկրում:

- Վավերացման նախորդ փորձից հետո կատարողականի փոփոխություն տեղի չի ունեցել
 Երկիրն ունի ավելի վատ արդյունքներ, քան վավերացման նախորդ գործընթացի ժամանակ

→ Երկիրն ունի ավելի լավ արդյունքներ, քան վավերացման նախորդ գործընթացի ժամանակ

* Պահպանել

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության վավերացնողների թիմի կազմած հաշվետվությունը ներկայացվելու է անկախ վավերացնողին, որի վավերացումից հետո երկրի վավերացման հաշվետվությունը ներկայացվելու է ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի հաստատմանը: ԱՃԹՆ-ի վավերացման ժամանակ տրված գնահատականի ամենացածր սանդղակը «Առաջընթաց չկա» կարգավիճակն է, իսկ ամենաբարձրը՝ «Բավարար առաջընթաց»: Վերջնական գնահատականը տրվում է՝ ամփոփելով յուրաքանչյուր առանձին պահանջի առաջընթացի մակարդակը: Ամենաբարձր՝ «Բավարար առաջընթաց» կարգավիճակը տրվում է այն դեպքում, երբ ԱՃԹՆ-ի յուրաքանչյուր պահանջի ու ենթապահանջի կիրառումը գնահատելիս բոլորին տրվել է «Բավարար առաջընթաց» գնահատական: Երկրորդ ամենաբարձր մակարդակը «զգալի առաջընթաց» է, երբ պահանջների մեծամասնության կատարմանը տրվում է «Բավարար առաջընթաց» գնահատական: Անկախ վավերացնողի կողմից հաշվետվությունների պատրաստումից հետո այն ներկայացվելու է ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությանը և բազմաշահառու խմբին: Եթե հաշվետվությունում առկա են ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացի բացթողումներ, որոնք հնարավոր է վերացնել երեք շաբաթվա ընթացքում, երկիրը կարող է 3 շաբաթվա ընթացքում վերացնել այդ թերությունները և դրա մասին




տեղեկացնել ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը: Այդ աշխատանքների իրականացումը հաշվի կառնվի վերջնական գնահատման ժամանակ:

Հայաստանի Հանրապետության՝ ԱՃԹՆ-ի ստանդարտի բավարարման առաջընթացի վերաբերյալ որոշումը ԱՃԹՆ-ի միջազգային խորհուրդը կքննարկի և կընդունի 2020 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում:

...

ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ




EITI

ԱՃԹՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Չորս քայլից բաղկացած գործընթաց



Ո՛վ է իրականացնում յուրաքանչյուր քայլի վերահսկողությունը



Մանրամասներ յուրաքանչյուր քայլի վերաբերյալ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՅԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ
ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ,
ՀՈԿՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2019 ԹՎԱԿԱՆ



Ազգային քարտուղարության և ԲՀԽ-ի դերը



Վալերացման ժամանակացույց

Յուրաքանչյուր քայլի առավելագույն տևողությունը, ենթակա է քննարկման ԲՀԽ-ի հետ



Արդյունքներն ըստ քայլերի





ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության վավերացման խմբի այցը Հայաստանի Հանրապետություն

Ի հավելումն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների փաստաթղթային ստուգման՝ ԱՃԹՆ-ի միջազգային վավերացման գործընթացի շրջանակում նոյեմբերի 4-8-ը Հայաստան են այցելել ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության վավերացման գործընթացի ղեկավար Լիդյա Կիլպին և երկրի համակարգող Օլեսյա Տոլչկոն:

Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից կազմակերպվել են վավերացնողների խմբի հանդիպումները ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի անդամների և բոլոր շահագրգիռ մարմինների և անձանց հետ:

Նոյեմբերի 4-ին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչները հանդիպումներ են ունեցել ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարության, Բաց կառավարման գործընկերության և Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցը կազմող Անկախ ադմինիստրատորի՝ «Էրնսթ և Յանգ» աուդիտորական ընկերության պատասխանատու թիմի հետ:

1. Հանդիպում ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարության հետ

Հանդիպմանը քննարկվել են Հայաստանի՝ ԱՃԹՆ-ին անդամակցության, ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի ձևավորման գործընթացը և ԲՇԽ-ի բոլոր երեք խմբակցությունների՝ կառավարության, քաղաքացիական հասարակության և հանքարդյունահանող ընկերությունների, ներգրավվածությունը Հայաստանում ԱՃԹՆ-ի իրականացման գործընթացում, ինչպես նաև ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից իրականացվող գործառնությունները, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը, վերջիններիս աջակցությամբ իրականացված միջոցառումները, ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից կազմված փաստաթղթերի նախագծերը և դրանց շրջանառումը ԲՇԽ-ի անդամների միջև, ԲՇԽ-ի նիստերի և աշխատանքային խմբերի հանդիպումների անցկացումը, ԱՃԹՆ-ի կողմից բացահայտված տվյալների ամբողջական, պատեհաժամ և բաց տվյալների սկզբունքով հրապարակումը Հայաստանի ԱՃԹՆ-ի www.eiti.am կայքում և առցանց հաշվետվությունների հարթակում:

2. Հանդիպում Հայաստանի Բաց կառավարման գործընկերության համակարգողի հետ

Հայաստանի Բաց կառավարման գործընկերության համակարգող Լիլյա Աֆրիկյանի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են ԱՃԹՆ-ի և ԲԿԳ-ի համագործակցությունը, ԲԿԳ-ում ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի անդամների ներգրավվածությունը, ինչպես նաև ԲԿԳ-ի հայաստանյան գործողությունների 4-րդ ծրագրում իրական սեփականատերերի բացահայտման ուղղությամբ համապատասխան հանձնառության ներառումը և կատարված քայլերը:



3. Հանդիպում ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցը կազմած Անկախ ադմինիստրատորի հետ

Անկախ ադմինիստրատորի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի կազմման աշխատանքները, տեղեկատվության հավաքագրման գործընթացը, ընդերքօգտագործող կազմակերպությունների և պատասխանատու պետական մարմինների ներգրավածության աստիճանը, ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներին համապատասխան տեղեկատվության առկայությունը զեկույցում, հավաքագրված և համադրված տվյալների վստահելիությունը, ինչպես նաև հայտնաբերված անհամապատասխանությունների պատճառները: Վավերացնողների խմբի կողմից նշվել է, որ Հայաստանի առաջին ԱՃԹՆ-ի զեկույցը համակողմանի է և ներկայացնում է ԱՃԹՆ-ի ստանդարտով պահանջվող ամբողջական տեղեկատվություն:

4. Հանդիպումներ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կառավարության խմբակցությունը ներկայացնող անդամների հետ

Նոյեմբերի 5-ին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության վավերացնողների խումբը հայաստանյան քարտուղարության ուղեկցությամբ հանդիպումներ է ունեցել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Շրջակա միջավայրի նախարարության, Վիճակագրական կոմիտեի, Պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչների, նոյեմբերի 6-ին՝ Արդարադատության նախարարության, նոյեմբերի 7-ին՝ Ֆինանսների նախարարության ներկայացուցիչների հետ:

Հանդիպում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցիչների հետ

ԱՃԹՆ ԲՇԽ-ի կառավարության խմբակցության անդամներ՝ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալներ՝ Կարեն Իսախանյանի և Լիլիա Շուշանյանի, ինչպես նաև ոլորտի պատասխանատու մասնագետների, ազդակիր համարվող համայնքների ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին հանքարդյունահանող ընկերությունների կողմից համայնքային բյուջեներ վճարվող հարկերն ու վճարները, ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման և փոխանցման գործընթացները, օրենսդրությունից շեղումները, դիմումների մերժումներն ու դրանց հիմնական պատճառները, թույլտվությունների հրապարակային գրանցամատյանում առկա տեղեկատվությունը, հրապարակված պայմանագրերի համառոտ բովանդակությունն ու դրանցում բովանդակային փոփոխությունների անհրաժեշտությունը, ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում իրականացված ու իրականացվելիք փոփոխությունները, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրերով սահմանված պարտադիր սոցիալական պարտավորությունները և դրանց փաստացի վճարները համայնքներին, ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցում դրանց վերաբերյալ առկա տեղեկատվության համակողմանիությունը: Քննարկվեցին նաև «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկերի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով մասհանումների իրականացման, բնապահպանական նպատակային ծրագրերի



իրականացման համար սուբվենցիա ստացող ազդակիր համայնքների և ըստ համայնքների սուբվենցիայի չափի բաշխվածության որոշման գործընթացը: Ներկայացվեց, որ ՀՀ վիճակագրական կոմիտեն չի հրապարակում թանկարժեք մետաղների (օր՝ ոսկի, արծաթ և այլն) արտադրության վերաբերյալ ապաագրեզացված տվյալներ՝ հաշվի առնելով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի գ) ենթակետի պահանջները: Քննարկվեցին մեկից ավել ընդերքօգտագործման թույլտվություն ունեցող հանքարդյունահանող ընկերությունների ըստ ծրագրերի հաշվետվողականության հնարավորությունը: Ներկայացվեց, որ ներկայումս միայն մեկ ընկերություն ունի ընդերքօգտագործման 2 թույլտվություն: Նշվեց նաև, որ գործող օրենսդրության պայմաններում պետական եկամուտների տրոհումը ծրագրային մակարդակով անհնարին է, ուստի ծրագրային մակարդակի հաշվետվողականության ներդնումը օրենսդրական փոփոխություններ կպահանջի:

Հանդիպում Շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչների հետ

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ, ԲՇԽ-ի անդամ Իրինա Ղափլանյանի և նախարարության ոլորտի պատասխանատուների հետ հանդիպմանը քննարկվեցին ԱՃԹՆ-ի շրջանակում նախարարության կողմից բացահայտվող տվյալները: Ներկայացվեց, որ համաձայն ՀՀ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքի՝ մետաղական հանքաքար արդյունահանող 27 ընկերություններից 5 ընկերությունների՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ, Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ, Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի (ներկայումս՝ Չաարատ Կապան), Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ, Գեոպրոմայնինգ Գոլդ ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից են մասհանումներ կատարվում: Ինչպես նաև նշվեց, որ համայնքների ցանկը և բնապահպանական վճարներից նրանց վարչական և ֆոնդային բյուջեներ մասհանվող գումարների չափերը յուրաքանչյուր տարվա համար հաստատվում են տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով: Ներկայացվեց, որ բնապահպանական ծրագրերը կազմվում են համաձայն «Բնապահպանական ծրագրերի մշակման (նախագծման) կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի N 197-Ն որոշման: Ծրագրի նախագծային փաստաթղթերը հաստատվում են Առողջապահության և/կամ Շրջակա միջավայրի նախարարությունների կողմից, և մինչև ծրագրի հաստատումը բնապահպանության և առողջապահության բնագավառներում լիազորված պետական մարմինների հետ՝ ՀՀ կառավարության սահմանված կարգով համաձայնեցվում են նախատեսված միջացառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները: Համաձայն վերոնշյալ օրենքի՝ ծրագրի նախագիծը մշակվում է համայնքի ղեկավարի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված տվյալ մարզի կամ համայնքի զարգացման (սոցիալ-տնտեսական զարգացման) կամ շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրերի կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության փաստաթղթերի հիման վրա: Ծրագիրը հրապարակում է համայնքի ղեկավարը:



Հանդիպում Վիճակագրական կոմիտեի ներկայացուցիչների հետ

Վիճակագրական կոմիտեի ներկայացուցիչների հետ քննարկվեցին ՎԿ-ի կողմից մետաղական հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ հրապարակվող տվյալները, մասնավորապես արտադրության, պաշարների, արտահանման և ներքին իրացման, զբաղվածության տվյալները: Ներկայացվեց, որ Հայաստանից արտահանվում են պղնձի, մոլիբդենի և ցինկի խտանյութեր, իսկ թանկարժեք մետաղների մասով ոսկու և արծաթի դորե համաձուլվածք: Ներկայացվեց, որ ԱՃԹՆ-ի զեկույցում արտահանման տվյալները խտանյութի և հանքաքարի միասին են ներկայացված, սակայն թվի անհամապատասխանության հավանականությունը քիչ է, քանի որ Հայաստանից հանքաքար չի արտահանվում: Թանկարժեք մետաղների (ոսկի, արծաթ և այլն) արտահանման և ներմուծման վերաբերյալ տվյալները հրապարակվում են, իսկ արտադրության վերաբերյալ տվյալները չեն հրապարակվում՝ համաձայն «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի: ՀՀ վիճակագրական կոմիտեի տրամադրած տվյալները ՀՀ տնտեսության մեջ հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժնի վերաբերյալ վերաբերում է ամբողջ հանքարդյունաբերության ոլորտին՝ չառանձնացնելով մետաղական հանքարդյունաբերությունը: ՎԿ-ի տվյալները հրապարակվում են armstat.am-ի տարեգրքերում՝ սոցիալ-տնտեսական վիճակագրության մասում, ինչպես նաև վիճակագրությունը հասանելի է համացանցում Տեղեկագիր armstatbank.am-ում: Կազմակերպությունների կողմից վիճակագրական տվյալները ներկայացվում են ՎԿ-ի կողմից սահմանված հաշվետվությունների ձևաչափերով:

Հանդիպում Պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչների հետ

Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ, ԲՇԽ-ի այլընտրանքային անդամ Արթուր Մանուկյանի և ՊԵԿ-ի ԱՃԹՆ-ի համար տվյալների տրամադրման պատասխանատուների հետ քննարկվեցին ՊԵԿ-ի կողմից ներկայացվող տվյալների, 2020 թվականից տրանսֆերային գնագոյացման կարգավորումների կիրառման, կազմակերպությունների կողմից վճարված հարկերի վճարների մասին տվյալների ապագա գրեզացման աստիճանի, ոլորտում ստվերային գործունեության մասին (informal activity) տեղեկատվության առկայության վերաբերյալ հարցեր: Նշվեց, որ առանձին հանքարդյունաբերության ոլորտում ստվերային գործունեության վերաբերյալ տվյալներ չկան, սակայն վերջին տարվա ընթացքում 50.000 աշխատող է գրանցվել, ինչը խոսում է ստվերի կրճատման մասին: Քննարկվեց հարկերի՝ միասնական հաշվին վճարման գործընթացը և, մասնավորապես, բնապահպանական հարկի մասով, վճարումները տարանջատելու հետ կապված խնդիրները: Քննարկվեցին նաև պետական մարմինների տվյալների աուդիտի իրականացման հետ կապված հարցեր:

Հանդիպում Արդարադատության նախարարության նախարարության ներկայացուցիչների հետ



Արդարադատության նախարարի տեղակալ, ԲՇԽ-ի անդամ Սրբուհի Գալյանի և նախարարության պատասխանատուների հետ հանդիպանք քննարկվեցին Հայաստանում իրական սեփականատերերի բացահայտմանն ուղղությամբ կատարված աշխատանքները, կատարված օրենսդրական փոփոխություններն ու համապատասխան ենթաօրենսդրական ակտերի մշակման գործընթացը:

Հանդիպում Ֆինանսների նախարարության ներկայացուցիչների հետ

Ֆինանսների նախարարի տեղակալ, ԲՇԽ-ի այլընտրանքային անդամ Արման Պողոսյանի և բյուջետային պլանավորման պատասխանատու մասնագետի հետ քննարկվեցին բնապահպանական նպատակային ծրագրերի հաստատման և ֆինանսավորման գործընթացի, հանքարդյունաբերության ոլորտից ստացված պետական եկամուտների բաշխման հետ կապված հարցեր:

5. Հանդիպում ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության և ՁԼՄ-ների ներկայացուցիչների հետ

Նոյեմբերի 6-ին վավերացնողների խումբը, առանց ԱՃԹՆ-ի քարտուղարության ուղեկցության, առանձին հանդիպումներ է ունեցել ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության անդամներ Հարություն Մովսիսիանի, Ինգա Զարաֆյանի, Սոնա Այվազյանի, Արթուր Համբարձումյանի, ԲՇԽ-ի նորընտիր անդամների հետ, ինչպես նաև ամբողջ խմբակցության հետ: Հանդիպում է տեղի ունեցել նաև քաղաքացիական հասարակության ԲՇԽ-ի անդամների առաջին ընտրությունները համակարգող, Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի տնօրեն Ալեն Ամիրխանյանի հետ, «Դիվելոփ Արմենիա» ընկերության ներկայացուցիչ Հայրապետ Էքմեքչյանի հետ, ՁԼՄ-ների ներկայացուցիչների՝ «Հետք» լրատվական ընկերության թղթակից Քրիստինե Աղալարյանի, «ՄիվիլՆեթի» լրագրող Մկրտիչ Կարապետյանի, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հիմնադիր նախագահ Շուշան Դոյդոյանի հետ:

6. Հանդիպում ԱՃԹՆ ԲՇԽ-ի հանքարդյունահանող ընկերությունների խմբակցության հետ

Նոյեմբերի 7-ին ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարության ուղեկցությամբ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչները առանձին հանդիպումներ են ունեցել ինչպես ԱՃԹՆ ԲՇԽ-ի հանքարդյունահանող ընկերությունների խմբակցության անդամներ Արմեն Ստեփանյանի, Վահե Վարդանյանի և Պերճ Խաչատրյանի հետ, այնպես էլ ամբողջ խմբակցության անդամների հետ՝ ներառյալ այլընտրանքային անդամներ Արամ Օսիկյանի և Անդրանիկ Աղաբալյանի հետ, ինչպես նաև Թեղուտ ՓԲԸ-ի ներկայացուցիչներ Միքայել Թովմասյանի և Լյուդվիգ Կարապետյանի հետ:

Վավերացնողների խումբը ԱՃԹՆ ԲՇԽ-ի հանքարդյունահանող ընկերությունների խմբակցության անդամների հետ հանդիպման ընթացքում քննարկվել է ընդերքօգտագործման ոլորտում առկա խնդիրները, ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի պատրաստման ընթացքում ընդերքօգտագործողների մասնակցությունը, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման



գործընթացի հետ կապված խնդիրները, մասնավորապես հողերի հասանելիության և ջրօգտագործման իրավունքի ձեռքբերման հետ կապված խնդիրները: Ներկայացվել է, որ այդ խնդիրները և մի շարք այլ հարցեր խորությամբ կուսումնասիրվեն ԱՃԹՆ-ի հաջորդ զեկույցում:

7. ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստ

Նոյեմբերի 7-ին կայացել է նաև ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի նիստ, որի ընթացքում ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին ԱՃԹՆ-ի վավերացման ընթացակարգը, ԱՃԹՆ-ի 2019 թվականի ստանդարտի նոր պահանջները և քննարկվեցին վավերացմանն առնչվող այլ հարցեր:

8. Հանդիպում Հայաստանի ԱՃԹՆ-ի միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ

Նոյեմբերի 8-ին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչները հանդիպումներ են ունեցել Հայաստանի ԱՃԹՆ-ի միջազգային գործընկեր կազմակերպությունների՝ Համաշխարհային բանկի, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և Երևանում Բրիտանական դեսպանատան ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում ներկայացվել են վերջին 3 տարիների ընթացքում միջազգային կազմակերպությունների ցուցաբերած աջակցությունն Հայաստանում ԱՃԹՆ-ի իրականացմանը, և կարևորվել է միջազգային գործընկերների հետ համագործակցությունը նախաձեռնության հաջող ներդրման հարցում:

9. ԲՇԽ-ի անդամների հետ քննարկված հիմնական հարցերը

ԲՇԽ-ի անդամների հետ հանդիպումներին քննարկվել են ԲՇԽ-ին իրենց անդամակցության ընթացակարգը, ԲՇԽ-ի անդամների քանակի որոշումը և դրա վերաբերյալ ԲՇԽ-ի անդամների համաձայնությունը, ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության և հանքարդյունահանող ընկերությունների խմբակցությունների անդամների ընտրությունները, խմբակցությունների կողմից անդամների ընտրության ընթացակարգերի առկայությունը և մարզային կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավվածությունը, խմբակցությունների համակարգումը, անդամների փոխարինումը, հաղորդակցությունը խմբակցության անդամների միջև, ԲՇԽ-ի որոշումների կայացման ընթացակարգը և խմբակցությունների միջև համագործակցությունը, ԱՃԹՆ-ի ազգային առաջնահերթությունների և աշխատանքային ծրագրերի կազմման ժամանակ բոլոր շահագրգիռ կողմերի կարծիքների ու առաջարկների արտացոլումը, քննարկումների անցկացումը, ԱՃԹՆ-ի հիմնական փաստաթղթերի՝ ԱՃԹՆ-ի զեկույցի, ԱՃԹՆ-ի տարեկան հաշվետվություն և այլ փաստաթղթերի շրջանառումը ԲՇԽ-ի անդամների միջև, դրանց շուրջ ներկայացված կարծիքները, առաջարկները, կազմակերպված աշխատանքային քննարկումները, ԱՃԹՆ-ի զեկույցի տվյալների օգտագործումը, զեկույցի տվյալներից օգտվելու փաստերի առկայությունը, աշխատանքային խմբերում ներգրավվածությունն ու կատարված աշխատանքները, հանքարդյունահանող ընկերությունների և պետական մարմինների ԱՃԹՆ-ին հաշվետվողականությունը, ԱՃԹՆ-ի զեկույցի համակողմանիությունը, տվյալների հուսալիությունն ու արդիականությունը, ԱՃԹՆ-



ի ազգային քարտուղարության հավասար հասանելիությունը ԲՇԽ-ի բոլոր խմբակցությունների
համար և Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման հետ կապված մի շարք այլ հարցեր: